ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2023 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Շապիկի պատկերում օգտագործված է սպանված տրանս կնոջ հիշատակին կազմակերպված մոմավառությունից լուսանկար: Այն առնչվում է էջ 20-ում ներկայացված դեպքին:

Տարեկան զեկույց. ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների վիճակը Հայաստանում 2023 թ. ընթացքում

Կազմել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն՝ Շվեդիայի ֆինանսական աջակցությամբ (մայիս, 2024 թ.):
Նյութի բովանդակության համար պատասխանատու են հեղինակները, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Շվեդիայի կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ԲԱԺԻՆ 1. ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ 8

Պետության պարտավորությունները մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ 9

2023թ-ի ընթացքում միջազգային կառույցների և մեխանիզմների կողմից պետությանը ներկայացված հանձնարարականների ընթացքը 10

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ 15

ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ 19

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ՁԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ 24

Իրավապահ մարմինների կողմից դրսևորված վատ վերաբերմունք 25

Ձինված ուժեր 29

Հոգեբուժական հաստատություն 30

Անչափահասների խնամքի կենտրոն 31

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ 32

Ընտանեկան բռնություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով 33

Ֆիզիկական ներգործություն անծանոթ անձանց կողմից 40

Կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու սպառնալիքներ 41

Մասնավոր կյանքին վերաբերող տեղեկատվության տարածում 44

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 47

ԱՄՓՈՓՈՒՄ 51

ԲԱԺԻՆ 2. ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ 52

Ատելության խոսքի կարգավորումները 53

Ներպետական իրավակարգավորումները 56

ԼԳԲՏ անձանց հիմնահարցերի շահարկումը և ատելության խոսքը 2023թ.-ի ընթացքում 57

Կառավարության թիրախավորումը ԼԳԲՏ անձանց հիմնահարցերի շահարկման միջոցով 57

Տրանսգենդեր անձի սպանությանը հաջորդած ատելության խոսքը 59

Նույնասեռական անձի ինքնասպանությանը հաջորդած ատելության խոսքը 63

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 68

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 70

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ[1]

Բիսեքսուալ (երկսեռական)	Անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների նկատմամբ:
Գեյ	Նույնասեռական տղամարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի տղամարդու հետ:
Գենդերային արտահայտում	Անձի իր իսկ (կամ այլոց կողմից ընկալվող) գենդերային ինքնության դրսևորումը:
Գենդերային ինքնություն	Անհատի իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ հաստատված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անհատի նույնականացմանը որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր:
Լեսբի	Նույնասեռական կին, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի կնոջ հետ:
Կոնվերսիոն պրակտիկա	Ցանկացած գործողություն է այլ մարդկանց կողմից, որոնք ուղղված են մարդու սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության փոփոխությանը՝ ոչ հետերոսեքսուալից դեպի հետերոսեքսուալ, ոչ հետերոնորմատիվ գենդերային ինքնությունից և արտահայտումից դեպքի հետերոնորմատիվ:
Հետերոսեքսուալ (տարասեռական)	Անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի այլ գենդերի անձանց հետ:
Հոմոֆոբիա	Վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն և/կամ ատելություն նույնասեռականության նկատմամբ:
Նույնասեռական	Անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն սեռի և/կամ գենդերի անձանց հետ:

1 Սույն եզրույթների հիմնական աղբյուրը՝ «ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի ուղեցույց օգնող մասնագետների համար», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2021 թ. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/02/specialists-guideline-2021.pdf

Սեռ	Անհատի կենսաբանական ստատուսն է որպես արական, իգական կամ ինտերսեքս: Որոշվում է այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են սեռական քրոմոսոմները, գոնադները, արտաքին ու ներքին սեռական օրգանները: Օգտագործվում է նաև որպես անձի ծննդյան պահին արձանագրված սեռ:
Սեռական կողմնորոշում	Անհատի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անհատի հետ:
Տրանս կամ տրանսգենդեր	Անձ, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից, և ներառում է տրանսսեքսուալ անցյալով կանանց և տղամարդկանց, տրանսսեքսուալ նույնականացող անձանց, տրանսգենդեր անձանց, հագուստափոխ անձանց և այլն: Հովանի եզրույթ է և ներառական է տրանսգենդեր, տրանսեքսուալ և այլ ոչ բինար գենդերային ինքնություն ունեցող անձանց համար:
Տրանսֆոբիա	Բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագծեր, որոնք հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության և գենդերային արտահայտումների վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զզվանքի, վախի և/կամ ատելության վրա:
Քվիր	Նախկինում դիտվել է որպես ոչ հետերոսեքսուալ կենսակերպ ունեցող անձանց հովանի եզրույթ, իսկ այնուհետև վերածվել հակահինքնության, որը բնութագրում է ցանկացած անձի այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք հակառակ են ընդունված նորմերին, լեգիտիմությանն ու դոմինանտությանը, և նպատակ են հետապնդում դիմադրելու, մերժելու, ապակառուցելու և այլաշրջելու նորմալությունն ու հետերոնորմատիվությունը որպես ճնշման համակարգեր:
ՍԿԳԻ	Սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն և/կամ գենդերային արտահայտում
ԼԳԲՏ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ԵԽ	Եվրախորհուրդ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, յուրաքանչյուր տարի ամփոփելով ԼԳԲՏ անձանց տրամադրված ծառայությունների ընթացքում փաստագրված իրավախախտումները, պատրաստում է զեկույց ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ: Զեկույցը, մասնավորապես, հիմնված է ինչպես շահառուների կողմից ներկայացված դիմումների միջոցով ստացված տվյալների, այնպես էլ կազմակերպության կողմից իրականացվող մշտադիտարկման արդյունքների վրա:

Այսպես, զեկույցի առաջին մասում ամփոփված են արձանագրված իրավախախտումները, որոնց առնչությամբ «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն տրամադրել է խորհրդատվություն և անհրաժեշտ աջակցություն: Դեպքերը առանձնացված են ըստ խախտված իրավունքների, այնուամենայնիվ, դրանք կարող են պարունակել մեկից ավելի իրավունքների խախտումներ: Ամեն բաժնում նախապես հակիրճ անդրադարձ է կատարվել տվյալ իրավիճակներում խախտված իրավունքի ընդհանուր նկարագրությանը՝ հիմնված միջազգային փաստաթղթերի և դրանց հիման վրա գործող մարմինների մեկնաբանությունների վրա: Այդպիսով, ներկայացված է իրավունքի մեկնաբանման և դրանք պաշտպանելու համար պետության պարտավորությունների, ձեռնարկվելիք անհրաժեշտ միջոցների շրջանակը, որպեսզի պարզ լինի արարքի որակման տրամաբանությունը:

Այսպես, 2023 թ.-ին ԼԳԲՏ անձինք շարունակել են առերեսվել խտրականության և բռնության կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ՝ ընտանիքը, զինված ուժերը, իրավապահ մարմինները, խնամքի հաստատությունները, կրթական հաստատությունները և հանրային վայրերը: Ընդհանուր առմամբ Փինք իրավապաշտպան ՀԿ-ի փաստաբաններին և իրավաբաններին տարվա ընթացքում դիմել և խորհրդատվություն կամ տարբեր տեսակի իրավական աջակցություն են ստացել 260 անձ: Արձանագրված իրավախախտումների քանակը նախորդ տարիների համեմատ մտահոգիչ է: Մասնավորապես, արձանագրվել է 51 դեպք, որոնցից 49-ի պարագայում առկա են անհատ տուժողներ, իսկ 2-ը ԼԳԲՏ համայնքի դեմ ուղղված ատելության խոսքի ծանր՝ քրեական պատասխանատվություն ենթադրող դրսևորման խմբավորված դեպքեր են, որոնցում իրավախախտները բազմաթիվ են, սակայն խոսքերը վերաբերում են մեկ համատեքստի:

Արձանագրված դեպքերից 22-ը ընտանեկան բռնության դեպքեր են, որոնցից 5-ի պարագայում են տուժողները ցանկացել բողոք ներկայացնել իրավապահ մարմիններին, սակայն, նրանցից 4-ը հետագայում հրաժարվել են բողոքներից կամ ի սկզբանե հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուց, իսկ մեկը քննչական մարմնի կողմից փակվել է՝ հիմնավորմամբ, որ ծնողի նպատակն է եղել «հիվանդագին» երևույթ բուժելը:

Դեպքերից 4-ը ֆիզիկական բռնության դեպքեր են, որոնցից 2-ի պարագայում տուժողը վախեցել է դիմել իրավապահ մարմիններին, իսկ մյուս 2-ի պարագայում հարուցվել է քրեական վարույթ, սակայն ընթացքը դեռևս հայտնի չէ:

Կյանքին կամ առողջությանն ուղղված սպառնալիքի 6 դեպք է արձանագրվել, որոնցից միայն 2-ի պարագայում են տուժողները դիմել իրավապահ մարմիններին: Նրանցից մեկը հետագայում հրաժարվել է բողոքից, իսկ երկրորդ գործի քննությունը դեռևս ընթացքի մեջ է:

Մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկատվության տարածման 2 դեպք է

արձանագրվել, որոնցից 2-ի պարագայում էլ տուժողները չեն ցանկացել դիմել իրավապահ մարմիններին:

1 սպանության և 1 ինքնասպանության դեպք է արձանագրվել, որոնցից երկուսով էլ հարուցվել են քրեական գործեր, սակայն քննությունը դեռևս ընթացքի մեջ է:

Իրավապահ մարմինների կողմից վատ վերաբերմունքի 5 դեպք է արձանագրվել, որոնցից 3-ի առթիվ է ներկայացվել բողոք և հարուցվել է քրեական գործ: Տուժողներից մեկը հետագայում հրաժարվել է բողոքից:

Բռնության 1 դեպք է արձանագրվել զինծառայության ընթացքում, 1 դեպք արձանագրվել է հոգեբուժական հաստատությունում և ևս 1 դեպք անչափահասների խնամքի կենտրոնում: Երեք դեպքերում էլ տուժողները հրաժարվել են իրավապահ մարմիններին բողոք ներկայացնելուց:

Կրթական համակարգում իրավախախտումների 5 դեպք է արձանագրվել, որոնցից ոչ մեկի պարագայում տուժողը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին:

Արձանագրված դեպքերից ընդամենը 12-ի պարագայում են տուժողները դիմել իրավապահ մարմիններին, իսկ ևս 2-ը սպանության և ինքնասպանության դեպքերն են, որոնցով քրեական վարույթ նախաձեռնելը քննչական մարմնի պարտավորությունն է: Տուժողների անվստահությունը իրավապահ մարմինների նկատմամբ, ինչպես նախորդ տարիներին, կապված է մի շարք հանգամանքների հետ, ինչպիսիք են՝

- Իրավակիրառ մարմինների կողմից վատ վերաբերմունքը, ծաղրը, բռնության արդարացումը,
- Տուժողների անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների տարածումը գործը քննող մարմինների կողմից, ներառյալ՝ ընտանիքների շրջանում,
- Գործերի քննության անարդյունավետությունը, անպատժելիությունը,
- Բողոքի ներկայացման պատճառով հետագա բռնությունների ենթարկվելու վախը:

Զեկույցի երկրորդ մասը վերաբերում է ատելության խոսքին: Դրանում հակիրճ նկարագրված է ատելության խոսքի սահմանման և նույնականացման չափորոշիչները, իրավակարգավորումների շրջանակը ինչպես միջազգային փաստաթղթերի, այնպես էլ՝ ներպետական իրավական համակարգի տեսանկյունից: Բացի այդ, ներկայացված են նաև ատելության խոսքի տարբեր աստիճանի վտանգավորության դեպքեր, որոնց մի մասը ՀՀ քրեական օրենսդրության համաձայն պատժելի է, մյուս մասը՝ ոչ:

Արձանագրվել են նաև բռնության կոչերի, բռնությունների արդարացման և քարոզի բազմաթիվ դեպքեր, որոնցից ոչ մեկը, սակայն, իրավապահ մարմինների ուշադրությանը չի արժանացել:

Ատելության խոսքի դրսևորումները ներկայացնելիս և մեջբերելիս ընտրվել է ատելություն և անհանդուրժողականություն՝ ներառյալ բռնության կոչեր կամ բռնության արդարացում պարունակող խոսքի ընդամենը մի հատվածը: Ներկայացվել են նույնաբովանդակ մեկնաբանությունների օրինակներ: Չեն ընդգրկվել նաև այն արտահայտությունները, որոնցում եղել են հայհոյանքներ:

Զեկույցի երկրորդ բաժնում ատելության խոսքի օրինակների մեջբերման համար հայցում ենք ընթերցողի ներողամտությունը և տեղեկացնում, որ դրանք կարող են առաջացնել հոգեբանական ճնշվածություն և ընկճում:

ԲԱԺԻՆ 1.
ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Պետության պարտավորությունները մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ

Մարդու իրավունքները համընդհանուր են, անքակտելի և անփոխանցելի: Յուրաքանչյուր անձ իր ծննդյան պահից մինչև մահ օժտված է մարդու իրավունքներով և ազատություններով՝ անկախ որևէ անձնական կամ սոցիալական հանգամանքից: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես իրավական պետություն, պետք է ապահովի իր տարածքում գտնվող բոլոր անձանց իրավունքների անխափան իրացումը: Միևնույն ժամանակ, պետության կողմից մարդու իրավունքների իրացման ապահովումը ենթադրում է ոչ միայն պետական օղակների գործունեության վերահսկում, դրանց կողմից մարդու իրավունքների խախտումների կանխարգելում, այլ նաև պատշաճ արձագանք երրորդ անձանց կողմից դրսևորվող ոտնձգություններին: Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային փաստաթղթերը, դրանց հիման վրա գործող դատական կամ արտադատական ատյաններն ու այլ մեխանիզմները իրենց պրակտիկայում զարգացրել են այն միջոցառումները, որոնք պետության կողմից պետք է ձեռնարկվեն մարդու իրավունքների իրացումն ապահովելու համար: Այդ միջոցառումները ենթադրում են մի կողմից նեգատիվ պարտավորություններ, երբ պետությունը պետք է ձեռնպահ մնա մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ որևէ ոտնձգությունից, և մյուս կողմից՝ պոզիտիվ պարտավորություններ, երբ պետությունը պետք է ձեռնարկի մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլեր: Այսպիսով՝

Պետությունը պարտավոր է հարգել մարդու իրավունքները, այսինքն՝ զերծ մնալ մարդու իրավունքների ոտնահարումներից (պետության նեգատիվ պարտականությունը): Անհատի իրավունքների խախտումներ չպետք է թույլ տրվեն պետական մարմինների, ներառյալ՝ իրավապահ մարմինների աշխատակիցների և պետական լիազորությամբ օժտված այլ անձանց կողմից:[2]

Պետությունն ունի նաև պոզիտիվ պարտավորություն՝ **պաշտպանելու անհատի իրավունքները երրորդ անձանց խախտումներից:** Այս պարտավորության ներքո պետությունը պետք է կանխի անհատի իրավունքների խախտումները տարբեր ֆիզիկական անձանց, կազմակերպությունների կողմից: Սա իրենից ենթադրում է նաև գործուն իրավական մեխանիզմների ստեղծում իրավունքների խախտումները արդյունավետ քննելու, խախտված իրավունքները վերականգնելու, խախտմամբ պատճառված վնասները հատուցելու ուղղությամբ:

Պետության հաջորդ պոզիտիվ պարտավորությունը **իրավունքների իրացման միջավայր ստեղծելն է:** Պետական իշխանությունը պետք է ձևավորի այնպիսի իրավական մեխանիզմներ և հասարակական միջավայր, որտեղ անձինք կկարողանան անխոչընդոտ իրացնել իրենց հիմնարար ազատությունները:

ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության առաջնային երաշխավորը երկրի բարձրագույն օրենքն է՝ ՀՀ Սահմանադրությունը, որը ամրագրում է, որ մարդու իրավունքները գործում են անմիջականորեն:[3] ՀՀ-ում մարդու իրավունքների գերակայությունը միաժամանակ ճանաչված է միջազգային պայմանագրերով և դաշնագրերով, որոնք վավերացվել են պետության կողմից: Այդպիսի

2 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 3. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723
3 Նույն տեղում, հոդված 3, կետ 3

միջազգային փաստաթղթերը ավելի բարձր իրավաբանական ուժ ունեն, քան երկրում գործող օրենսգրքերը, օրենքները, այլ նորմատիվ իրավական ակտերը:[4]

Հայաստանի Հանրապետությունը, անդամակցելով միջազգային կազմակերպություններին, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպությունը և Եվրոպայի խորհուրդը, ինչպես նաև վավերացնելով այդ կազմակերպությունների շրջանակներում մշակված փաստաթղթերը, ստանձնել է հստակ պարտավորություններ, որոնց կատարման ուղղությամբ պարբերաբար հաշվետու է համապատասխան մարմինների առաջ: Մասնավորապես, ՄԱԿ-ի շրջանակներում գործում են մարդու իրավունքների պայմանագրային մարմինները՝ 10 կոմիտեները, որոնք ձևավորվել են տարբեր իրավունքների վերաբերյալ դաշնագրերի հիման վրա: Կոմիտեները դիտարկում են ոչ միայն ներկայացվող զեկույցները, այլ նաև քննում են անհատական դիմումներ մասնավոր անձանցից՝ իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ: ՄԱԿ-ի շրջանակներում են գործում նաև հատուկ ընթացակարգերը և անկախ փորձագետները, որոնք իրենց մանդատի շրջանակներում կարող են տեղեկատվություն պահանջել պետությունից մարդու իրավունքների իրավիճակի և ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ: Պետության կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունավետության կամ ձախողումների վերաբերյալ զեկույցներ այս մարմիններին կարող են ներկայացվել նաև հասարակական կազմակերպությունների կողմից: Ներկայացված տեղեկատվության և դրան հաջորդող քննարկումների հիման վրա պետությանն են ներկայացվում առաջարկներ՝ առկա խնդիրների վերացման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի շուրջ:

2023 թ.-ի ընթացքում միջազգային կառույցների և մեխանիզմների կողմից պետությանը ներկայացված հանձնարարականների ընթացքը

2023 թ.-ի ընթացքում ևս տարաբնույթ զեկույցներ են ներկայացվել տարբեր միջազգային կառույցների և կիրառվել են տարբեր մեխանիզմներ՝ հասնելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իր ստանձնած պարտավորությունների կատարումը ձախողելու և դրա պատճառների հասցեավորմանը:

Մասնավորապես, *ՄԱԿ-ի Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով բռնության և խտրականության հարցերով անկախ փորձագետին* է ներկայացվել զեկույց առ այն, թե ինչպիսի ազդեցություն է ունենում կրոնը ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների պաշտպանության վրա: Զեկույցի հիմք է ծառայել վերջին տարիների ընթացքում փաստագրված տեղեկատվությունը ԼԳԲՏ անձանց նկատմամբ կիրառվող կոնվերսիոն պրակտիկաների վերաբերյալ, ինչը ենթադրում է նաև կրոնական կազմակերպությունների ներգրավում տարբեր ծիսակարգերի միջոցով ԼԳԲՏ անձանց կողմնորոշումը փոխելու նպատակով: Ամփոփելով տվյալները՝ անկախ փորձագետը 2023 թ.-ի հունիսին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին է ներկայացրել զեկույց՝ Կրոնի և դավանանքի ազատությունը և սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով

4 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 5, կետ 3

խտրականությունից և բռնությունից զերծ լինելը: Վերլուծելով այս իրավունքների՝ միջազգային իրավական ակտերով ճանաչված և մեկնաբանված սկզբունքներն ու հիմնական էությունը՝ փորձագետը հանգել է այն եզրակացության, որ կրոնի և դավանանքի ազատությունը լիարժեք կերպով համադրելի է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունից և բռնությունից զերծ լինելու իրավունքի հետ, քանի որ առաջինը սահմանափակման ենթակա իրավունք է, և մեկնաբանվում է շատ լայն՝ որպես որևէ կրոնի հետևելու կամ չհետևելու, որևէ դավանանք ունենալու կամ չունենալու իրավունք, ինչը չի կարող մեկնաբանվել այնպես, որ կհանգեցնի այլոց հիմնարար իրավունքների խախտումների: Միևնույն ժամանակ որոշ պատմական իրադարձությունների արդյունքում, ինչպիսիք են՝ օրինակ գաղութացումը կամ իրավական համակարգում կրոնական օրենքների պարտադրաբար ընդունումը, շատ պետություններում ԼԳԲՏ անձանց իրավունքները սահմանափակվում են, ընդհուպ մինչև՝ նույնասեռ հարաբերությունների համար մահապատժի սահմանումը՝ ազգային և կրոնական արժեքների պահպանման հիմնավորմամբ: Հայաստանում ևս, եկեղեցին պարբերաբար միջամտում է պետության կողմից ԼԳԲՏ անձանց իրավունքների ապահովման նպատակով որոշ օրենսդրական նախաձեռնության քննարկմանը՝ բռնության և խտրականության դեմ իրավակարգավորումներին տալով ծայրահեղ գնահատականներ՝ որակելով դրանք որպես հայ ազգային արժեքների, ընտանիքի, եկեղեցու քանդման փորձ: Ինչպես նկարագրված է նախորդ տարիների զեկույցներում, եկեղեցու ներկայացուցիչները անգամ բողոքի միջոցառումներ, հավաքներ և հարցազրույցներ են կազմակերպել՝ դեմ դուրս գալով ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված որևէ միջոցառման կամ քայլի: Այսպիսով, կրոնական կազմակերպությունները Հայաստանում ոչ միայն կոնվերսիոն պրակտիկաների միջոցով փորձում են անհատ անձանց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը փոխել՝ հասցնելով նրանց ծանր հոգեբանական վնաս, այլ նաև հակասահմանադրական կերպով միջամտում են պետության քաղաքական իշխանության գործունեությանը՝ փաստացի ազդեցություն ունենալով մարդու իրավունքների լիարժեք պաշտպանությանն ուղղված միջոցառումների վրա:

Հաշվի առնելով այսպիսի իրավիճակների տարածվածությունն աշխարհում՝ անկախ փորձագետն առաջարկել է զերծ մնալ, կամ առկայության դեպքում վերացնել որևէ իրավական ակտ կամ քաղաքականություն, որը չի համապատասխանում մարդու իրավունքների միջազգային ստանդարտներին, կամ, հանդիսանալով կրոնական կազմակերպությունների գործունեությանը վերաբերող ակտ, կարող է հանգեցնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության: Բացի այդ, առաջարկվել է խուսափել կրոնական նարատիվներով պայմանավորված որևէ խտրականության կամ բռնության դեպք արդարացնելուց, ինչպես նաև դատապարտել կրոնական առաջնորդների և նրանց ենթակաների կողմից խտրականության և բռնության հրահրումը ԼԳԲՏ անձանց և այլ գենդերային բազմազանության նկատմամբ: Ներկայացվել են նաև մի շարք առաջարկներ՝ ուղղված իրազեկվածության բարձրացմանը, պատմական ու մշակութային իրողությունների ու բազմազանության ընկալմանը:

Չնայած նրան, որ Հայաստանյան իրավական համակարգում չկա կրոնական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող այնպիսի օրենսդրություն, որի կիրառումը կամ մեկնաբանությունը կարող է հանգեցնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության, այնուամենայնիվ, պետությունը խուսա-

փում է դատապարտել եկեղեցու հանրային գործունեությունը՝ ուղղված ԼԳԲՏ անձանց և շարժման դեմ, ինչը մի կողմից միջամտություն է պետության գործերին, մյուս կողմից հասարակության տարբեր խմբերի միջև առաջացնում է պառակտում, ատելություն և անհանդուրժողականություն:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (այսուհետ՝ ԵԱՀԿ) Մարդու իրավունքների և ժողովրդավարական ինստիտուտների գրասենյակը (այսուհետ՝ ԺՀՄԻԳ) ամեն տարի հրապարակում է անդամ պետությունների, ներառյալ՝ քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված ատելության հիմքով հանցագործությունների տվյալներ: Զեկույցը, մասնավորապես, արտացոլում է խոցելի խմբերի իրավիճակը՝ անձնական կամ սոցիալական որևէ հատկանիշի նկատմամբ ատելության և կողմնակալության շարժառիթով կատարված քրեական իրավախախտումների վերլուծության հիման վրա:

2023 թ.-ի նոյեմբերի 16-ին հրապարակված տվյալների համաձայն՝ քաղաքացիական հասարակության կողմից փաստագրված դեպքերի ընդհանուր քանակը կազմում է 53, որից 50-ը ԼԳԲՏ անձանց դեմ ուղղված հանցագործություններն են՝ նրանց սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության և/կամ արտահայտման պատճառով (այսուհետ՝ ՍԿԳԻ):[5]

Անդրադառնալով երկրում վերջին օրենսդրական կարգավորումներին՝ ԺՀՄԻԳ-ը, այնուամենայնիվ, նշել է, որ իրավակիրառ մարմինները չեն արձանագրում հանցագործի կողմնակալ շարժառիթները, ինչը նշանակում է, որ քննությունը չի կարող լինել պատշաճ և բազմակողմանի: ԺՀՄԻԳ-ը նաև շեշտել է քաղաքացիական հասարակության և պետության միջև համագործակցության կարևորությունն ու կարիքը ատելության հիմքով հանցագործությունների՝ ներառյալ տուժողների աջակցության մեխանիզմների կիրառման առումով: Հարկ է նշել, որ երկրում չկան ատելության հիմքով հանցագործություններից տուժողների աջակցության մեխանիզմներ կամ որևէ աջակցություն կամ զգայուն վերաբերմունք ցուցաբերելու պրակտիկա:

ԺՀՄԻԳ-ը ևս մեկ անգամ պետությանը հիշեցնում է Նախարարական խորհրդի 9/09 և 13/06 որոշումների հիման վրա ստանձնած պարտավորությունները, ըստ որոնց, պետք է ապահովի ատելության հիմքով հանցագործությունների պատշաճ քննություն՝ ապահովելու ատելության շարժառիթի գնահատումը, ինչպես նաև ակտիվ և ներառական մոտեցում ցուցաբերի քաղաքացիական հասարակության նկատմամբ՝ որպես կարևոր դերակատար:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն պետությանը տվել է երկու տարի ժամանակ՝ իրականացնելու համար Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով վճռից բխող պարտավորությունները:

2022 թ.-ի մայիսի 17-ին հրապարակվել էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը 2012 թ.-ին «ԴԻ Այ Ուայ» ակումբի պայթեցման վերաբերյալ Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով:[6] ՄԻԵԴ-ը եզրակացրել էր, որ Հայաս-

5 ԵԱՀԿ ԺՀՄԻԳ, զեկույց ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ, 2023 թ. https://hatecrime.osce.org/armenia?year=2022
6 ՄԻԵԴ վճիռ. Օգանեզովան ընդդեմ Հայաստանի. https://hudoc.echr.coe.int/eng?i=001-219523

տանի կողմից խախտվել է դիմումատուի՝ խոշտանգումներից, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու և խտրականությունից զերծ լինելու իրավունքները՝ մի կողմից օրենսդրական բացերի, մյուս կողմից, գործերի քննությունների անարդյունավետության պատճառով:

Հայաստանի Հանրապետությունն այժմ գտնվում է Դատարանի վճռի կատարման փուլում, որի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն է: Վճռի կատարումից բխող անհրաժեշտ գործողությունների առաջարկները ներկայացվել էին ոչ միայն պետական մարմիններին, այլ նաև Նախարարների կոմիտեին՝ արդյունավետ դարձնելու համար վճռի կատարման գործընթացի նկատմամբ վերահսկողությունը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն 06.06.2023 թ.-ին քննել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման ընթացքը, ձեռնարկված միջոցների արդյունավետությունը:[7]

Կոմիտեն պետությանը պարտավորեցրել է տեղեկություն տրամադրել քննչական կոմիտեում վերաբացված գործի ընթացքի վերաբերյալ:

Որպես ընդհանուր միջոցներ, պետությունը պարտավորվում է՝

- Առանց հետաձգման վերջացնել իրավահավասարության ապահովման օրենքի նախագծի մշակման գործընթացը՝ հաշվի առնելով Դատարանի դիտարկումներն ու միջազգային ստանդարտները և ընդունել այն,
- Տեղեկատվություն տրամադրել նոր Քրեական օրենսգրքի դրույթների՝ սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների քննության պարագայում արդյունավետ կիրառման պրակտիկայի վերաբերյալ, ներկայացնելով նաև արձանագրված դեպքերի, դատաքննությունների և դրանց արդյունքի վերաբերյալ վիճակագրական տվյալներ,
- Իրականացնել վերապատրաստումներ իրավակիրառ և քրեական արդարադատություն իրականացնող մարմինների համար ատելության հիմքով հանցագործությունների և տուժողների կարիքների վերաբերյալ, ինչպես նաև շարունակել խտրականության և նախապաշարմունքի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված հստակ գործողությունները:

Կոմիտեն նաև ողջունել է քրեական նոր օրենսգրքով նախատեսված կարգավորումները, որոնք հնարավորություն են տալիս սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունները դիտարկել որպես ծանրացնող հանգամանքներում կատարված հանցագործություն և իրականացնել արդյունավետ քննություն, ինչպես նաև պետության պատրաստակամությունը ներդնելու Եվրոպայի Խորհրդի ուղենիշները ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի քաղաքականությունը և խտրականության և ատելության խոսքի քննության վերաբերյալ ուղեցույցը մշակելիս:

7 06.06.2023, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի որոշում Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով վճռի կատարման վերաբերյալ.
https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?objectid=0900001680ab57e5

2023 թ.-ի հունիսին հրապարակվեց Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովի հերթական զեկույցը Հայաստանում առկա իրավիճակի վերաբերյալ, որտեղ ամփոփված է ատելության հիմքով հանցագործությունների դրությունը՝ համաձայն մշտադիտարկման վեցերորդ փուլի արդյունքների:[8]

Հանձնաժողովը, մասնավորապես, կրկին անդրադարձել է Հայաստանում սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված խտրականությանը, ատելության հիմքով հանցագործություններին և ատելության խոսքին՝ շեշտելով ինչպես օրենսդրական կարգավորումների ընդունման, այնպես էլ գործնականում դրանց արդյունավետ կիրառման կարիքը: Հանձնաժողովը անդրադարձել է նաև խտրականության դեմ օրենքի անհրաժեշտությանը՝ նշելով հավասարության մարմնի ձևավորման կամ Օմբուդսմենին համապատասխան մանդատով և ռեսուրսներով օժտելու անհրաժեշտությունը: Որպես խտրականության դեմ պայքարի միջոցներ՝ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) առաջարկել է նաև կրթական և իրազեկման աշխատանքներ իրականացնել տարբեր ոլորտներում, ինչպիսիք են՝ դպրոցը, միգրացիոն ծառայությունը, իրավակիրառ մարմինները և հասարակությունն առհասարակ: Ատելության հիմքով հանցագործությունների քննությունն առավել արդյունավետ դարձնելու համար կարևորվել է նաև դրանց արձանագրումն ու վիճակագրության վարումը: ՌԱԵՀ-ը նաև անդրադարձել է մեդիա հարթակում ատելության խոսքի դեմ պայքարի անհրաժեշտությանը և դրա օրենսդրական կարգավորումների արդյունավետությանը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ 2023 թ.-ի ընթացքում Հայաստանի Հանրապետության նկատմամբ միջազգային տարբեր մեխանիզմներով դրվել են ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը բարելավելու էլ ավելի հստակ պարտավորություններ՝ թե օրենսդրական, թե գործնական մակարդակներում: Ստորև ներկայացված իրավիճակի վերլուծության արդյունքում կփորձենք գնահատել, թե որքանով է պետությունը կամք ցուցաբերել հասցեավորելու սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության և բռնության խնդիրը 2023 թ.-ի ընթացքում:

8 Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնախմբի զեկույց, 2023 թ. https://www.coe.int/en/web/european-commission-against-racism-and-intolerance/armenia

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 29[9]

Խտրականությունից զերծ լինելու իրավունքը մարդու բացարձակ իրավունք է և ենթակա չէ որևէ սահմանափակման: Այն ճանաչված է ինչպես մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային փաստաթղթերով, այնպես էլ ՀՀ Սահմանադրությամբ:

Մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր գլխավոր փաստաթղթերը ևս սահմանում են մարդու իրավունքների՝ առանց խտրականության իրացվելու հնարավորությունը: Դրանով ընդգծվում է անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքի համամարդկային և արժեքավոր էությունը:[10]

Միջազգային իրավունքում խտրականությունը բնութագրվում է որպես ցանկացած բացառում, տարբերակում կամ նախապատվություն, որը հիմնված է կոնկրետ հանգամանքի կամ հատկանիշի վրա, և որը նպատակ ունի սահմանափակել անձի իրավունքների և ազատությունների ճանաչումը կամ իրացումը կամ հանգեցնում է նման սահմանափակումների:[11] Այլ կերպ ասած՝ խտրականությունը նույնանման իրավիճակում գտնվող անհատների նկատմամբ տարբերակված վերաբերմունքն է առանց որևէ ողջամիտ կամ օբյեկտիվ հիմքի:[12]

Միջազգային իրավունքում որպես խտրականության տեսակ առանձնացվում է ուղղակի խտրականությունը, երբ անհատը տարբերակված վերաբերմունքի է արժանանում նման իրավիճակում գտնվող այլ անձանց համեմատությամբ, ինչի պատճառը տվյալ անհատի որևէ անձնական, սոցիալական կամ այլ բնույթի հատկանիշն է:[13] Անուղղակի խտրականությունը առերևույթ չեզոք դրույթ է, չափանիշ կամ գործելակերպ, որը կարող է որևէ խմբի անձանց համար որոշա-

9 ՀՀ Սահմանադրություն https://www.primeminister.am/hy/constitution/
10 ՄԱԿ-ի կանոնադրություն, Հոդված 1 (3) և 55, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 7. ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիր, հոդված 2, 4 (1) և հոդված 26, ՄԱԿ-ի Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների մասին դաշնագիր, հոդված 2, Երեխաների իրավունքների պաշտպանության կոնվենցիա, հոդված 2, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիա, հոդված 14, և դրան կից 12-րդ արձանագրություն.
11 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 18 ընդհանուր մեկնաբանություն, § 7. https://www.refworld.org/docid/453883fa8.html
12 Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Բելգիայում կրթության մեջ լեզուների օգտագործման մասին օրենքի որոշ ասպեկտների վերաբերյալ գործով 23.07.1968 թ.-ի վճիռ,. Վիլիսն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 36042/97, § 48, ՄԻԵԴ 2002-IV, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով վճիռ, թիվ. 40094/05, 02/01/2013.
13 Հակախտրականությունը միջազգային իրավունքում. 20112-ի ձեռնարկ, պ. 17-18. https://www.interights.org/handbook/index.html

կի անշահավետ պայմաններ ստեղծել այլոց համեմատ:[14] Մեկ այլ տեսակ է ասոցացված խտրականությունը, երբ խտրական վերաբերմունքի է արժանանում այն անձը, ով չնայած չունի խտրականությունից պաշտպանվող հատկանիշը, սակայն կապված է այդ հատկանիշը կրող անձի հետ,[15] օրինակ՝ նրա ամուսինը, մայրը, հայրը և այլոք:

Խտրականությունը պայմանավորվում է անձի հատկանիշով, որը կոչվում է խտրականության հիմք: Ո՛չ ՀՀ Սահմանադրությունը և ներպետական օրենքները, ո՛չ միջազգային պայմանագրերի մեծ մասը ուղղակիորեն չեն նախատեսում ՍԿԳԻ-ն խտրականությունից պաշտպանվող հիմքերի մեջ: Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրության մեջ խտրականությունից պաշտպանվող հիմքերի ցանկը բաց է. իրավական ակտերը չեն բացառում ուղղակիորեն նախատեսված հիմքերից զատ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ, որոնք կարող են տարբերակված վերաբերմունքի թիրախ հանդիսանալ: Սա նշանակում է, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը կարող են և պետք է դիտարկվեն որպես անձնական և սոցիալական այլ բնույթի հանգամանքներ և հավասարաչափ պաշտպանվեն խտրականությունից, ինչպես սեռը, ռասան, հաշմանդամությունը: Մարդու իրավունքների պայմանագրերի վրա գործող մարմինները բազմիցս վերահաստատել են այս պնդումը՝ սահմանելով, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ամբողջությամբ տեղավորվում են խտրականությունից պաշտպանվող հատկանիշների շարքում:[16]

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է հարգի անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքը: Այն պետք է պաշտպանի ԼԳԲՏ անձանց պետական մարմինների ներկայացուցիչների՝ կառավարության, ոստիկանության, քննչական մարմինների աշխատակիցների ոտնձգություններից: Հավասարության ապահովումը միայն պետական մարմինների կողմից խախտումներից զերծ մնալը չէ, ուստի պետությունը պետք է ստեղծի այնպիսի միջավայր, որ մասնավոր անձանց կողմից ևս թույլ չտրվեն ԼԳԲՏ անհատների իրավունքների ոտնահարումներ՝ պայմանավորված վերջիններիս սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ: Դեռ ավելին, նման ոտնահարումների դեպքերը պետք է պատշաճ քննության արժանանան, իսկ ոտնձգողները՝ պատժվեն:

Միևնույն ժամանակ, չնայած նրան, որ խտրականության արգելքի վերաբերյալ դրույթներ են պարունակվում մի շարք ոլորտային օրենսդրական ակտերում,[17] Հայաստանի Հանրապետությունում դեռևս չկա առանձին օրենք, որը կսահմանի խտրականության հասկացությունը, դրա տեսակները, արդյունավետ մեխանիզմ կնախատեսի խտրականության նկատմամբ առավել խոցելի խմբերի պաշտպա-

14 ԵՄ Եվրոպական խորհրդի հրաման 2000/43/EC, 29.06.2000, Հավասար վերաբերմունքի սկզբունքի կիրառումը անձանց միջև՝ անկախ ռասայական կամ էթնիկ ծագումից, հոդված 2(2), կետ (b). https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32000L0043

15 Մոլա Սալին ընդդեմ Հունաստանի, ՄԻԵԴ Մեծ պալատ, 2018 թ.; ՄԻԵԴ վճիռներ Գուբերնիան ընդդեմ Խորվաթիայի, 2016 թ. § 78; Սկորյանեցն ընդդեմ Խորվաթիայի, 2017 թ. § 55; Վելերն ընդդեմ Հոնգարիայի, 2009 թ. § 37.

16 ՄԻԵԴ վճիռներ. Իդեմտոբան և այլոք ընդդեմ Վրաստանի, 2015 թ. § 96; Սալգիրո դը Սիլվա Մուտան ընդդեմ Պորտուգալիսայի, 1999 թ. § 28; Ֆղետեն ընդդեմ Ֆրանսիայի, 2002 թ. § 32; Վեջելանդը և այլոք ընդդեմ Շվեդիայի, 2012 թ. § 55; Խոշտանգումների դեմ կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն թիվ 2. Հոդված 2-ի կիրառումը անդամ պետությունների կողմից, § 21, 22. https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/catcgc2-general-comment-no-2-2007-implementation

17 Խտրականության առանձին օրենքի անհրաժեշտության վերաբերյալ հետազոտություն. Վահե Գրիգորյան, Արա Ղազարյան. https://epfarmenia.am/sites/default/files/Document/Is_it_expedient_to_adopt_separate_antidiscrimination_law_research_2015_Arm.pdf

նության համար: Մասնավորապես, արդյունավետ կիրառման հնարավորություն ընձեռող օրենքը նախ և առաջ պետք է՝

- նախատեսի խտրականությունից պաշտպանվող հատկանիշների շարքում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության ներառումը՝ հաշվի առնելով անձանց այդ հատկանիշներով պայմանավորված իրավախախտումների ծավալը,
- նախատեսի խտրականության տեսակների համապարփակ ցանկը,
- նախատեսի հանրային շահի պաշտպանության հայցով դատարան դիմելու՝ հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը՝ իրենց շահառուների իրավունքների պաշտպանությունն արդյունավետորեն իրականացնելու նպատակով,
- նախատեսի անկախ հավասարության մարմնի ձևավորման կարգն ու գործառույթները՝ Օմբուդսմենի կազմից դուրս,
- նախատեսի մասնավոր մարմինների կողմից դրսևորված խտրականությունից պաշտպանության հնարավորություն,
- նախատեսի խտրականության դեպքերի քննության ընթացքում ապացուցման բեռի բաշխման առանձնահատկություն, այն է՝ ենթադրյալ իրավախախտին պարտավորեցնի ապացուցել խտրական մոտիվի բացակայությունը, ենթադրյալ խտրականության զոհի վրա դնելով միայն առաջին հայացքից խտրականության հիմքերի ներկայացումը:

Հարկ է նշել, որ խտրականության դեմ օրենքի նախագիծը շրջանառության մեջ է դրվել դեռևս 2016 թ.-ից, անցել է բազում մշակումներ թե՛ Արդարադատության նախարարության, թե՛ քաղաքացիական հասարակության կողմից, սակայն այդպես էլ չի ուղարկվել կառավարություն: Այնուամենայնիվ, նախագծի վերջնական տարբերակը չի արժանացել քաղաքացիական հասարակության հավանությանը՝ չհամապատասխանելով վերոնշյալ բոլոր դրույթներին:

2023 թ.-ին կրկին օրակարգ բերվեց «Իրավահավասարության ապահովման մասին օրենքի» (որպես խտրականության իրավակարգավորումներ նախատեսող առանձին օրենք) նախագիծը՝ մոտ երկու տարի ընդմիջումից հետո: Չնայած նրան, որ օրենքի կարգավորման շրջանակին և դրույթներին ուղղված պահանջները և արդյունավետության չափորոշիչները սահմանվել են տարբեր միջազգային մարմինների կողմից, և այն բազմիցս նախկինում քննարկվել էր քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, Արդարադատության նախարարության կողմից որոշում կայացվեց նախագիծն ուղարկել Եվրոպայի խորհրդին՝ փորձագիտական կարծիք ստանալու նպատակով:

Միևնույն ժամանակ, 2023 թ.-ի սեպտեմբերի 28-ին ընդունվեց Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թթ. գործողությունների ծրագիրը,[18] որի համաձայն, Իրավահավասարության ապահովման մասին օրենքը պետք է ընդունվի 2024 թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում:

18 Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ գործողությունների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ. հասանելի է «ի-դրաֆթ» հարթակում. https://www.e-draft.am/projects/5472/about

Սույն զեկույցում տեղ գտած մարդու իրավունքների խախտումները զուգորդված են խտրականությամբ: Այսինքն՝ արձանագրված իրավախախտումները տեղի են ունեցել տուժողի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով:

Զեկույցում ներկայացված դեպքերը տեսակավորված են ըստ իրավախախտումների, սակայն բոլորը զուգորդված են գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիմքով խտրականությամբ:

ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:

2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:

3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 24

Անձի կյանքի իրավունքի իրականացումն ապահովելու պետության պարտականությունը ոչ միայն ենթադրում է ուղղակիորեն չմիջամտել դրա իրականացմանը, այլև պաշտպանել մասնավոր անձանց կողմից ոտնձգություններից:[19] Այսինքն, պետության ուղղակի պատասխանատվության բացակայությունը անձի կյանքի իրավունքի միջամտության գործում չի բացառում վերջինիս պատասխանատվությունն իրավունքի խախտման հարցում:[20] Այնուամենայնիվ, կյանքի իրավունքը պետք է մեկնաբանվի այնպես, որ անհամաչափ ծանր բեռ չդրվի իշխանությունների վրա: Երրորդ անձանց կողմից ոտնձգությունների դեպքում կյանքի իրավունքի խախտում կարող է արձանագրվել այն դեպքում, երբ հաստատվի, որ պետությունը իմացել է կամ պարտավոր էր իմանալ տվյալ պահին երրորդ անձանց կողմից անձի կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայության մասին և իր լիազորությունների շրջանակներում չի ձեռնարկել անհրաժեշտ ողջամիտ միջոցներ կանխելու անձի կյանքին սպառնացող այդ վտանգը:[21] Հասարակության բոլոր խմբերի և բոլոր անհատների համար ապահով միջավայրի ապահովման պարտավորության շրջանակներում պետությունը պետք է արդյունավետորեն հասցեավորի այն խմբերի խնդիրները, ում նկատմամբ ոչ միայն անհատական այլ նաև խմբային որոշակի հատկանիշների պատճառով հնարավոր են այնպիսի ոտնձգություններ, որոնք վնաս կհասցնեն ընդհուպ մինչև անձանց առողջությանը և կյանքին:

Միևնույն ժամանակ, որպես պոզիտիվ պարտավորություն, պետությունը պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնի մասնավոր անձի կողմից սպանությունների պարագայում՝ ապահովելու համար մի կողմից արդարադատություն, մյուս կողմից կանխելու համար կյանքի իրավունքի հետագա ոտնահարումները: Պետության կողմից պատշաճ և արդյունավետ քննություն չիրականացնելը ևս հանդիսանում է կյանքի իրավունքի խախտում՝ պետության պոզիտիվ պարտավորության ձախողման արդյունքում:

2023 թ.-ի ընթացքում արձանագրվել են կյանքի իրավունքի խախտման երկու դեպք, որոնք երկուսն էլ պատշաճ քննության և արձագանքի չեն արժանացել:

19 ՄԻԵԴ վճիռ թիվ 55523/00, § 93. Անգելովան և Իլիեվն ընդդեմ Բուլղարիայի
20 Եվրոպայի խորհրդի CM/Rec(2010)5 «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ» հանձնարարական
21 ՄԻԵԴ վճիռ թիվ 23452/94. Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության

Դեպք 1

Տրանս անձին սպանել են իր բնակարանում և այրել բնակարանը: Դեպքը դեռ քննության փուլում է, սակայն հանցագործությունը որակելիս հաշվի չի առնվել տուժողի՝ տրանս լինելու հանգամանքը՝ որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Տրանս անձի սպանության դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, հանցավորը կալանավորվել է: Միևնույն ժամանակ, արարքը որակելիս անդրադարձ չի կատարվել հանցագործության շարժառիթին, չեն քննարկվել անգամ այն հանգամանքները, որոնք կարող են ցուցիչ հանդիսանալ գնահատելու համար հանցավորի կողմից արարքը գործելու հիմքում ընկած ատելությունը կամ անհանդուրժողականությունը: 2022 թ.-ին ուժի մեջ մտած նոր քրեական օրենսգրքի հիման վրա ներկայացվել է միջնորդությունը, որպեսզի արարքին քրեաիրավական որակում տալիս հաշվի առնվի հանցավորի շարժառիթը՝ պայմանավորված տուժողի գենդերային ինքնությամբ: Այս պարագայում արարքը համարվում է ծանրացնող հանգամանքներում կատարված և ենթադրում է առավել խիստ պատասխանատվություն: Նման կարգավորման հիմքում այն մոտեցումն է, որ որևէ անձնական կամ սոցիալական հատկանիշով պայմանավորված հանցագործությունը ուղղված է ոչ թե անհատի, այլ տվյալ հատկանիշով առանձնացող համայնքի դեմ, և հետևաբար, միտում ունի վնասելու ոչ թե անհատին, այլ տվյալ համայնքին: Որպես հետևանք, նման հանցանքը վախի մթնոլորտ է ստեղծում այդ հատկանիշով տարբերվող անձանց շրջանում և հայտնում հասարակությանը, որ տվյալ համայնքը ընդունված չէ: Ինչևէ, հանցավորի ատելության շարժառիթը գնահատելու վերաբերյալ միջնորդության քննությունը հետաձգվել է և դեռևս որևէ պատասխան չի ստացվել:

Դեպքից որոշ ժամանակ անց տարածվել են լուրեր առ այն, որ անձի սպանությունը կապված է եղել թմրանյութերի շուրջ վեճի հետ:[22] Հաշվի առնելով հասարակության բացասական վերաբերմունքը թմրանյութերի նկատմամբ՝ այսպիսով փորձ է արվել շեղել հասարակության ուշադրությունը այն հանգամանքից, որ սպանության պատճառը անձի գենդերային ինքնությունն է եղել և էլ ավելի խորացնել արարքն արդարացնող մոտեցումները: Գործի քննության սկզբնական փուլում, երբ իրավակիրառ մարմինները անգամ չեն ուսումնասիրել հանցավորի կողմից տուժողի գենդերային ինքնության նկատմամբ անհանդուրժողականության շարժառիթի ցուցիչները՝ ատելության մասին վկայող փաստական հանգամանքները, նման լուրեր տարածելը առնվազն

22 «Արմթայմս.էյէմ», «Վիճել են թմրանյութի հետ կապված հարցի շուրջ, ապա սպանել է. ՔԿ-ն նոր մանրամասներ է հայտնել տրանս կնոջ սպանությունից». 23.08.2023 https://www.armtimes.com/hy/article/267268

անպատասխանատվություն է քրեական գործի նկատմամբ մի կողմից, և տուժողի ու նրա մերձավորների նկատմամբ մյուս կողմից: Տուժողի անունն արատավորող ցանկացած տեղեկատվության տարածումը նախքան դատարանի կողմից այդ հանգամանքի մասին օրինական ուժի մեջ մտած դատավճռի կայացումը պետք է լինի անընդունելի և որակվի որպես քննչական մարմնի կողմից լիազորությունների անցում:

Բացի արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմների ստեղծումից և արդար դատաքննության իրականացումից, պետությունը նաև հստակ քաղաքականություն պետք է ունենա խտրական մոտիվներով կատարված իրավախախտումների պատասխանատվության և կանխման ուղղությամբ: Մասնավորապես, պետք է համապատասխան արձագանք ստանան նաև նման հանցագործություններն արդարացնող և հետագա խտրականության ու բռնության հրահրող խոսքերն ու հայտարարությունները: Մասնավորապես, քրեական արարք ենթադրող խոսքը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, իսկ այնպիսի խոսքը, որը օրենքով սահմանված պատասխանատվության չի հանգեցնում, պետք է արձագանք ստանա քաղաքական իշխանության կողմից: Վերջինս, պետք է հստակ կերպով հանրությանը հայտնի, որ իր համար անընդունելի է հասարակության տարբեր խմբերի միջև ատելություն և անհանդուրժողականություն սերմանելը, հանցավորին սատարելը:

Այսպիսով, տրանս անձի սպանությունը բուռն արձագանք ստացավ հասարակության կողմից, որը սոցիալական ցանցերով մի կողմից արդարացնում էր հանցավորի արարքը, մյուս կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ այլ բռնության և խտրականության կոչեր էր հնչեցնում: Այնուամենայնիվ, իշխանության մարմինների կողմից որևէ արձագանք թե դեպքի, թե համատարած ատելության խոսքի վերաբերյալ, չստացան: Եվ անպատժելիության նման մթնոլորտում պետությունը, իհարկե, անմիջականորեն պատասխանատու է ԼԳԲՏ անձանց նկատմամբ որևէ բռնության կամ խտրականության համար, քանի որ ձախողել է որևէ նվազագույն ջանք գործադրել՝ կանխելու համար թշնամանքի սերմանումն ու ոտնձգությունները:

Այնուամենայնիվ, սպանության դեպքի քննության ավարտից հետո միայն կարելի է վերջնական գնահատական տալ գործը քննող մարմնի բացթողումներին:

Իսկ ատելություն պարունակող խոսքի մանրամասն վերլուծությունն ու պետության կողմից ակնկալվող միջամտությունը ներկայացված է սույն զեկույցի երկրորդ բաժնում:

Սպանության դեպքից հետո մի խումբ անձինք հավաքվել են քաղաքի կենտրոնական պուրակներից մեկում կազմակերպելով մոմավառություն սպանված տրանս անձի հիշատակին: Մոմավառության ընթացքում տեղի է ունեցել հարձակում մասնակիցների վրա, մասնավորապես, նրանց ուղղությամբ նետել են ձվեր և քարեր, որոնք դիպչել են մասնակիցներից մի քանիսին՝ պատճառելով ֆիզիկական ցավ և վնասվածքներ:[23] *Տուժողները միանգամից դիմել են տվյալ տարածքում հասարակական կարգի նկատմամբ վերահսկողություն իրականացնող ոստիկաններին, որոնք որևէ ջանք չեն գործադրել գտնելու համար հարձակվողներին:*

---

23 «Արմթայմս.էյէմ», «Օրերս սպանված տրանսգենդեր կնոջ հիշատակին կազմակերպված մոմավառության մասնակիցները ենթարկվել են հարձակման. մանրամասներ».23.08.2023 https://www.armtimes.com/hy/article/267250

Դեպք 2

«Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն մամուլից տեղեկացել է, որ 2023 թ. նոյեմբերի 14-ի լուսադեմին 17-ամյա Խ.Ս.-ն ինքնասպանություն է գործել՝ նետվելով Դավթաշենի կամրջից: Այնուհետև կազմակերպությունը տեղեկացել է, որ ինքնասպանությունը կապված է եղել տուժողի սեռական կողմնորոշման հետ: Հետագայում տուժողի ընկերները հարցազրույցներ են տվել «Իպրես.էյէմ» կայքին, պատմելով, որ տուժողը տարբերվող արտաքին է ունեցել, նաև պարբերաբար ենթարկվել է ընտանեկան բռնության իր սեռական կողմնորոշման պատճառով: Հայրը և մայրը նրան ծեծել են, մի քանի անգամ արյունոտ վիճակում են նրան տեսել, պարբերաբար նրան ստիպել են խուզել մազերը, նվաստացրել են: Ինքնասպանությունից առաջ տուժողի լուսանկարները, ուղեկցված ատելության մեկնաբանություններով, տարածվել է տելեգրամյան ալիքով, ինչը ընտանիքի հետ նոր կոնֆլիկտ է հրահրել: Նրա սեռական կողմնորոշման հետ են կապված եղել հրապարակումները. փորձել են տուժողի սեռական կողմնորոշումը բացահայտել: Տեսնելով նկարները՝ ծնողները նրան դուրս են հանել տանից, ապա նրան հեռացրել են աշխատանքից: Փաստացի անձը մնացել է առանց որևէ աջակցության ծնողների կողմից, որի արդյունքում բռնություններին և ատելությանը չդիմանալով ինքնասպանություն է գործել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԼԳԲՏ անձանց ինքնասպանության դեպքերը չեն դադարում՝ հարկ է անդրադառնալ այն հարցին, թե առհասարակ ինչպես է պետությունը արձագանքում մի կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ ընտանեկան բռնությանը առհասարակ, բոլոր հասարակական հարաբերություններում առկա խտրականությանն ու բռնությանը: Միանշանակ է, որ պետության անգործությունը այս հարցում էական նշանակություն ունի: Իհարկե, բարդ է գնահատել ինքնասպանության պատճառներն ու անձի նման արարքի հիմքերը, քանի որ դրանք ոչ միայն փաստական հանգամանքներ են, որոնք պետք է պարզապես համադրել, այլ նաև արտաքին ճնշումներ են, որոնց տարբեր անձինք կարող են տարբեր կերպ արձագանքել: Միևնույն ժամանակ, միանշանակ է, որ ատելության հողի վրա մարգինալացման և ճնշումների ենթարկվող անձինք պետք է ունենան հասանելիություն թե արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմների, թե զգայուն մասնագիտական աջակցության, որոնց համապարփակ ապահովումը պետության պարտավորությունն է: Հակառակ պարագայում, երբ պետությունը ոչ միայն չի ապահովում համապարփակ աջակցություն բռնության և խտրականության ենթարկված անձանց, այլ նաև հաճախ էլ ավելի ծանր դրության մեջ է դնում՝ կրկնազոհացնելով և ծաղրելով:

Բացի ընդհանուր պաշտպանության ապահովումից՝ հարկավոր է անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչպես են իրավապահ մարմիններն արձագանքում ինքնասպանության դեպքերին: Փորձը ցույց է տալիս, որ ինքնասպանության դեպքերում հարուցվում է քրեական գործ՝ ինքնասպանության հասցնելու հանցակազմով, սակայն դա կրում է ձևական բնույթ և կարճ ժամկետում գործը կարճվում է: Այսինքն, իրավապահ մարմիններն ըստ էության նպատակահարմար չեն գտնում մանրամասն ուսումնասիրել, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն անցկացնել՝ պարզելու համար, թե ինչը կամ ով է անձին հասցրել կամ դրդել ինքնասպանության: Հետևաբար, այստեղ ևս գործ ունենք հասարակական

անպատասխանատվության հետ, ինչը կրկին գալիս է պետության անգործությունից և անհետևողականությունից:

Այս դեպքին ևս հաջորդեց ատելության խոսքի ալիք, որտեղ տեղ գտած մտքերից որոշները ինքնին հանցագործության տարրեր են պարունակում, իսկ որոշները կարելի է գնահատել որպես ԼԳԲՏ համայնքի նկատմամբ հոգեբանական ծանր ներգործություն: Սակայն պետության կողմից այս խոսքը ևս որևէ արձագանքի չարժանացավ: Առավել մանրամասն նկարագրությունը ներառված է սույն զեկույցի երկրորդ բաժնում:

Կարող ենք եզրակացնել, որ պետության կողմից ուղղակիորեն կյանքի իրավունքի խախտումներ թեև չեն եղել, այնուամենայնիվ, պետությունը ձախողել է կատարել իր պոզիտիվ պարտավորությունները, այն է՝ միջոցներ ձեռնարկել կանխելու և/կամ պատասխանատվության ենթարկելու երրորդ անձի կողմից կատարված ոտնձգությունները և ստեղծելու ապահով միջավայր հասարակության բոլոր անդամների համար: Հետևաբար, պետության անգործությունը հանգեցրել է երկու անձի կյանքի իրավունքի խախտման:

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ՁԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2. Մարմնական պատիժներն արգելվում են:

3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 26 մաս 1

Խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով պետական պաշտոնատար անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձին մտածված կերպով հասցվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն:[24] Խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից ազատ լինելը անձի բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակման:[25] Որպեսզի դաժան վերաբերմունքն առաջացնի անձի վերոհիշյալ իրավունքի խախտում, անհրաժեշտ է, որպեսզի այն հասնի դաժանության նվազագույն մակարդակի, պետք է հաշվի առնվեն նաև կոնկրետ գործի հանգամանքները, ինչպես, օրինակ, վերաբերմունքի բնույթը, թե ինչ համատեքստում է այն տեղի ունեցել, դրա տևողությունը, ֆիզիկական և հոգեբանական հետևանքները, իսկ որոշ դեպքերում նաև՝ անձի տարիքը, սեռը և առողջական վիճակը:[26] Անհրաժեշտ է տարբերակել խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, որտեղ խոշտանգումը անձին դիտավորությամբ պատճառված այն վնասն է, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք, մինչդեռ նվաստացնող վերաբերմունք կարող է համարվել այն վերաբերմունքը, որ անձի մոտ առաջացնում է վախի, վտանգի, ստորացված

24 Հոդված 1, «Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ» ՄԱԿ-ի 1984 թ. կոնվենցիա
25 ՄԻԵԴ վճիռ թիվ 2346/02, §49. Փրեթթին ընդդեմ Միացյալ Թագավորության
26 ՄԻԵԴ վճիռ թիվ 33394/96. Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության; ՄԻԵԴ վճիռ թիվ 13134/87, §30. Կոստելլո-Ռոբերթսն ընդդեմ Միացյալ Թագավորության

լինելու զգացողություններ,[27] իջեցնում է անձի հեղինակությունը և դերը, մարդկային արժանապատվությունը կամ ստիպում է անձին գործել իր կամքին կամ խղճին հակառակ:[28] Երբ անձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելը բավարար ծանրության չի հասել կամ չի հետապնդել խոշտանգման սահմանմամբ նախատեսված նպատակ, ապա խոսքը գնում է անմարդկային վերաբերմունքի մասին: Որոշ դեպքերում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը, սպառնալիքները, նույնպես նվաստացնող վերաբերմունք են համարվում:[29] Այս դեպքերում անհրաժեշտ չէ պետության կողմից դիտավորության առկայությունը անձի անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի խախտման փաստը ճանաչելու համար:[30]

Իրավապահ մարմինների կողմից դրսևորված վատ վերաբերմունք

Դեպք 3

Ընտանեկան բռնության ենթարկված անձը դիմել է ոստիկանություն: Ոստիկաններից մեկը տուժողի և ընկերոջ հետ առանձնազրույցի ժամանակ վերջիններիս սեռական անձեռնմխելիության վերաբերյալ մանրամասն հարցադրումներ է տվել, այնուհետև տեղեկանալով, որ տուժողը և իր ընկերը նույնասեռական են, սկսել է սեռական հարաբերություն ունենալու առաջարկներ անել: Միայն հաջորդը օրը տուժողը փաստաբանի հետ գնացել է ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժին և դեպքի վերաբերյալ ներկայացրել է հաղորդում, որ իր սեռական կողմնորոշման պատճառով մոր կողմից ենթարկվել է ընտանեկան բռնության: Ոստիկանությունը բռնարարի նկատմամբ անհետաձգելի միջոց է կիրառել:

Դեպք 4

2023 թ.-ի փետրվարին՝ երեկոյան, նույնասեռական մի տղամարդ անցնելիս է եղել Երևանի կենտրոնական փողոցներից մեկով: Հասնելով խաչմերուկին՝ նկատել է պարեկային 2 ծառայողների: Նրանք, դիմողին տեսնելով, սկսել են վիրավորական արտահայտություններ հնչեցնել նրա հասցեին, հայհոյել և ծաղրել են նրան: Այդ արտահայտությունները կապված են եղել նրա նույնասեռական կողմնորոշման, արտաքին տեսքի՝ երկար մազերի, հագուստի հետ: Նրանք ասել են՝ «աղջի՞կ ա, թե՞ տղա ա», «տանենք կոխենք» և այլ արտահայտություններ, այդ թվում՝ սեռական բնույթի հայհոյանքներ:

27 ՄԻԵԴ վճիռ թիվ 23178/94 Այդինն ընդդեմ Թուրքիայի
28 Արևելյան աֆրիկյան ասիացիներն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ ՄԻԵԴ 4715/70, 4783/71 և 4827/71 գործերով
29 Սմիթը և Գրեդին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ Թիվ 33985/96 և 33986/96 գործեր
30 Փիրսն ընդդեմ Հունաստանի Թիվ 28524/95 ՄԻԵԴ վճիռ, ինչպես նաև Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի U.N. Doc. No. A/56/156 2001 թ. զեկույց

Դեպք 5

2023 թ.-ի մարտին՝ գիշերը, Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի տարածքից պարեկային ծառայողները տուժողին բերման են ենթարկել ոստիկանություն՝ թմրանյութեր պահելու, օգտագործելու և իրացնելու կասկածանքով: Պարեկային ծառայողները իրենց բաժնից ահազանգել են Մալաթիա և Սեբաստիա վարչական շրջանների ոստիկանությանը, այնտեղի ոստիկանները եկել են և տուժողին բերման են ենթարկել: Մալաթիա և Սեբաստիա վարչական շրջանների ոստիկանները վերցրել են տուժողին պատկանող բջջային հեռախոսը և մուտք են գործել բջջային հեռախոսի նկարների բաժին, որտեղ նկատել են, որ բերման ենթարկված անձը նույնասեռական անձ է: Այս մասին տեղեկանալուց հետո ոստիկանները տարբեր սպառնալիքներ են հնչեցրել և թույլ չեն տվել, որ վերջինս զանգի իրավունքից օգտվի: Ոստիկաններից մեկը իմանալով որ տուժողը նույնասեռական անձ է, հնչեցրել է ատելության խոսք, ասել, որ բոլոր «գոմիկներին» պետք է գնդակահարել և ձեռքը հարվածել է սեղանին՝ վախի մթնոլորտ ստեղծելով: Այնուհետև առգրավվել են տուժողի անձնական իրերը, բջջային հեռախոսը, և բռնի ուժով տուժողին տեղափոխել են խուց, որի ընթացքում ոստիկանները սեռական կողմնորոշման առնչությամբ սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել: Մի քան ժամ ոստիկանության բաժնում պահելուց հետո ազատ են արձակել: Բողոք է ներկայացվել դատախազությանը: Գործի ընթացքի վերաբերյալ դեռևս տեղեկություն չկա:

Դեպք 6

2023 թ.-ի ապրիլի 23-ի գիշերը ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից, առանց համապատասխան հիմքերի, «Պոլիգրաֆ» ակումբ ներխուժելու արդյունքում տուժողը ենթարկվել է ֆիզիկական և հոգեբանական բռնության: Ակումբի աշխատակիցների և հաճախորդների նկատմամբ ոստիկանության ծառայողների կողմից կիրառվել է ֆիզիկական ուժ, մասնավորապես՝ նույնասեռական անձին պառկեցրել են հատակին, այնուհետև, մազերից բռնելով, վերջինիս բարձրացրել, ապա գցել են հատակին, որի արդյունքում տուժողին պատճառվել է ֆիզիկական ուժեղ ցավ: Այնուհետև, 20 րոպե անց, ոստիկանները տուժողին արգելանքի են վերցրել և տեղափոխել են ՀՀ ոստիկանության Կենտրոնի բաժին: Բաժին տեղափոխվելու ժամանակ մեքենայի մեջ ոստիկանները սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել տուժողի հասցեին՝ նրան անվանելով «գյոթ» և սպառնացել, որ բաժին հասնելուն պես վերջինիս դեռ լիքը սպասողներ կան: Պարբերաբար տուժողին հարցրել են, ըստ իրենց, վերջինիս կողմից պահված թմրանյութերի գտնվելու վայրի մասին՝ սպառնալով գտնելուն պես թմրանյութի զանգվածը մտցնել տուժողի հետույքը: Այս բոլոր գործողությունները՝ ոստիկանները կատարել են նրա համար, որ տուժողը հանդիսանում է ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչ: ՀՀ ոստիկանության կենտրոնի բաժին հասնելուց հետո ևս ոստիկանները տուժողին՝ նրա սեռական կողմնորոշման հիմքով նվաստացրել են պատիվը և արժանապատվությունը: Մասնավորապես, սեռական բնույթի հարցեր են տվել, պատասխաններ ստանալուց հետո ծիծաղել են վերջինիս վրա: Այնուհետև, մերկացրել են տուժողին և մարմնի զննություն են կատարել, որի արդյունքում տուժողն իրեն նվաստացած է զգացել: Տուժողի արժանապատվությունը նվաստացվել է նաև ոստիկանների այն հարցադրումներից, թե ինչու է վերջինս ականջող կրում, կամ կանացի շորեր

հագնում է, թե՝ ոչ: Անձը դիմել է իրավապահ մարմնին և ճանաչվել որպես տուժող:

Դեպք 7



2023 թ. ապրիլի 23-ի գիշերը, ոստիկանության աշխատակիցները դիմակավորված և զինված մուտք են գործել «Պոլիգրաֆ» գիշերային ակումբ՝ թմրանյութերի իրացման դեպքի հայտնաբերման նպատակով: Ոստիկանության ծառայողների ներխուժումը ուղեկցվել է հայհոյանքներով և բրոնություններով: Ծառայողները ակումբում գտնվող բոլոր անձանց ստիպողաբար պառկեցրել են գետնին: Ընդհանուր ապօրինություններից բացի՝ նրանք նաև խտրական վերաբերմունք են դրսևորել ակումբում գտնվող ԼԳԲՏ անձանց նկատմամբ: Մասնավորապես, տուժողը, ով լեսբի կին է, պատմում է, որ ակումբ մուտք գործած ոստիկաններից մեկը ոտքով հարվածել է իր ձախ կողին, ինչից հետո ինքը պառկել է գետնին: Նա չէր կարող բարձրանալ կամ այլ գործողություն կատարել, քանի որ ոստիկանները զինված էին և ակնհայտորեն ցուցադրում էին իրենց զենքերը՝ ստիպելով կատարել իրենց հրամանները: Պառկած լինելու ընթացքում իրեն ծաղրել են արտաքին տեսքի հետ կապված՝ ասելով՝ «Էս աղջիկ ա, թե տղա, դուք հայ կոչվելու իրավունք չունեք» , և այլն: Ոստիկանները հնչեցրել են նաև սեռական բնույթի հայհոյանքներ՝ կապված ակումբում գտնվողների արտաքին տեսքի, գենդերային արտահայտման հետ: Տուժողը նաև պատմում է, որ ոստիկանները ծաղրել և հայհոյել են ակումբում գտնվող մի տղայի, ով կարճ տոպ էր հագել, ինչը ոստիկանների կողմից կանացի էր ընկալվում: Մեկ այլ տղայի, ով մազերը դեղին էր ներկել, ևս ծաղրել են և հայհոյել՝ կապված մազերի գույնի հետ: Տուժողին արգելանքի վերցնելու պահից չեն տեղեկացրել իր իրավունքների մասին, թույլ չեն տվել պաշտպան ունենալ, իր ցանկացած անձին տեղեկացնել իր գտնվելու մասին: Բաժին տեղափոխելուց հետո տուժողին ստիպել են անջատել հեռախոսը: Ոստիկանության բաժնում ևս հայհոյանքներ են հնչել, տուժողը կողքի սենյակներից լսել է գոռոցներ: Այս ամենով տուժողի մոտ ամրապնդվել է վախի մթնոլորտը: Երբ տուժողին տեղափոխել են քննիչի մոտ, վերջինս նույնպես թույլ չի տվել զանգահարել փաստաբանի, չի տեղեկացրել տուժողին վերջինիս լռելու իրավունքի մասին և ստիպել է ցուցմունք տալ: Տուժողը ցուցմունքը և մյուս փաստաթղթերը ստորագրել է՝ առանց դրանց բովանդակությանը ծանոթանալու: Այնուհետև քննիչը, կոպիտ խոսելով տուժողի հետ, պահանջել է ապակոդավորել և իրեն փոխանցել հեռախոսը, ինչից հետո ուսումնասիրել է տուժողի անձնական լուսանկարները և նամակագրությունը: Երբ տուժողը ասել է, որ քննիչը դրա իրավունքը չունի, քննիչը ասել է՝ «քրեական գործով ինչ ուզեմ, կանեմ»: Տուժողը քննիչի օպտիկական ակնոցի արտացոլանքում նկատել է, որ քննիչը կարդում է իր և զուգընկերուհու նամակագրությունը, նայում է նրանց ինտիմ նկարները: Դրանից հետո քննիչը սկսել է ծաղրական հարցեր տալ տուժողին՝ նրա կողմնորոշման հետ կապված, մասնավորապես՝ «տղաների հետ սեքս անո՞ւմ ես, թե՞ չէ, իսկական առնանդամ տեսե՞լ ես, արհեստական առնանդա՞մ ես օգտագործում, վարո՞ւնգ, թե՞ բանան»: Քննիչը նաև սպառնացել է իրեն չենթարկվելու պարագայում տուժողին

«պադվալում» փակել 72 ժամով: Արդեն առավոտյան ժամը 5-6-ի շրջանում քննիչը տուժողին բաց է թողել ստորագրությամբ՝ պահանջելով անմիջապես գալ, հենց ինքը կանչի: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Տուժողը հրաժարվել է բողոքից՝ հիմնավորելով, որ քննչական բաժին ներկայանալիս ճնշվածության զգացում է ունենում և չի ցանկանում այլևս մասնակցել գործի քննությանը:

Նկարագրված դեպքերում պետությունը խախտել է իր առաջնային պարտավորությունը՝ հարգել մարդու իրավունքները և ձեռնպահ մնալ որևէ ոտնձգությունից: Որոշ դեպքերում անձինք իրավապահ մարմինների վատ վերաբերմունքին են առերեսվել այն բանից հետո, երբ ինչ-որ իրավախախտման զոհը դառնալուց հետո փորձել են իրավական պաշտպանություն ստանալ: Այս պարագայում ոստիկանությունը այն առաջնային մարմինն է, ում արձագանքը հատկապես կարևոր է ատելության հողի վրա կատարված հանցագործության տուժողին զգայուն կերպով աջակցություն ցույց տալու և դեպքի քննությունն արդյունավետ դարձնելու համար: Մասնավորապես, իր ինքնության պատճառով բռնության ենթարկված անձի նկատմամբ պետք է ցուցաբերվի այնպիսի վերաբերմունք, որ նա վստահի իրավակիրառ մարմնին և բաց կերպով հայտնի այն բոլոր հանգամանքները, որոնք կարող են էական նշանակություն ունենալ գործի քննության համար: Այսպիսի հանցագործություններից տուժած անձանց նկատմամբ առանձնահատուկ զգայուն վերաբերմունքի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ պայմանավորված արարքի՝ տուժողի անձնական հատկանիշի հետ անմիջականորեն կապված լինելու հանգամանքով, տուժողը գտնվում է հոգեբանորեն ճնշված վիճակում, կարիք ունի մի կողմից համագործակցող, զգայուն, ընդունող վերաբերմունքի իրավապահ մարմինների կողմից, որպեսզի իրեն ապահով զգա, և մյուս կողմից այլ մասնագետների աջակցության, ինչպիսիք են՝ հոգեբանը և սոցիալական աշխատողը՝ ապահովելու համար վերականգնումը հոգեբանական ճնշման հետևանքներից և կանխելու համար սոցիալական մեկուսացումը: Հայաստանյան իրականությունում, սակայն, իրավապահ մարմինները չեն ցուցաբերում ընդունող, զգայուն և համագործակցող վարքագիծ, միջոցներ չեն ձեռնարկում ապահովելու համար տուժողների հետագա անվտանգությունը, չեն առաջարկում հոգեբանի կամ սոցիալական աշխատողի ներգրավում: Ավելին, տուժողը հայտնվում է էլ ավելի ծանր իրավիճակում, երբ պետության ներկայացուցիչ այն անձը, ով ենթադրաբար պետք է ապահովեր իր պաշտպանությունը, շարունակում է իրավախախտումների շղթան: Ոստիկանների գործողությունները այսպիսի իրավիճակում կարելի է գնահատել ոչ թե պարզապես լիազորությունների անցում, այլ հոգեբանական ներգործություն, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, որոշ դեպքերում նաև՝ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություն: Եվ, իհարկե, այսպիսի դրսևորումների արդյունքում է, որ ատելության հիմքով հանցագործությունների մեծաթիվ դեպքեր իրավապահ մարմիններին պարզապես չեն հասնում միայն այն պատճառով, որ տուժողները չունեն վստահություն իրավապահ համակարգի նկատմամբ: Այս մասին է վկայում նաև 2016 թ.-ին հրապարակված հետազոտությունն[31] ատելության հիմքով հանցագործությունների մասին, որտեղ շուրջ 200 դեպք էր նկարագրված, որոնց առնչությամբ բողոքներ չեն ներկայացվել:

31 «ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում». հետազոտություն, 2016 թ. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/02/hate-crime-monitoring-2016_hy.pdf

Հետևաբար, գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ մի կողմից պետությունը ձախողում է ապահովել երրորդ անձանց կողմից ոտնձգություններից արդյունավետ պաշտպանություն, մյուս կողմից՝ ուղղակիորեն խախտում է տուժողների հիմնարար իրավունքները:

Արձանագրված այլ դեպքերում ոստիկանները, ում պարտավորությունն է եղել ապահովել հասարակական կարգը և հասարակության յուրաքանչյուր անդամի ապահովությունը առօրյա կյանքում, ուղղակիորեն ոտնահարել են մարդկանց հիմնարար իրավունքները՝ դարձնելով հանրային տարածքները վտանգավոր նրանց համար՝ պայմանավորված իրենց արտաքին տեսքով: Այսինքն, անհնար է խոսել մասնավոր անձանց կողմից դրսևորված իրավախախտումները կանխելու և անվտանգ միջավայր ապահովելու մասին այն պարագայում, երբ այդ պարտավորության կրողը հենց ինքն է անմիջականորեն վտանգ ներկայացնում հասարակության համար: Հարկ է նկատել, որ ոստիկանները, ովքեր նման վարքագիծ են դրսևորել, այն պարեկներն են, որոնք ներգրավվել են ոստիկանական համակարգում ոստիկանական բարեփոխումների արդյունքում՝ անցնելով կարճաժամկետ պատրաստում: Ոստիկանական բարեփոխումների նպատակներից մեկն էր հասարակության համար ստեղծել վստահելի և տարբեր իրավիճակներում աջակցելու կարողություն ունեցող ոստիկանական համակարգ, ինչը, սակայն, կարելի է համարել այս պահի դրությամբ ձախողված, քանի դեռ մարդու իրավունքների նկատմամբ ոչ իրավաչափ միջամտություն թույլ տված ոստիկանները համաչափ պատասխանատվության չեն ենթարկվել:

Արձանագրված մյուս դեպքերում ոստիկանության ծառայողները ուղղակիորեն ոչ իրավաչափ միջամտությամբ սահմանափակել են անձանց անձեռնմխելիությունը և նրանց ենթարկել անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, սեռական ոտնձգության: Տուժողները, փաստացի, անգամ չեն ցանկացել հետամուտ լինել իրենց բողոքների քննությանը, քանի որ յուրաքանչյուր անգամ ներկայանալով գործը քննող մարմնի կանչով որպես տուժող, վերապրել են նույն զգացողությունները և ճնշվածության զգացում ունեցել: Այսինքն, տուժողները, որպես ոստիկանների վերաբերմունքի հետևանք, իրենց ներկայացրած դիմումի որևէ արդյունք չեն ակնկալում, և հետևաբար, քիչ է հավանականությունը, որ մեկ այլ պարագայում իրավախախտման զոհ դառնալով նրանք կդիմեն իրավական պաշտպանության:

Հատկանշական է նաև, որ ոստիկանները որպես թիրախ ընտրել են «Պոլիգրաֆ» ակումբը, որտեղ բազմազան մարդիկ են հաճախում և բերման ենթարկելիս հատկապես նվաստացուցիչ և անմարդկային վերաբերմունքի են արժանացել ԼԳԲՏ անձինք, ինչը փաստում են ոստիկանների արտահայտություններն ու վիրավորանքները կապված տուժողների իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման հետ:

Զինված ուժեր

Դեպք 8

Դիմողը ծառայության է անցել x զորամասում և 7 ամսից ավելի ծառայություն է իրականացնում զինված ուժերում, սակայն իր նույնասեռական լինելու

հանգամանքը փորձել է զորամասում թաքուն պահել: Իր տարբերվող տեսքի պատճառով 7 ամիսների ընթացքում երկու անգամ սեռական ոտնձգության է ենթարկվել նույն զորամասի զինծառայողների կողմից: Զորամասի կացարանում, երկու զինծառայող դիմողի ձեռքերը բռնել են իր կամքին հակառակ, իսկ 3-րդ զինծառայողը մարմնի տարբեր մասերին է ձեռքով դիպչել, փորձել համբուրել և այլն, նմանատիպ դեպքը կրկնվել է մեկ այլ զինծառայողի կողմից դիմողի քնած լինելու ժամանակ, սակայն դիմողը չի ցանկանում վերը նշված հարցի վերաբերյալ դիմել հրամանատարական կազմին կամ իրավապահ մարմիններին: Այնուհետև զինծառայողների շրջանում տարածվել է դիմողի նույնասեռական լինելու հանգամանքի մասին լուրը: Հրամանատարական կազմը որոշել է մեկուսացնել անձին՝ տեղափոխելով զինվորական հոսպիտալ, և հիմնավորելով, թե այդպես ապահովելու են նրա անվտանգությունը:

Նույնասեռական, բիսեքսուալ և տրանս անձանց նկատմամբ զինվորական ծառայության ընթացքում արձանագրված իրավախախտումների պարագայում տուժողները չեն ցանկանում դիմել իրավապահ մարմիններին՝ վախենալով իրենց նկատմամբ հետագա բռնություններից: Լինելով փակ մարմին, բանակում տեղի ունեցող իրավախախտումներին հնարավոր չի լինում արձագանքել կամ որևէ միջոց ձեռնարկել: Այն ամբողջապես պետության վերահսկողության ներքո է, և պետությունը պետք է նախ և առաջ ձեռնպահ մնա իրավախախտումներից և պետք է ապահովի անվտանգություն իր կողմից ամբողջապես վերահսկվող տարածքում: Այնուամենայնիվ, պետությունը ձախողել է ԼԳԲՏ անձանց պաշտպանությունը նաև բանակում:

Զինված ուժերի կողմից այլ իրավախախտման դեպք է նկարագրված նաև հաջորդ բաժնում:

Հոգեբուժական հաստատություն

Դեպք 9

Անձն ունի հոգեկան առողջության խնդիր, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել վերջինիս բուժում իրականացնելու հոգեկան առողջության պահպանման կենտրոններից մեկում: Վերջինս այնտեղից ահազանգել է, որ գտնվում է վատ պայմաններում, իր սեռական կողմնորոշման պատճառով կենտրոնի աշխատակիցների կողմից բռնության և նվաստացուցիչ վերաբերմունքի է ենթարկվում: Ծեծը և նվաստացուցիչ վերաբերմունքը պայմանավորված է նրանով, որ նույնասեռական անձ է: Դրանից բացի հայտնել է, որ ստիպողաբար կապում են իր ձեռքերը և ներարկումներ են կատարում, որի արդյունքում իր առողջական վիճակը վատացել է: Անձը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին:

Հոգեբուժական հաստատությունները ևս, լինելով փակ կառույցներ, պետք է լինեին պետության հատուկ հսկողության ներքո՝ որպեսզի անձինք հնարավորություն ունենան խտրականությունից և բռնությունից զերծ միջավայրում վերա-

կանգնել իրենց հոգեկան ամբողջականությունը: Որպես պետական մարմին, հոգեբուժական հաստատության աշխատակազմի կողմից ցանկացած ոտնձգություն պետք է դիտարկել որպես պետության կողմից ուղղակի միջամտություն մարդու իրավունքներին: Նման դեպքերի շարունակականության պարագայում կարելի է պնդել, որ հոգեբուժական հաստատությունները իրենց գործառույթը չեն իրականացնում:

Անչափահասների խնամքի կենտրոն

Դեպք 10

Անչափահասների ժամանակավոր կացարանի սոցիալական աշխատողը տվել է նախապես կազմված փաստաթուղթ և ասել տրանս անձին, որ ստորագրի ու հրաժարվի խնամակալ ընտանիքից՝ նշելով. «մեկ ա քեզ ոչ մեկ չի ուզի վերցնել»: Անձը ստորագրել է փաստաթուղթը: Սոցիալական աշխատողը նաև պարբերաբար դիտարկումներ է արել անձի արտաքին տեսքի վերաբերյալ (մազերի, օղեր կրելը, գունավոր հագուստը), նաև առաջարկել, որ քայլեր անի, որ չխոսի իր ՍԿԳԻ-ից, փոխի իր արտաքինը, վառ գույներով հագուստ չկրի:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականությունը էլ ավելի ծանր հետևանքներ կարող է ունենալ անչափահաս անձի նկատմամբ, ով ունի խնամքի և հոգատարության կարիք մի կողմից, և իր ինքնության վերաբերյալ տեղեկատվության կարիք՝ ինքնընկալման համար, մյուս կողմից: Երեխաները պետք է պետության կողմից լրացուցիչ պաշտպանության մեխանիզմների հասանելիություն ունենան: Խնամքի կենտրոնների աշխատակիցները և մասնագետները պետք է պատրաստված լինեն թե մարդու իրավունքների հիմնական սկզբունքներից բխող վարքագիծ ցուցաբերելու համար, թե անչափահաս անձանց կարիքներին համաչափ մոտեցման համար:

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 31

Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքի առջև իրավասուբյեկտության ճանաչման, ինչպես նաև գաղտնիության իրավունքը:[32] Այն ներառում է պետության պարտականությունը ճանաչելու անձի կողմից ընդունված իր սեռը և գենդերային ինքնությունը՝[33] որպես անձի կողմից անձնական կյանքի իրավունքի իրականացման ապահովում: «Անձնական կյանքը» լայն հասկացություն է, ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, անձի գենդերային նույնականացումը, անունը, սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, տեղավորվում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում:[34] Անձի մարմինը իր անձնական կյանքի առավել ինտիմ բաղադրիչն է համարվում:[35] Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը նաև նախատեսում է անձի ինքնազարգացման, այլ անձանց հետ կապերի հաստատման և զարգացման հնարավորության ապահովման իրավունքը, անձնական հարաբերությունների արդյունավետ իրացման, տվյալ հանրույթում ապահով միջավայր ունենալու իրավունքը:[36]

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում դիրքորոշում է հայտնել, որ մասնավոր անհատների ոտնձգություններից անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության կապակցությամբ իշխանություններն ունեն պոզիտիվ պարտականություն՝ որոշ դեպքերում ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածների, մյուս դեպքերում՝ 8-րդ հոդվածի (առանձին կամ 3-րդ հոդվածի համակցությամբ) ներքո՝ ստեղծել և ապահովել իրավական նորմերի պատշաճ շրջանակ, որը թույլ կտա պաշտպանել մասնավոր

32 Հոդված 16, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ 1966 թ. միջազգային դաշնագիր
33 Հոդվածներ16 և 17, ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 16
34 ՄԻԵԴ վճիռ թիվ 2346/02, §49. Փրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության
35 ՄԻԵԴ վճիռ թիվ 24209/94. Ի.Ֆ.-ն ընդդեմ Թուրքիայի
36 ՄԻԵԴ վճիռ թիվ 66746/01. Քոնոորսն ընդդեմ Միացյալ Թագավորության

անձանց կողմից բռնի գործողություններից:[37]

Չնայած նրան, որ միջազգայնորեն հռչակված մարդու իրավունքները երաշխավորված են Սահմանադրությամբ, դրանց արդյունավետ գործողությունը ապահովվում է օրենսդրական ակտերով նախատեսված մեխանիզմներով: ՀՀ-ում անձին դիտավորությամբ ֆիզիկական վնաս պատճառելու դեպքում պատասխանատվության մեխանիզմները նախատեսվում են ՀՀ քրեական օրենսգրքով:[38] Վերջինս պատիժ է սահմանում տարբեր աստիճանի վտանգավորության և տարբեր տեսակի վնասներ պատճառող ֆիզիկական և հոգեկան ներգործության հանցանքների համար: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է տարանջատել վնասը, որը մասնավոր կյանքի իրավունքի խախտում է համարվում այնպիսի ներգործությունից, որը կարող է համարվել անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը և ընդհուպ մինչև խոշտանգում: Հաճախ նուրբ է սահմանը մասնավոր կյանքի իրավունքի խախտման և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

Այս ենթաբաժնում ընդգրկված են՝

- ընտանեկան բռնության դեպքերը,
- այլոց կողմից ֆիզիկական բռնության դեպքերը,
- կյանքին կամ առողջությանն ուղղված սպառնալիքները,
- մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկատվության տարածման դեպքերը:

Շատ դեպքերում, իհարկե, արարքները կարող են զուգահեռաբար առկա լինել, երբ օրինակ՝ ընտանեկան բռնությունը հաջորդել է անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վերաբերյալ տեղեկատվության տարածմանը, ֆիզիկական բռնությունը զուգորդվել է սպառնալիքներով և այլն:

Ընտանեկան բռնություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով

Դեպք 11

2022 թ.-ի դեկտեմբերին տուժողի հայրը և քեռին, իմանալով նրա սեռական կողմնորոշման մասին, ծեծի են ենթարկել իրեն՝ մարմնի տարբեր հատվածներին ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել: Դրանից բացի 2022 թ.-ի դեկտեմբերի 24-ից մինչև 2023 թ.-ի հունվարի 23-ը հայրը, իմանալով վերջինիս սեռական կողմնորոշման մասին, սահմանափակել է տուժողի ազատ տեղաշարժը, նրան պահել է փակի տակ իրենց տանը, ձեռքից վերցրել է կապի բոլոր միջոցները՝ զրկելով հեռախոսից և ինտերնետից, արգելելով շփվել նաև այլ անձանց հետ՝ ներառյալ զուգընկերոջ: Դիմողը հոր կողմից տրամադրված համակարգչի միջոցով հաղորդագրություն է ուղարկել Փինք իրավապաշտպան ՀԿ-ին, որն էլ նշված խնդրի վերաբերյալ դիմել է ոստիկանություն: Դրանից հետո դիմողը

37 ՄԻԵԴ վճիռներ. Օմանն ընդդեմ Միացյալ Թագավորության, §§ 128-130; Բեվական և Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի, § 65; Սանդրա Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի, § 45; Ա.-ն ընդդեմ Խորվաթիայի, § 60; Դորդեվիչն ընդդեմ Խորվաթիայի, §§ 141-143; Սոդերմանն ընդդեմ Շվեդիայի, Մեծ պալատ, § 80.
38 ՀՀ Քրեական օրենսգիրք. Հոդված 194, 195, ինչպես նաև առողջության դե ուղղված հանցագործություններ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=153080

կարողացել է դուրս գալ տանից: Տուժողը 2023 թ.-ի հունվարի 23-ին հաղորդում է ներկայացրել ոստիկանությունում, որի ժամանակ նշել է իր նույնասեռական սեռական կողմնորոշման մասին: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Մեկ տարի քննությունից հետո քննիչը որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ: Որոշումը բողոքարկվել է: Միջնորդություն է ներկայացվել նաև ատելության շարժառիթը հաշվի առնելու համար, սակայն մերժվել է այն հիմնավորմամբ, որ ծնողների ընկալմամբ նրանք հիվանդագին երևույթ են բուժել:

Դեպք 12

2023 թ.-ի մարտին դիմողը ճամպրուկով եկել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի տարածք՝ ստանալով սոցիալական աշխատողի խորհրդատվություն: Սոցիալական աշխատողի հետ զրույցի ժամանակ պարզ է դարձել, որ 17 տարեկան անձը ծնողների հետ վիճաբանությունից հետո հավաքել է իրերը և հեռացել տնից: Վիճաբանության առիթ են հանդիսացել հարազատների բացասական վերաբերմունքը վերջինիս արտաքին տեսքի նկատմամբ: Վիճաբանությունները եղել են հարազատների հետ՝ պայմանավորված իր սեռական կողմնորոշմամբ: Մինչ այդ ընտանիքի անդամները պարբերաբար բռնության են ենթարկել տուժողին՝ իր ՍԿԳԻ հիմքով, մասնավորապես՝ վերջիններս սափրել են նրա մազերը, տարբեր տևողությամբ զրկել են ազատությունից: Մեկ անգամ էլ հերթական միջադեպի պատճառով իրենց առանձնատան 2-րդ հարկի պատուհանից դուրս է նետվել: Վերջին միջադեպի պատճառով տանից հեռանալուց հետո, անձը տեղեկատվություն է ստացել, որ ծնողները դիմել են ոստիկանություն՝ նրան անհետ կորած ճանաչելու համար, պարբերաբար զանգել են, սոցիալական ցանցերով սպառնալիքներ են հնչեցրել այն մասին, որ եթե տուն չվերադառնա նրա համար ավելի վատ է լինելու: Տուժողը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 13

2023 թ.-ի ապրիլին տուժողի մայրը ներխուժել է Երևանում գտնվող որդու բնակարան, որտեղ տուժողը բնակվել է զուգընկերոջ հետ: Մայրը վիճաբանել է տուժողի ու նրա զուգընկերոջ հետ: Մայրը տուժողի վերնաշապիկից քաշել է, բռնել ու քաշել է տուժողի մազերից, հարվածներ է հասցրել տուժողի դեմքի շրջանին և մարմնի տարբեր հատվածներին, պատռել է նրա վերնաշապիկը, դրանից հետո սկսել է կրկին հարվածել տուժողի մարմնի տարբեր հատվածներին: Այնուհետև նույնասեռական լինելու պատճառով տուժողի և իր զուգընկերոջ հասցեին հնչեցրել է սպանության սպառնալիքներ: Դեպքից տևական ժամանակ անց բնակարան են ժամանել ոստիկանության աշխատակիցները, ովքեր համոզել են տուժողին և ընկերոջը, որ հաղորդում չներկայացնեն հանցագործության մասին և հրաժարվել են հաղորդումը ընդունելուց: Ոստիկաններից մեկը տուժողի և ընկերոջ հետ առանձնազրույցի ժամանակ վերջիններիս սեռական անձեռնմխելիության վերաբերյալ մանրամասն հարցադրումներ է տվել, այնուհետև, տեղեկանալով, որ տուժողը և իր ընկերը նույնասեռական են, սկսել է սեռական հարաբերություն ունենալու առաջարկներ անել: Միայն հաջորդը օրը տուժողը փաստաբանի հետ գնացել է ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժին և դեպքի վերաբերյալ ներկայացրել է հաղորդում, որ իր սեռական կողմնորոշման պատճառով մոր կողմից ենթարկվել է ընտանեկան բռնության: Ոստիկանությունը

բռնարարի նկատմամբ անհետաձգելի միջոց է կիրառել: Տուժողը հաղորդում չի ներկայացրել հանցագործության մասին:

Դեպք 14

2023 թ.-ի փետրվարին նույնասեռական կնոջ ընտանիքի անդամները տեղեկացել են նրա սեռական կողմնորոշման և նույնասեռ հարաբերությունների մասին: Այնուհետև, նրա ավագ եղբայրը սկսել է վերահսկողություն իրականացնել նրա կյանքի նկատմամբ, սահմանափակել է նրա ազատությունը մոտ մեկ ամսով, հոգեբանական բռնության է ենթարկել, սպառնացել է ֆիզիկական բռնության ենթարկել նրան, ինչպես նաև հաշվեհարդար տեսնել՝ նկուղում փակել նրա զուգընկերուհուն: Դիմողը կարողացել է փախչել տանից և զուգընկերուհու հետ որոշ ժամանակով ապաստարան գտնել ընկերներից մեկի տանը՝ վախենալով, որ եղբայրը կհետապնդի իրենց: Անձը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 15

Դիմողը 2023 թ.-ի հուլիսին իրենց տանը հոր կողմից ընտանեկան բռնության է ենթարկվել: Հայրը տեղեկանալով տուժողի սեռական կողմնորոշման մասին վիճաբանություն է սկսել վերջինիս սեռական կողմնորոշման հարցի վերաբերյալ և երկու անգամ դանակը ձեռքին փորձել է հարվածներ հասցնել տուժողին, սակայն հարվածները չեն դիպչել վերջինիս: Այնուամենայնիվ, ոտքով հարվածելու արդյունքում վնասվել է տուժողի ոտքը, որից հետո հայրը դանակով հարձակվել է իր վրա և ցանկացել է սպանել ու հնչեցրել է բազմաթիվ հայհոյանքներ: Տուժողը այդ ամեն ինչից հետո կարողացել է տանից փախչել և գտնվում է իր ընկերոջ Երևանի տանը: Դեպքից հետո դիմողը հաղորդում է ներկայացրել Կոտայքի մարզի ոստիկանություն և ճանաչվել է որպես տուժող: Դատաբժշկական փորձաքննություն է անցել, սակայն հետո չի ցանկացել մասնակցել գործի քննությանը, ընթացքը հայտնի չէ:

Դեպք 16

Տրանս կինը ժամանակավոր կացարան է տեղափոխվել սեռական կողմնորոշման հիմքով բռնություններից խուսափելու նպատակով: Ամանորն ընտանիքի հետ անցկացնելու համար ժամանակավոր կացարանից մեկնել է տուն: Սակայն ծնողները, անչափահաս քույրը և հարազատները պարբերաբար վիրավորանքներ են հնչեցրել անձի հասցեին, նշել, որ «իրենց խայտառակ է անում», քույրը նշել է, որ դպրոցում խնդիրներ ունի այցելուի սեռական կողմնորոշման պատճառով: 2023 թ.-ի հունվարի 1-9 ընկած ժամանակահատվածում բազմիցս հնչեցրել են սեռական բնույթի հայհոյանքներ, վիրավորանքներ՝ այցելուի հագուստի, մազերի ու գենդերային արտահայտման վերաբերյալ: Այցելուն իր կամքով ևս մեկ անգամ ժամանակավոր կացարանից մեկնել է տուն, որտեղ հորեղբայրը պարբերաբար վիրավորել է այցելուին իր արտաքին տեսքի համար, հայհոյել է, քաշել է շորերից: Ասել է «Էս տանը չի կարող սենց բան լինել», նաև սպառնացել է «եթե փողոցում ծեծեն չզարմանաս, էդ իմ վարձած մարդիկ են, մի անգամ արդեն եղելա»: Արդյունքում ողջ ընտանիքով բռնել են այցելուին և կտրել են մազերը այցելուի կամքին հակառակ:

Դեպք 17

Նույնասեռական անձը նշում է, որ շարունակաբար կոնֆլիկտային հարաբերություններ է ունեցել հոր հետ: Հայրը միշտ վիրավորանքներ է հնչեցրել իր շարժունձևի, նախասիրությունների վերաբերյալ: Պարբերաբար վիճաբանել է, հենց տեսել է, որ նա զբաղվում է կարունձևով՝ նշելով. «մի քիչ տղավարի քեզ պահի, հերիք է ղզիկական բաներ անես»: Անձը դիմել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի սոցիալական աշխատողին, քանի որ հայրը նաև արգելել է աշխատել կամ ուշ ժամերի տնից դուրս գալ: Անձը նշում է, որ նաև եղել են հրմշտոցներ, և անձին վախեցնելու նպատակով հայրը նաև իրեր է ջարդել:

Դեպք 18

Բիսեքսուալ կինը ընտանեկան բռնության է ենթարկվել հոր կնոջ կողմից: Վերջինս փորձ է արել խեղդել նրան: Անձը նշում է, որ վերջին դեպքին միացել է նաև հայրը և գոտիով ծեծել նրան, ու սպառնացել, որ կսպանեն ու կվնասեն իր ընկերներին: Անձը փախել է տնից, երբ համոզել են հետ վերադառնալ, նա հիշեցրել է իրեն խեղդելու մասին: Անձի հոր կինը ասել է, որ «նման բան չի եղել, իսկ ինչ եղել է քո լավի համար ա»: Այնուհետև, ծնողները, իմանալով անձի սեռական կողմնորոշման մասին, սկսել են սպառնալ և ճնշել նրան: Սպառնացել են, որ հոգեբույժի ու սեքսոլոգի կտանեն, որ բուժեն իրեն: Հայրը անձին ասել է՝ «ընտրի կամ ընտանիքդ կամ էդ աղջիկը, բայց հաշվի առ, որ գիտենք ուրա ապրում, մորը կասենք, թե ինչ այլասեռված է իրա աղջիկը»: Անձը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 19

Անձի մայրը իմանալով նրա բիսեքսուալ սեռական կողմնորոշման մասին սկսել է ճնշել նրան, սպառնալ, որ ինքնասպանություն կգործի: Հերթական սպառնալիքներից հետ մայրը վերցրել է ժավելը և խմել շահառուի ներկայությամբ՝ առաջացնելով այցելուի մոտ մեղքի զգացում և պատճառելով հոգեկան տառապանք: Նա սպառնացել է, որ անձի ընկերների ծնողներին կասի ընկերների սեռական կողմնորոշումների մասին, նաև կգտնի բոլորին ու կվնասի: Նախկինում անձը նաև ենթարկվել է ֆիզիկական բռնության մոր կողմից: Անձը դիմել է իրավապահ մարմիններին: Հրաժարվել են հաղորդում ընդունել, այնուհետև Օմբուդսմենի միջամտությամբ ստիպված հաղորդում են ընդունել, սակայն իրավապահները համոզել են տուժողին, որպեսզի հաղորդում չներկայացնի՝ ասելով, թե մայրդ է, անհանգստացել է և այլն: Որոշ ժամանակ անց տուժողը հրաժարվել է հաղորդումից:

Դեպք 20

Անձի մայրը և քեռին իմանալով նրա նույնասեռական սեռական կողմնորոշման մասին սկսել են ֆիզիկական բռնություն գործադրել նրա նկատմամբ՝ «ուղղելու» նպատակով, նշելով, որ դա խայտառակություն է: Մայրը նաև թաքցրել է անձի իրերը, այդ թվում՝ անձը հաստատող փաստաթղթերը: Անչափահաս այցելուն փախել է տնից և սկսել է բնակվել փողոցում: Անձը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 21

Տրանս տղամարդու մայրը և եղբայրը, իմանալով կանանց հետ վերջինիս ինտիմ հարաբերությունների մասին, սկսել են ֆիզիկական բռնություն գործադրել նրա նկատմամբ՝ ուղղելու նպատակով շեշտելով, որ դա խայտառակություն է: Մայրը նաև թաքցրել է այցելուի իրերը այդ թվում անձը հաստատող փաստաթղթերը: Անչափահաս այցելուն փախել է տնից և սկսել է բնակվել փողոցում: Անձը չի դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 22

Անձի հայրը, իմանալով նույնասեռական կնոջ սեռական կողմնորոշման մասին, սկսել է ծեծել նրան և վիրավորանքներ հնչեցնել: Անձի սեռական կողմնորոշման մասին բացահայտել է նրա ընկերուհին: Խուսափելու համար հետագա բռնություններից տուժողը փախել է և ապրում է փողոցում:

Դեպք 23

Անձի քույրը բացահայտել է նրա ընկերուհու սեռական կողմնորոշումը ծնողների և քեռու մոտ: Արդյունքում, անձի ընկերուհուն, որը բնակվում էր իրենց տանը, հայրը և քեռին վիրավորել են, հայհոյել և դուրս են հանել տանից, ապա՝ սպառնացել, որ կսպանեն, եթե շարունակի իրենց աղջկա հետ շփումը: Անձի հայրը զանգահարել է նրա ընկերուհու ծնողներին և հայտնել է նրանց՝ իրենց աղջկա սեռական կողմնորոշման մասին: Անձը երբ Փինքի աշխատակիցների հետ գնացել է իրերը վերցնելու, հայրը սկսել է հայհոյել՝ ասելով «գոնե առնանդամով մեկի հետ լինեիր, ոչ թե էդ դուսպրծածի»: Այդ ընթացքում հայրը դուռը փակել է և չի թողել տանը գտնվող մարդկանց դուրս գալ: Այնուհետև, երբ այցելուն գոռացել է, որ ոստիկանություն կդիմի, հայրը բացել է դուռը ու զայրույթից վերցրել խոհանոցային դանակը: Այցելուի հայրը նշել է նաև. «տե՛ս, էդ ընկերուհիդ միամիտ չմեռնի, օրինակ, հանկարծակի մեքենայի տակ ընկնի, ինքը իմ ձեռքովա մեռնելու»: Անձը չի ցանկացել բողոք ներկայացնել:

Դեպք 24

Դիմողի զուգընկերոջ հայրը և եղբայրը իր ծնողներին տեղեկացրել են իր սեռական կողմնորոշման մասին, ստիպել, որպեսզի նա ծնողներին ցույց տա իր զուգընկերոջ հետ նամակագրությունը, ինչից հետո հայրը մի քանի անգամ հարվածել է նրան և դուրս հանել տնից:

Դեպք 25

Անձը գեյ է, ով տուն է տարել անչափահաս զուգընկերոջը: Զուգընկերոջ մայրը, բացահայտելով որդու տեղը, գնում է դիմողի տուն, բացահայտում է ծնողների ներկայությամբ անձի սեռական կողմնորոշումը և սպառնում սպանել: Անձի ծնողները դուրս են վռնդում տնից երկուսին էլ: Զուգընկերոջ մայրը պարբերաբար նամակներ է գրում որտեղ նշում է. «դու գիտես, որ ես կարամ գտնեմ ձեզ, որտեղ բռնեցի դրան սպանելու եմ»:

Դեպք 26

Դիմողը հաղորդում է ներկայացրել հանցագործության մասին, նշելով, որ 2023 թ. նոյեմբերին Երևան քաղաքի բնակարանում իր սեռական կողմնորոշման պատճառով, իր մազերի և արտաքին տեսքի պատճառով, մայրը ձեռքի ափով մեկ անգամ հարվածել է իր դեմքին, որից հետո մոտեցել է և ձեռքերով մի քանի անգամ հարվածել է գլխին՝ պատճառելով ֆիզիկական ցավ: Բացի այդ մոտ երկու շաբաթ առաջ՝ տանը, հայրը նույն պատճառով ծեծի է ենթարկել իրեն՝ ձեռքերով և բռունցքով մի քանի անգամ հարվածելով գլխին և ուսերի շրջանին, պատճառելով ֆիզիկական ցավ: Կիրառվել է նախազգուշացում ծնողների նկատմամբ:

Դեպք 27

Անձը տրանս տղամարդ է, ով պարբերաբար բռնության է ենթարկվել ընտանիքի անդամների կողմից: Մասնավորապես, նրա հայրը հնչեցրել է սեռական բնույթի հայհոյանքներ, սպառնալիքներ, գողացել է անձի կատանան (թրի տեսակ), պահել է իր բարձի տակ և սպառնացել է, որ կսպանի անձի մորը: Միևնույն ժամանակ սպառնալիքներ է հնչեցրել, որ կվնասի անձի շանը, նշելով որ «հաջորդ անգամ քեզ վատ պահես շանդ կսատկացնեմ»: Մայրը, իմանալով անձի գենդերային ինքնությունը, սպառնացել է ինքնասպանություն գործել, վազել է փողոց և գոռացել է, որ կնետվի մեքենայի տակ, եթե անձը չփոխվի, քանի որ դա վնասում է իրենց ընտանիքի պատիվը: Դիմել է սոցիալական աշխատողի, սակայն ոչ իրավապահ մարմիններին:

Դեպք 28

Անձի եղբայրը տեղեկացել է անձի սեռական կողմնորոշման մասին և սպառնացել, որ չփոխվելու դեպքում տեղյակ կպահի ծնողներին և այդ ամենը կունենա բացասական հետևանքներ իր համար:

Դեպք 29

Բիսեքսուալ կնոջ հայրն ունի թմրանյութերից կախվածություն: Անձը հոր կողմից ենթարկվել է ընտանեկան բռնության որոշակի պարբերականությամբ: Հոր ընկերներից մեկը բացահայտելով անձի սեռական կողմնորոշումը, զանգել և տեղեկացրել է անձի հորը: Հայրը, գնալով անձի աշխատավայր, գոռացել և ողջ աշխատակազմին տեղեկացրել է անձի սեռական կողմնորոշման մասին, նշելով, թե անձի ընկերուհին բռնության է ենթարկում անձին և վաճառում նրան՝ գումար վաստակելու համար:

Դեպք 30

Անձը դպրոցում բուլինգի է ենթարկվել իր սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկությունների տարածման պատճառով: Անձի հայրը, իմանալով վերջինիս սեռական կողմնորոշման մասին, եկել է տուն, կանչել է դստերը և ապտակել:

Դեպք 31

Անչափահաս ասեքսուալ անձը պարբերաբար մոր և հոր կողմից ենթարկվել է անտեսման, ճնշումների՝ իր արտաքին տեսքի, շարժունակի և հագուկապի համար: Մայրը պարբերաբար դիտողություններ է արել եղունգները և մազերը կտրելու համար, ինչպես նաև պարբերաբար շեշտել է, որ ժամանակն է՝ անձը ընկերուհի ունենա:

Դեպք 32

Անձը բիսեքսուալ կին է: Նա ենթարկվել է ընտանեկան բռնության մոր կողմից, վերջինս հարվածել է անձի թևին, քաշքշել է, սպառնացել է, որ կսպանի դստերը, ինչպես նաև ասել է. «կգնամ ընկերուհուդ պադիեզդի դեմը՝ ոտերը կջարդեմ, քեզ էլ կսպանեմ ընկերուհուդ էլ»: Մայրը խլում է անձի ողջ աշխատավարձը՝ պատճառաբանելով, թե անձի պատճառով են տեղափոխվել այլ տարածք և պետք է տան վարձը վճարի: Մայրը նաև տարբերակված վերաբերմունք է դրսևորում աղջկա նկատմամբ՝ ի տարբերություն քրոջ:

Ընտանեկան բռնության դեպքում պետության անելիքները շատ ավելի բազմաշերտ են և բարդ: Մի կողմից պետությունը պետք է հասարակության շրջանում իրազեկման աշխատանք իրականացնի, որպեսզի հասարակության գիտակցության համար անընդունելի լինի բռնության գործադրմամբ «դաստիարակման» մեթոդը և միևնույն ժամանակ անձինք տեղեկացված լինեն սեռականության մասին և չկատարեն այնպիսի գործողություններ, որոնք կարող են խեղել իրենց ընտանիքի անդամների հոգեբանությունը՝ հատկապես, երբ խոսքը գնում է անչափահասների մասին: Մյուս կողմից իրավակիրառ մարմինները պետք է ունենան բավարար զգայունություն և կարողություն՝ աշխատելու ընտանեկան բռնության ենթարկված ԼԳԲՏ անձանց հետ այնպես, որ լինեն վստահելի և արդյունավետ պաշտպանություն ու աջակցություն տրամադրող մարմին: Ներկայումս, ոչ միշտ են ոստիկանները բարեխղճորեն մոտենում ընտանեկան բռնության ենթարկված անձանց: Նկարագրված օրինակներից մեկում, անգամ ոստիկանը, ով իմացել է, թե ինչ է ընտանեկան բռնության պատճառը, սեռական բնույթի առաջարկներ է արել տուժողին, ինչը, իհարկե արդեն կարելի է գնահատել որպես անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք ուղղակիորեն պետության ներկայացուցչի կողմից, ինչը անընդունելի է թե անհատական դեպքում, թե որպես ազդեցություն ընդհանուր առմամբ ոստիկանության նկատմամբ: Մեկ այլ դեպքում ոստիկանությունը ընդհանրապես հրաժարվել է հաղորդում ընդունել, ինչը հետագայում պատճառ է դարձել, որպեսզի անձը չցանկանա դիմել իրավական պաշտպանության: Շատ դեպքերում ոստիկանները մեղադրում են ընտանիքի անդամների դեմ բողոք ներկայացնող անձանց, ինչն արդեն իսկ բռնության ենթարկված անձին կարող է էլ ավելի ճնշել և առաջացնել ծանր հոգեկան ապրումներ: Ի վերջո, ոստիկանության ոչ աջակցող, կրկնազոհացնող վերաբերմունքի արդյունքն է, որ ընտանեկան բռնության տուժողներից շատ քչերն են ցանկություն հայտնում դիմելու իրավապահ մարմիններին: Միևնույն ժամանակ, տարեցտարի աճում են ընտանեկան բռնության թվերը: Ոստիկանության խտրական վերաբերմունքը սնվում է նաև հասարակության կողմից բռնությունն արդարացնող և ԼԳԲՏ

անձանց չընդունող վերաբերմունքից: Այսինքն, ոստիկանները ևս օգտվում են նույն անպատժելիության մթնոլորտից, որին դեմ չէ հանրությունը և որը քննադատության չի արժանանա:

Բացի այդ, պետությունը ոչ միայն չի իրականացնում հասարակության շրջանում որևէ իրազեկման աշխատանք սեռականության և հանդուրժողականության վերաբերյալ, այլ նաև չի կանխում կամ քննադատում այնպիսի հանրային խոսքը, որը բավականին մեծ պարբերականության հասարակությանն է տրամադրում հակագիտական և խտրական տեղեկություններ առ այն, թե իբրև սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը որևէ պրոպագանդայի արդյունքն են և այն կարելի է փոխել կամ «բուժել» ինչ-ինչ միջոցներով:

Սա, իհարկե, պետության ձախողումն է պաշտպանելու անձանց ընտանեկան բռնությունից՝ ապահովելու մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի իրացումը:

Ֆիզիկական ներգործություն անծանոթ անձանց կողմից

Դեպք 33

2023 թ.-ի ապրիլին՝ երեկոյան, Երևան քաղաքի Հանրապետության հրապարակի մետրո մտնելուց հետո, մի անծանոթ տղամարդ հետապնդել է տուժողին իր արտաքին տեսքի պատճառով և մետրոյի մեջ մոտեցել է նրան, բռունցքով հարվածել վերջինիս դեմքի ծնոտային հատվածին: Հարվածի արդյունքում տուժողը ընկել է գետնին և ստացել է մարմնական վնասվածք: Ներկայացվել է հաղորդում հանցագործության մասին, սակայն քրեական վարույթ չի նախաձեռնվել, իսկ տուժողը չի ցանկացել բողոքարկել:

Դեպք 34

2023 թ.-ի ապրիլին՝ գիշերը, Ճապոնիայի դեսպանատան մոտակայքում հարձակում է եղել նույնասեռական տուժողի վրա՝ ՍԿԳԻ հիմքով: Անձը հետևից մոտեցել է տուժողին և հարվածել նրան, որից հետո շարունակել է ծեծի ենթարկել տուժողին՝ ասելով, որ նա տրանս անձ է ու դրա համար է ծեծում. չնայած տուժողը չի նույնականանում որպես տրանս անձ: Տուժողը ստացել է վնասվածք քթի հատվածում: Ըստ նախնական տվյալների՝ ստացել է հարված նաև որովայնի հատվածում, որի պատճառով ունենալով ցավեր տուժողը դիմել է բժշկական հաստատություն դեպքից երկու օր անց: Տուժողի մոտ հայտնաբերվել է կույրաղիքի բորբոքում և ստամոքսի ինֆեկցիա, որը, միգուցե, եղել է հարձակման պատճառով: Տուժողը հաղորդում է ներկայացրել ոստիկանություն և հարուցվել է քրեական գործ:

Դեպք 35

Երեկոյան 5-7 արական սեռի ներկայացուցիչներ մտել են հոսթել մահակով, սկսել են հայերենով գոռալ ու կռվել օտարերկրացի նույնասեռական տղամարդու

հետ, որը բնակվում էր տվյալ հոսթելում: Խմբի մեջ եղել է նաև հոսթելի սեփականատիրոջ որդին: Բռնարարները հարձակվել են անձի վրա ու քաշքշել: Սակայն այցելուն, չհասկանալով հայերեն լեզուն, չի հասկացել, թե ինչ են ուզում իրենից, միայն լսել է «գալուբոյ» բառը: Անձը վստահ է, որ իրավիճակը կապված է իր սեռական կողմնորոշման հետ: Պահակը չի թողել, որ վնասեն իրեն: Անձն ամբողջ գիշեր վախից չի քնել և առավոտյան լքել է տարածքը՝ վախենալով, որ նորից կհարձակվեն: Տուժողը նաև վախեցել է դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 36

Դիմողը սեռական ծառայություններ մատուցող տրանս կին է: Նա համացանցի միջոցով ծանոթացել է հաճախորդի հետ, որը ներկայացել է որպես ազգությամբ ռուս: Դիմողը գնացել է հաճախորդի տուն, պարզվել է, որ հաճախորդը ռուսազգի չի եղել, այլ հայազգի է եղել: Նա ծաղրական տոնով է խոսել դիմողի հետ, դիմողից պահանջել է ցույց տալ սեռական օրգանը: Դիմողը չի ցանկացել լարել իրավիճակը, այլ սիրալիր կերպով փորձել է ստանալ իր ծառայության գումարը և հեռանալ՝ վախենալով հետագա կոնֆլիկտից և բռնությունից: Սակայն հաճախորդը հրաժարվել է տալ գումարը, քաշքշել է դիմողին, փորձել է ցած գլորել աստիճանավանդակից: Դիմողը կարողացել է դուրս պրծնել և ահազանգել է իրավապահ մարմիններին: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ֆիզիկական բռնության դեպքերն անծանոթ անձանց կողմից էլ ավելի վտանգավոր են հասարակության համար, քանի որ, ուղղված են ոչ թե անհատ անձի դեմ, այլ իրենց իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ տարբերվող անձանց դեմ: Հետևաբար, տուժողը պատահականորեն է դարձել ագրեսիայի զոհ և իր փոխարեն կարող էր լինել ցանկացած այլ անձ, ով կասոցացվեր ԼԳԲՏ համայնքի հետ: Տարիներ շարունակ անծանոթ անձանց կողմից տասնյակ հարձակումների դեպքեր են արձանագրվել, սակայն որևէ դեպք արդյունավետ քննության չի ենթարկվել և հանցավորը համաչափ պատասխանատվության չի ենթարկվել: Այս խնդրի մասին պետական մարմինները պարբերաբար տեղեկացվել են, սակայն կրկին որևէ միջոց չի ձեռնարկվել իրավիճակը արդյունավետ կերպով հասցեավորելու համար: Այսինքն, պետությունը կրկին ձախողել է միջոցներ ձեռնարկելը ապահովելու համար արդարադատություն, անվտանգ միջավայր առօրյա կյանքում: Արդյունքում ձևավորված անպատժելիության մթնոլորտը հոմոֆոբ անձանց շրջանում ստեղծում է ինքնավստահություն առ այն, որ կարող են գործադրել բռնություն և որևէ պատասխանատվության չենթարկվել:

Կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու սպառնալիքներ

Դեպք 37

Դիմողը, որը սեռական ծառայություններ մատուցող տրանս կին է, հաճախորդի հետ եկել է իր բնակարան: Ծառայությունը ստանալուց հետո հաճախորդը հրաժարվել է հեռանալ, պահանջել է իր հետ սեռական հարաբերություն ունենալ:

Տրանս կինը, փորձելով ազատվել հաճախորդից, նրան համոզել է միասին գնալ խանութ: Շենքից դուրս գալով՝ կինը նորից մտել է շենք և փակել դուռը՝ հաճախորդին դրսում թողնելով: Հաճախորդը վազելով մոտեցել է դռանը, սկսել հարվածել դռանը, գոռգոռացել և հայհոյել, ինչպես նաև ժեստերով ցույց է տվել, որ կնոջ վիզը կկտրի, երբ կինը նայել է պատուհանից:

Դեպք 38

Տրանս կինն իր զուգընկերոջ հետ 2023 թ.-ի օգոստոսին՝ գիշերը, կանգնած են եղել Երևանի փողոցներից մեկում: Նրանց են մոտեցել երկու տղամարդ՝ սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնելով դիմողների հասցեին՝ վերջիններիս՝ տրանս անձ լինելու պատճառով: Տղամարդկանց ձեռքին եղել են գարեջրի շշեր: Իրենց գենդերային ինքնության պատճառով վիճաբանելով դիմողի և իր զուգընկերոջ հետ՝ նրանց ուղղությամբ նետել են գարեջրի շշերը, այնուհետև, սեռական բնույթի հայհոյանքներ ուղղելով վերջիններիս հասցեին, դիմել են փախուստի: Դեպքից անմիջապես հետո տուժողը դիմել է ոստիկանության Արաբկիրի բաժին: Տուժողը հետագայում չի ցանկացել շարունակել գործի ընթացքը, չի ներկայացրել գործը քննող մարմնին:

Դեպք 39

Դիմողը 2023 թ.-ի սեպտեմբերին անձը դիմել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ և հայտնել, որ նույն օրը իր զուգընկերոջ նախաձեռնությամբ պայմանավորվել են Երեկոյան հանդիպել Դիլիջան-Երևան մայրուղու սկզբնամասում: Նշված ժամին դիմողը գնացել է պայմանավորված վայր, սակայն այնտեղ ավտոմեքենայով նրան սպասել են զուգընկերոջ հայրը և հոր ընկերը: Վերջիններս բռնության գործադրմամբ նստեցրել են մեքենա, որտեղ գտնվել է նաև զուգընկերը: Զուգընկերոջ հոր ընկերը դիմողին ատրճանակով սպառնացել է, պատմել վերջինիս և իր ընկերոջ որդու հարաբերությունների բնույթի մասին, զենքի սպառնալիքով ստիպել է, որ դիմողը բացի իր և զուգընկերոջ նամակագրությունը: Հավաստիանալով դիմողի և ընկերոջ որդու հարաբերությունների նույնասեռական բնույթի մեջ՝ վերջինս ձեռքով երկու անգամ հարվածել է դիմողի դեմքին, պատճառելով ֆիզիկական ուժեղ ցավ, այնուհետև տեղեկացրել է դիմողին, որ նրան տանելու են մի վայր, որտեղ նրա նկատմամբ սեռական բնույթի բռնի գործողություն է կատարելու ինչ-որ մեկը, այդ կերպ փորձել են հոգեբանական ճնշում գործադրեն դիմողի նկատմամբ: Դիմողի զուգընկերոջ հոր ընկերը, ներկայանալով որպես ոստիկանության աշխատակից, դիմողին տեղեկացրել է, որ ոստիկանություն է տանելու և իր նկատմամբ քրեական վարույթ է նախաձեռնելու, այդ ամբողջ ընթացքում զենքը պահելով դիմողի վրա: Այնուհետև դիմողին ստիպել են հայտնել իր բնակության վայրի հասցեն, հակառակ պարագայում սպառնալով նրան ձորից նետել: Դիմողը ստիպված հայտնել է բնակության վայրի հասցեն, որից հետո զուգընկերոջ հայրը և ընկերը նրան ստիպողաբար տարել են իր տուն, դիմողի ծնողների ներկայությամբ ստիպել են բացել հիշյալ նամակագրությունը, և ասել. «տեսեք, որ Դուք տղա չունեք, Ձեր տղան գյոթ է», այնուհետև հեռացել են դիմողի տանից: Նույնասեռական լինելու պատճառով դիմողի հայրը երկու անգամ հարվածել է վերջինիս և վտարել տնից: Երբ դիմողը դուրս է եկել շենքից նրա զուգընկերոջ հոր ընկերը դեռ այնտեղ է եղել, և տուժողից պահանջել է ծնկաչոք ներողություն խնդրել իրենից, որից հետո տուժողը փախել և մտել է շենքի մուտք,

և գիշերել է շենքի մուտքում և հաջորդ օրը կարողացել է փախչել և գալ Երևան: Դիմողը մինչ օրս ստանում է սպառնալիքներ իրեն սպանելու վերաբերյալ: Տուժողը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին:

Դեպք 40

Դիմողը տրանս կին է, ով կատարում է սեքս աշխատանք, 2023 թ.-ի սեպտեմբերի 10-ի լույս 11-ի գիշերը սոցիալական կայքի միջոցով ծանոթացել է հաճախորդի հետ և պայմանավորվել են հանդիպել իր տանը: Նշված ժամին հաճախորդը այլ տղամարդու հետ եկել է դիմողի տուն: Դիմողը, տեսնելով, որ հաճախորդը մենակ չէ, հրաժարվել է մատուցել ծառայություն, սակայն հաճախորդը պնդել է, որ երկուսին էլ ծառայություն մատուցի, սակայն դիմողը հրաժարվել է և փակել դուռը: Դրանից հետո բռնարարը ոտքով հարվածելով բացել է դուռը և տեսել է, որ դիմողի տանը այլ տրանս կին է գտնվում, և սկսել է նրանց գենդերային ինքնության վերաբերյալ հայհոյանքներ հնչեցնել: Միայն դիմողի կողմից ոստիկանություն զանգահարելու մտադրության մասին իմանալուց հետո բռնարարը և իր ընկերը դիմել են փախուստի, սակայն ոստիկանները հայտնաբերել են և տարել են ոստիկանության բաժին: Գործի քննությունը ընթացքի մեջ է:

Դեպք 41

Անձը տրանս կին է, ում հանդեպ հետապնդումներ և սպառնալիք է սկսվել օգոստոսի 21-ից՝ այլ տրանս կնոջ սպանությունից հետո: Անձին հիմնականում անձնական նամակներ են գրել օնլայն հարթակներում, մասնավորապես նշելով. «դու էլ ես սենց սատկելու», «սպասի հաջորդը դու ես», «քո ու քո նմանների հետ այ սենց ենք անելու»: Անձը նաև սոցիալական աշխատողի հետ քննարկելիս նշել է, որ վերջին ժամանակները հարևանները ևս հավաքվում էին իր պատուհանի տակ հայհոյախառը խոսում և փորձում էին նայել պատուհանից ներս:

Դեպք 42

Անձը նույնասեռական կին է, Երևան քաղաքի այգիներից մեկում շփվել է ԼԳԲՏ համայնքի այլ ներկայացուցիչների հետ, այդ ընթացքում համայնքի ներկայացուցիչները փորձել են անձի ուշադրությունը շեղել և գողացել են հեռախոսը: Անձը, հասկանալով, որ հեռախոսը գողացել են, ասել է, որ կգնա ոստիկանություն, ինչի արդյունքում համայնքի ներկայացուցիչներից մեկը սպառնացել է, ասելով. «եթե մենթ ես բերել, կպիսկեմ»:

Այնուհետև անձի զուգընկերը, ում հետ ծանոթացել է այգում, ասել է, որ իր համար պետք է վարկ վերցնի անձը՝ ասելով. «եթե չվերցնես նշանակում է ինձ չես սիրում»:

Այնուհետև անձին տեղեկացրել են, որ նա չի կարող իսկական լեսբի կոչվել, քանի դեռ նա սեռական հարաբերություն չի ունեցել այգուց որևէ լեսբիի հետ, որտեղ նա պետք է «պասիվ» դերում լինի:

Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով սպառնալիքների դեպքերը ևս պետության պատշաճ արձագանքին չեն արժանանում, ինչի մասին են վկայում նաև բռնությունների դեպքերը, որոնք կարող էին առավել

նվազ լինել սպառնալիքների դեպքում համաչափ պատասխանատվության և պատժի պարագայում: Հանցավորները օգտվում են այն հանգամանքից, որ ոստիկանություն դիմելով տուժողը պետք է հայտնի իր հասցեին հնչած սպառնալիքի պատճառների մասին՝ բացահայտելով իր սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը, ինչը տուժողին բարենպաստ իրավիճակում չի դնի: ԼԳԲՏ անձինք, չունենալով վստահություն ոստիկանության նկատմամբ, անգամ սպառնալիքների պարագայում խուսափում են դիմել իրավապահ մարմիններին և բացահայտել իրենց ինքնությունը՝ ակնկալելով պաշտպանություն: Հաճախ մարդիկ նախընտրում են շարունակել ապրել վախի և ճնշվածության մթնոլորտում:

Մասնավոր կյանքին վերաբերող տեղեկատվության տարածում

Դեպք 43

2023 թ.-ի մարտին դիմողը Վանաձորի զինկոմիսարիատում անցել է առողջական վիճակի հետազոտում՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու նպատակով: Հետազոտման ընթացքում դիմողը հանձնաժողովի կազմում ընդգրկված հոգեբույժին հայտնել է իր նույնասեռական լինելու մասին: Հոգեբույժը, դիմողի առողջական վիճակի մասին համապատասխան գրառում կատարելով, վերջինիս ուղղորդել է տարածքային զորակոչային հանձնաժողովի նախագահի մոտ: Դիմողի պնդմամբ, հանձնաժողովի նախագահը նրան ոչ պատշաճ հարցեր է ուղղել՝ կապված վերջինիս սեռական կողմնորոշման հետ: 2023 թվականի ապրիլին զինկոմիսարիատից զանգահարել են դիմողի հորը և նրան տեղեկացրել են դիմողին ուղեգիր տրամադրելու մասին: Հայրը ճշտել է ուղեգրելու հիմքը, որին ի պատասխան՝ զինկոմիսարիատի աշխատակիցը հայտնել է դիմողին «Ավան» հոգեկան առողջության կենտրոն ուղղորդելու պատճառի՝ նույնասեռական լինելու մասին և զարմացել է, որ դիմողի հայրը չգիտեր այդ մասին: Այդ պահից դիմողը վիճաբանություններ է ունեցել հոր հետ: 2023 թվականի մայիսին դիմողը, ըստ ուղեգրի, դիմել է հոգեկան առողջության կենտրոն և նույն օրը վերադարձել է Վանաձոր: Նույն օրը հայրը կրկին վիճաբանել է դիմողի հետ՝ ներկայացնելով պայման այն մասին, որ կամ դիմողը զորակոչային հանձնաժողովին դիմում է ներկայացնում իրականում նույնասեռական չլինելու մասին և «գնում ծառայում, տղամարդ դարձած վերադառնում է», կամ ինքը տատի հետ միասին հեռանում է տնից և թողնում է, որ դիմողն իր կարիքները ինքնուրույն հոգա: Անձը չի դիմել իրավապահ մարմինների:

Զորակոչի կամ զինվորական ծառայության ընթացքում անձի սեռական կողմնորոշման բացահայտումն ու այդ մասին տեղեկության տարածումը այլոց շրջանում տարածված երևույթ է և տարբեր հետևանքներ է ունենում տուժողների նկատմամբ:

Մասնավորապես, ինչպես նկարագրված է նախորդ բաժնում բանակում արձանագրված մեկ այլ դեպքում, ծառայակիցների կողմից անձի սեռական կողմնորոշման մասին տեղեկանալը հանգեցնում է տարաբնույթ ճնշումների

և բռնությունների, ներառյալ՝ սեռական: Հրամանատարական կազմի կողմից անձանց նույնասեռական կամ բիսեքսուալ սեռական կողմնորոշման մասին տեղեկանալը ևս անհետևանք չի մնում. հիմնականում տուժողները հնարավորություն չեն ունենում շարունակելու զինծառայությունը, փոխարենը տեղափոխվում են առանձնացված վայրեր և այնտեղ ապրում մինչև ծառայության ժամկետի ավարտը՝ այդ ընթացքում բախվելով խտրականության, պիտակավորման, ծաղրի և այլ ճնշումների: Անձի սեռական կողմնորոշման մասին ընտանիքի անդամներին տեղեկացնելը ևս բացառիկ երևույթ չէ: Իհարկե, նման տեղեկությունը ընտանիքի անդամներին հայտնելուց հետը տուժողները խնդիրներ են ունենում նաև ընտանիքում:

Այսպիսով, պետությունը այստեղ մարդու մի շարք հիմնարար իրավունքներ է խախտում՝ ձախողելով փաստացի իր բոլոր պարտավորությունների կատարումը: Մի կողմից պետության ներկայացուցիչների կողմից տարածվում է անձի մասնավոր կյանքին վերաբերող տեղեկատվություն, այնուհետև նրան չի տրամադրվում որևէ պաշտպանություն տեղեկության տարածման հետևանքով թե ընտանիքում, թե բանակում տուժողի նկատմամբ դրսևորված բռնությունները կանխելու կամ պատասխանատվության ենթարկելու համար:

Ակնհայտ է, որ պետությունն այստեղ հստակ անելիք ունի նախ և առաջ զինվորական հրամանատարության կրթության, պատրաստվածության բարձրացման և կարողությունների զարգացման առումով՝ ապահովելու համար անձանց իրավունքների պաշտպանությունը զինված ուժերի հետ հարաբերություններում: Զինվորական ծառայությունը, մասնավորապես, անձի պարտավորությունն է և ենթադրում է մասնակցություն պետության անվտանգության ապահովմանը, ինչը պետք է իրականացվի արժանապատիվ պայմաններում, իրավունքների պաշտպանության ապահովմամբ: Պետության խնդիրը պետք է լինի հոգալ յուրաքանչյուր զինծառայողի ֆիզիկական և հոգեկան ամբողջականության մասին և ապահովել ներքին անվտանգությունը, համերաշխությունը և բանակի ամրությունը: Հակառակ դեպքում՝ թե իմաստազրկվում է զինծառայությունը, և թե արժեզրկվում է պետության անվտանգության ապահովումը այն պարագայում, երբ պետության կողմից հրահրվում է խտրական, թշնամական վերաբերմունք սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ տարբերվող անձանց նկատմամբ:

Դեպք 44

Դիմողը բիսեքսուալ անձ է, ամուսնացած է և ունի երեխա, նաև նա սեռական հարաբերություն է ունեցել տղաների հետ: 2023 թ.-ի դեկտեմբերին տելեգրամյան ալիքով դիմողի ֆեյսբուքյան էջից անծանոթ անձը վերցրել է վերջինիս լուսանկարը, որտեղ պատկերված է դիմողը, իր կինը և երեխան: Լուսանկարը տեղադրվել է տելեգրամյան ալիքում Արմ Գեյ-69 խմբում և նկարի տակ գրվել է՝ տեսնես կինը տեղեկացված է, որ իր ամուսինը տղաների հետ ունենում է սեռական հարաբերություն: Այդ կերպ խախտվել է դիմողի անձնական կյանքի անձեռնմխելիությունը, բացահայտելով անձի սեռական կողմնորոշումը: Տուժողը չի ցանկացել դիմել ոստիկանություն:

Նկարագրված դեպքը եզակի դեպք չէ: «Տելեգրամ» հավելվածում ստեղծվել է

խումբ, որտեղ հետապնդում է սկսվել ԼԳԲՏ անձանց նկատմամբ. մասնավորապես, տարածվել են անձանց անձնական լուսանկարները, տեղեկություններ նրանց իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման մասին և գրել խտրականության ու բռնության կոչեր, վիրավորանքներ, նվաստացուցիչ արտահայտություններ: Հիշեցնենք, որ սույն զեկույցի կյանքի իրավունքի խախտումներին վերաբերող բաժնում ներկայացված ինքնասպանության դեպքում ևս անձի վերաբերյալ տեղեկություններ էին տարածվել նույն ալիքում, ինչը լուրջ խնդիրներ էր առաջացրել իր կյանքում և ի վերջո հանգեցրել ինքնասպանության: Մասնավոր կյանքին վերաբերող տեղեկությունների տարածման միջոցով անձանց թիրախավորելու այս երևույթը, որը արդեն իսկ ողբերգական հետևանք է ունեցել, փաստացի դուրս է պետության ուշադրությունից և շարունակում է վտանգ սպառնալ ԼԳԲՏ անձանց կյանքին և առողջությանը:

Շատ անձինք են պարբերաբար տուժում սոցիալական կայքերում և հավելվածներում անձնական կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումից, ինչի աղբյուրը բացահայտել հնարավոր չի լինում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կեղծ օգտահաշիվներով են տեղեկությունները տարածվում: Այնուամենայնիվ, անձնական տեղեկատվության տարածման դեպքեր են լինում նաև այնպիսի անձանց կողմից, ում ինքնությունը պարզ է: Ինչպես նշվեց, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վերաբերյալ տեղեկատվության տարածումը հանգեցնում է անձի մեկուսացման մի կողմից հասարակության շրջանում, որը տարբեր միջավայրերում պիտակավորում և տարբեր հասարակական հարաբերություններում խտրականացնում է ԼԳԲՏ անձանց և մյուս կողմից ընտանիքում, որտեղ ԼԳԲՏ անձինք բախվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական և տնտեսական բռնության: Արդյունքում տուժողը հնարավորություն չի ունենում լիարժեք մասնակցել հասարակական կյանքին, սոցիալիզացվել, ապրուստ վաստակել, հավասարապես սոցիալական պայմաններ ապահովել իր համար: Ընտանեկան բռնությունը հատկապես վտանգավոր է անչափահաս անձանց պարագայում, ովքեր հիմնականում հասանելիություն չունեն որևէ տեսակի աջակցության իրավապաշտպանների կողմից, իսկ հասանելիության դեպքում առկա են որոշ օրենսդրական խոչընդոտներ, որոնք թույլ չեն տալիս ամբողջ ծավալով իրականացնել շահերի պաշտպանություն: Իսկ խնամակալության մարմինները կրում են նույն խտրական, մեկուսացնող և բացառող մոտեցումը, և հետևաբար, ունակ չեն լինելու անչափահաս անձանց պաշտպանող օղակ: Այս մասին է վկայում նաև խնամքի կենտրոններում տիրող՝ նախորդ բաժնում նկարագրված իրավիճակը: Իհարկե, պետությունն այս առումով ևս անելիք ունի՝ թույլ չտալու համար անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության բացահայտման պարագայում վերջինիս մեկուսացում և խտրականացում հասարակության կողմից և դուրս մղում հասարակական և սոցիալական հարաբերություններից: Պետությունը այստեղ ևս ձախողել է, քանի որ անգամ խտրականության դեպքերում առկա չէ դեպքերի նույնականացման, ապացուցման, քննության առանձնահատկությունները նախատեսող օրենսդրական կարգավորում: Եվ հետևաբար, անգամ անիմաստ է գնահատել իրավական պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը: Իրավակիրառ մարմինները մի կողմից մասնագիտական կարողությունների, մյուս կողմից քաղաքական կամքի բացակայության պատճառով ունակ չեն անմիջականորեն կիրառել սահմանադրական նորմերը և մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար փաստաթղթերը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

2. Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 38

Հասարակությունը պետության հիմքն է: Այնուամենայնիվ, հասարակությունը միատարր զանգված չէ: Այն բաղկացած է անհատներից, ովքեր տարբեր կերպ՝ իրենց կարողությունների և ինքնության շրջանակներում ազդեցություն են ունենում հասարակական կյանքի և զարգացման վրա: Հասարակության զարգացման երաշխիքը անհատի կրթությունն է: Միևնույն ժամանակ կրթությունը թույլ է տալիս անհատին լիարժեք մաս կազմել հասարակական կյանքին՝ ապահովելով իր համար բարեկեցիկ կյանքի սոցիալական և տնտեսական պայմաններ: Ուստի հասարակության գիտակցությունը բարձրացնելու, նրա շարունակական զարգացումն ապահովելու համար պետությունն ունի պոզիտիվ պարտավորություն՝ ստեղծելու կրթության իրավունքի իրացման պայմաններ: ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Միևնույն ժամանակ՝ ոչ մեկին չի կարելի մերժել կրթության իրավունքը:[39] Կրթություն ստանալու իրավունքը ներառում է ոչ միայն դպրոցական (միջնակարգ) կրթությունը,[40] այլ նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում[41] (ԲՈՒՀ) սովորելը: Պետությունը, բարձրագույն ուսումնական հաստատություններին տալով ինքնակառավարման իրավունք[42] և կանխատեսելով սովորողի՝ ուսումնական հաստատությունից հեռացնելու հնարավորությունը, ամրագրում է, որ սովորողին ուսումնական հաստատությունից հեռացնելը կարող է իրականացվել այդ հաստատության ներքին ակտերով սահմանված դեպքերում և կարգով:[43] Այս կարգավորումը հանդես է գալիս որպես բուհում սովորող անձանց կրթության իրավունքի պաշտպանության լրացուցիչ երաշխիք:

Դեպք 45

Անձը բիսեքսուալ կին է: Նա դպրոցական հաստատությունում շփվել է մեկ այլ կնոջ հետ, այնուհետև դպրոցում տարածվել են լուրեր անձի սեռական կողմնորոշման մասին, ինչի արդյունքում հաճախ անձին ծաղրել են և բուլինգի ենթարկել:

39 Մարդու Իրավունքների և Հիմնարար Ազատությունների Պաշտպանության Մասին Կոնվենցիայի՝ Փոփոխված 11-րդ Արձանագրությամբ, Հոդված 2. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=20870
40 ՄԻԵԴ վճիռ թիվ 24515/94. Բահրի Սուլակն ընդդեմ Թուրքիայի
41 ՄԻԵԴ վճիռներ. Լեյլա Շահին ընդդեմ Թուրքիայի, § 141; Մյուրսել Էրեն ընդդեմ Թուրքիային, § 41
42 ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 38, մաս 3-րդ
43 ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», հոդված 17, մաս 6-րդ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=103999

Դեպք 46

Նույնասեռական անձը, մասնակցելով կրթատեղեկատվական ճամբարի, տեղեկացել է, որ իր ընկերուհու մայրը ճամբարի մասնակիցներին ներկայացրել է նույնասեռական սեռական կողմնորոշման մասին, սպառնացել է պատմել նաև անձի ընտանիքի անդամներին, այդպիսով ցանկություն ունենալով վնասել նաև անձին:

Դեպք 47

Անձը տրանս կին է: Նա շարունակաբար ենթարկվել է բուլիինգի աշակերտների, դասղեկի և հոգեբանի կողմից: Աշակերտները սեռական բնույթի առաջարկներ են արել, հայհոյանքներ են հնչեցրել՝ պայմանավորված նրա գենդերային ինքնությամբ: Անձի համադասարանցին ասել է՝ «արի գնանք պատի տակ ցույց տամ»: Չնայած անձի բողոքներին դպրոցում աշխատող հոգեբանը նշել է, որ «դպրոցում ոչ մի տղա երկար մազ չունի, ականջօղով չի գալիս դասի, իր մեղքն է, պետք է զուսպ պահի իրեն, իսկ համադասարանցիները շատ լավ երեխաներ են», իսկ դասղեկը ամեն օր հարցրել է. «երբ են քեզ վերջապես հանելու էս դպրոցից. խնդիրներ ես ստեղծում»:

Դեպք 48

Անձն իր նույնասեռական սեռական կողմնորոշման մասին որոշել է պատմել իր դասընկերոջը: Սկզբից դասընկերը դրական է արձագանքել, այնուհետև ասել է. «ինչ ասեմ պետքա անես, որ մյուս տղեքին չպատմեմ», անձը հրաժարվել է: Դասընկերը տեղեկացրել է մյուս դասընկերներին նրա սեռական կողմնորոշման մասին: Մի քանի օր շարունակ անձին դպրոցից տուն գնալու ճանապարհին մի խումբ դասընկերներ ծեծել են իր սեռական կողմնորոշման պատճառով:

Դեպք 49

Քվիր անձը կրթական հաստատությունում բախվել է բուլիինգի դասախոսի կողմից: Դասախոսը անձի արտաքին հատկանիշերից և ենթադրյալ կամ իրական սեռական կողմնորոշումից ելնելով պարբերաբար անտեսել է անձի ցանկությունը դասը ներկայացնելու: Բազմիցս խտրական արտահայտություն է արել ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների վերաբերյալ, ինչը ուղիղ վիրավորանք է ընկալել անձը:

Հանրակրթական դպրոցում աշակերտների նկատմամբ որևէ տեսակի խտրական, պիտակավորող վերաբերմունքը վտանգավոր երևույթ է: Այն կարող է ուղղակիորեն աշակերտին դուրս մղել կրթությունից և որպես հետևանք մղել մի այնպիսի կյանք, որտեղ անձը մերժված է հասարակության կողմից և չունի սոցիալիզացվելու, հասարակական կյանքին մասը կազմելու, բնականոն և բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորություն: Այնպիսի միջավայրում, ինչպիսին է հայաստանյան հասարակությունը, անձի պիտակավորումը, թիրախավորումը և մեկուսացումը անխուսափելի է, եթե անձի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը բացահայտվել է այնպիսի իրավիճակում,

երբ նա չունի արդեն իսկ կայացած սոցիալական դիրք և տնտեսական պայմաններ: Իսկ երբ խոսքը վերաբերում է հանրակրթական հաստատություններին, և տուժողները անչափահաս անձինք են, ովքեր չեն կարող ունենալ իրենց կայացած սոցիալ-տնտեսական դիրքն ու պայմանները, ապա նրանց դուրս մղումը հասարակական կյանքից և հնարավորություններից անխուսափելի է:

Ինչպես նշվեց, պետությունն ունի պարտավորություններ ապահովելու համար մարդու իրավունքների արդյունավետ իրացումը: Զուգահեռաբար, պետությունը պարտավորված է հատուկ պաշտպանություն ապահովել երեխաների համար երաշխավորելով նրանց համար զարգացման հավասար հնարավորություններ: Միևնույն ժամանակ, հանրակրթական հաստատությունները, լինելով մարդու ձևավորման նկատմամբ մեծ ազդեցություն ունեցող մարմին, պետք է յուրաքանչյուր երեխայի առանձնահատկություններին համապատասխան ստեղծեն ապահով միջավայր կրթություն ստանալու և սոցիալիզացվելու համար: Դա ներառում է նաև սեռական կրթությունը՝ մի կողմից ԼԳԲՏ անձանց համար, որոնք պետք է տեղեկացված լինեն իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին՝ կարողանալու համար հասկանալ իրենց առանձնահատկությունն ու ներդաշնակ լինել իրենց ինքնության հետ, և մյուս կողմից՝ մյուս երեխաների համար, որպեսզի ընդունեն այլ սեռական կողմնորոշում կամ գենդերային ինքնություն կամ արտահայտում ունեցող երեխաներին և նրանց նկատմամբ չցուցաբերեն բռնի, ճնշող, ծաղրական վերաբերմունք: Միայն այդ պարագայում հնարավոր կլինի ձևավորել տեղեկացված և ներդաշնակ հասարակություն: Իհարկե, երեխաներին կրթելու համար նախ և առաջ պատրաստված պետք է լինեն հանրակրթական հաստատությունների ղեկավար անձնակազմն ու ուսուցիչները, որոնք դաստիարակող և կրթող հիմնական օղակներից են: Այնուհանդերձ, ինչպես արձանագրված իրավիճակն է վկայում, ուսուցիչները ոչ միայն սեռական դաստիարակություն և հարգանքի միջավայր չեն կարողանում սերմանել երեխաների շրջանում, այլ նաև, ընդհակառակը, իրենք են մեկուսացնում ԼԳԲՏ անձանց և ճնշումներ գործադրում: Սա պետության կողմից մարդու իրավունքների խախտում է՝ պետական հաստատությունների կողմից երեխաների մի շարք իրավունքների ուղղակի խախտումներով: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ պետությունը, ձախողելով երեխաների՝ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու իրավունքի պաշտպանությունը, խախտել է նաև կրթության իրավունքը, ինչը կարող է հանգեցնել հասարակության մի խմբի մարգինալացման, մեկուսացման, բացառման, միևնույն ժամանակ տարբեր խմբերի միջև անհանդուրժողականության և թշնամանքի: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցը հենց այն վայրն է, որտեղ անձը ձևավորվում է որպես հասարակության անդամ և քաղաքացի՝ բնականաբար չստանալով համապատասխան կրթություն և դաստիարակություն, չեն կարող հետագայում զերծ մնալ բռնություններից և իրավախախտումներից: Այսինքն, հիմնական կրթություն տրամադրող հաստատությունների իրավիճակը լիովին կարող է բացատրել այլ հարաբերություններում առկա խտրականությունն ու ատելությամբ պայմանավորված հանցագործությունները:

Հատկանշական է, որ որևէ դեպքում անձինք չեն ցանկացել դիմել իրավապահ մարմիններին: Սա պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ՝ տուժողների՝ անչափահաս լինելու հանգամանքով, ինչը ենթադրում է որևէ միջոցի ձեռնարկման պարագայում օրինական ներկայացուցիչների՝ ծնողների ներգրավում: Ինչն էլ իր հերթին նշանակում է, որ տուժողները մեծ

հավանականությամբ կենթարկվեն ընտանեկան բռնության կամ առնվազն ընտանիքի կողմից սահմանափակումների: Հաջորդ պատճառն այն է, որ ճնշումները դպրոցում կամ հենց ուսուցիչների կողմից են դրսևորվում, կամ այլ աշակերտների կողմից՝ ուսուցիչների թողտվությամբ և խրախուսմամբ, ինչն էլ տուժողներին դնում է անպաշտպան և անվստահ իրավիճակում: Բացի այդ, դասընկերների և ուսուցիչների դեմ բողոք ներկայացնելու պարագայում տուժողները չեն պատկերացնում իրենց հետագա ուսուցումը տվյալ միջավայրում և չեն ցանկանում էլ ավելի վատթարացնել իրենց դրությունը և իրենք իրենց դարձնել լրացուցիչ ատելության թիրախ: Հատկանշական է նաև այն երևույթը, որ արձանագրված դեպքերից մեկում անգամ հոգեբանի կողմից է անձի նկատմամբ ոչ զգայուն, ճնշող և նվաստացուցիչ վերաբերմունք ցուցաբերվել. այն անձի, ում պարտավորությունն է ցանկացած իրավիճակում աջակցել անձանց, այլ ոչ թե դնել էլ ավելի ծանր դրության մեջ: Այս բոլոր պատճառները, իհարկե, հնարավոր կլիներ շրջանցել այն պարագայում, եթե տուժողներն ունենային ընտանիքի աջակցությունը և ընկալումը՝ անցնելու կյանքի այդ բարդ փուլը և հաղթահարելու դժվարությունները:

Միանշանակ է, որ կազմակերպության կողմից արձանագրված դեպքերը իրավիճակի մի փոքր մասն են կազմում, քանի որ շատ քիչ անչափահաս անձինք են, որ հասանելիություն ունեն իրավապաշտպան կազմակերպություններին և կարող են դիմել խորհրդատվություն, ապահով միջավայր կամ այլ աջակցություն ստանալու համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումները առավել մեծ ծավալով են դրսևորվել 2023 թ.-ի ընթացքում՝ ընդգրկելով տարբեր միջավայրեր, ինչպիսիք են ընտանիքը, հասարակական վայրերը, իրավապահ մարմինները, զինված ուժերը, կրթական հաստատությունները և այլն: Արձանագրված դեպքերի մի մասում պետական մարմինները հենց իրենք են հանդիսացել անմիջական իրավախախտը՝ ձախողելով իրենց նեգատիվ պարտավորությունը՝ ձեռնպահ մնալ մարդու իրավունքների նկատմամբ անմիջական միջամտությունից: Դեպքերի մյուս մասում թեև պետության ներկայացուցիչը չի եղել անմիջական իրավախախտը, այնուամենայնիվ, պետությունը ձախողել է իր պոզիտիվ պարտավորությունը՝ ապահովելու արդյունավետ իրավական պաշտպանություն երրորդ անձանց ոչ իրավաչափ գործողություններից տուժած անձանց համար ինչպես օրենսդրական կարգավորումների մակարդակում, այնպես էլ գործնականում՝ իրավակիրառ գործառույթն իրականացնելիս: Եվ երրորդ, պետությունը կրկին որևէ միջոց չի ձեռնարկել հանրության շրջանում հանդուրժողականության, իրազեկման և խտրականության ու բռնության կանխարգելման ուղղությամբ՝ ստեղծելու խոցելի խմբերի համար ապահով՝ խտրականությունից ու բռնությունից զերծ միջավայր:

ԲԱԺԻՆ 2.

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 42

Խոսքի ազատությունը՝ որպես ժողովրդավարական հասարակության հիմնասյուներից մեկը, ներառում է արտահայտման գրեթե ցանկացած ձև ու բովանդակություն պարունակող խոսքը՝ ներառյալ անձի գենդերային ինքնությունն ազատորեն արտահայտելու իրավունքը, որն ընդգրկում է գաղափարներ, կարծիքներ և տեղեկատվություն անձի ինքնության վերաբերյալ: Խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և ենթակա է որոշակի սահմանափակումների:[44] Այն ներառում է գաղափարներ և կարծիքներ արտահայտելու ազատությունը, բայց միևնույն ժամանակ պարտականություն է սահմանում խուսափել անձի նկատմամբ այնպիսի արտահայտություններից, որոնք պարունակում են վիրավորանք այլ անձանց նկատմամբ, խախտում են նրանց իրավունքները:[45] Մասնավորապես, խոսքի ազատության իրավունքը չի ենթադրում ատելության խոսքի ազատություն:[46]

Ատելության խոսքի կարգավորումները

Ատելության խոսքի սահմանումը դեռևս չունի մեկ համընդհանուր կերպով ճանաչված ձևակերպում, սակայն գործնականում՝ միջազգային մարմինների կողմից տրվել են պայմանական մեկնաբանություններ:

Ատելության խոսք կարող են համարվել արտահայտման այն բոլոր ձևերը, որոնք տարածում, դրդում, խրախուսում կամ արդարացնում են ռասսայական ատելությունը, այլատյացությունը (քսենոֆոբիան), հակասեմիտիզմը կամ ատելության այլ ձևերը՝ հիմնված անհանդուրժողականության վրա, ներառյալ՝ արտահայտված ծայրահեղ ազգայնականությամբ և ազգակենտրոնությամբ (էթնոցենտրիզմով) անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ներգաղթյալների (միգրանտների) և միգրանտային ծագում ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը և թշնամանքը:[47]

ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի 19(2)-րդ հոդվածը ճանաչում է արտահայտման ազատությունը, հաստատելով, որ «Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ

44 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ. 34
45 ՄԻԵԴ վճիռ. Էրբականն ընդդեմ Թուրքիայի. թիվ 59405/00
46 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ. 11
47 Նախարարների կոմիտեի թիվ R (97) 20 հանձնարարական Ատելության խոսքի վերաբերյալ. 1997. https://bit.ly/2wa4QoE

որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»:[48]

Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել հետևյալ պայմանների առկայության դեպքում.

ա) պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ,

բ) ուղղված լինեն այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելուն, պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանությանը,

գ) լինեն անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում այս շահերի պաշտպանության համար: Այս պայմաններից միայն մեկի կամ երկուսի առկայությունը բավարար չէ, որպեսզի սահմանափակումը համարվի օրինական:

Դաշնագրի 20(2)-րդ հոդվածով սահմանվում է. «2. Ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, պետք է արգելվի օրենքով»:

Ատելության խոսքը դրսևորվում է ոչ միայն բռնությունների, խտրականության կոչերով կամ դրանց արդարացմամբ և ջատագովությամբ, այլ նաև վիրավորական, նվաստացուցիչ, թշնամական վերաբերմունքով, անհանդուրժողականության սերմանմամբ որոշակի խմբերի նկատմամբ: Այն մի դեպքում կարող է հանգեցնել անձանց խմբերի կամ անհատների նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների, մյուս կողմից կարող է խախտել որոշակի հատկանիշներով առանձնացող անձանց հոգեբանական ամբողջականությունը՝ պատճառելով հոգեկան տառապանք կամ ճնշվածություն:

Ատելության խոսքը որոշ երկրների օրենսդրությամբ հասցեավորված է տարբեր մակարդակներում: Օրինակ՝ Կանադայի, Իսլանդիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների և այլ երկրների օրենսդրությամբ ատելության խոսքի համար նախատեսված է քրեական պատասխանատվություն:[49]

Ատելության խոսքի համար նախատեսված պատասխանատվությունը պայմանավորված է դրա ծանրությամբ: Ատելության խոսքի ծանրությունը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները՝[50]

- համատեքստը, որում այն հնչում է. սա ներառում է նաև քաղաքական իրադրությունը, որում կարող է խոսքը առավել սուր հնչել կամ կարող է առավել քիչ ուշադրության արժանանալ:
- դրա հեղինակը, նրա դերը, հասարակության կողմից նրա նկատմամբ վերաբերմունքն ու վստահության աստիճանը,

48 ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966 թ. հոդված 19(2), https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-civil-and-political-rights

49 Համապատասխան օրենսդրական կարգավորումները հետևյալ հղումներով՝
Կանադա. https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-46/section-318.html,
Իսլանդիա. https://www.government.is/library/Files/General_Penal_Code_sept.-2015.pdf,
Մեծ Բրիտանիա. http://www.legislation.gov.uk/ukpga/2003/44/section/146,
Ֆինլանդիա. http://www.finlex.fi/fi/laki/kaannokset/1889/en18890039.pdf,
Ֆրանսիա. https://www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006070719&dateTexte=20181010,
Նիդերլանդներ. https://wetten.overheid.nl/BWBR0001854/2018-09-19

50 ՄԱԿ-ի մարդու իրավունքների բարձր հանձնակատարի տարեկան զեկույց՝ ներկայացված ազգային, ռասայական, կրոնական ատելության հրահրման արգելքի վերաբերյալ փորձագետների աշխատաժողովին, 2013 թ. https://digitallibrary.un.org/record/746343

- նպատակը. կարևոր է՝ արդյո՞ք նման խոսքը հնչեցվել է դիտավորյալ՝ որոշակի հետևանք առաջացնելու նպատակո՞վ, թե անզգուշությա՞մբ:
- բովանդակությունը. կարևոր է, թե խոսքը որքանով է ազդեցիկ և որքանով կարող է որոշակի վնաս պատճառել,
- տարածման միջոցները, լսարանը. կարևոր է, թե ինչ ծավալի հանրային տարածում է գտել խոսքը,
- հավաստիությունը, ներառյալ՝ ռիսկային լինելը. Ատելության խոսքի հրահրման պատճառով հետագա գործողությունների արգելքի համար դրանք պետք է լինեն իրական և պարունակեն խտրական, թշնամական կամ բռնության գործողությունների արդյունքում նույնականացվող ռիսկեր:

Այս պայմանները հիմնված են խտրականություն, թշնամանք կամ բռնություն հրահրող ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության ջատագովության արգելքի վերաբերյալ գործողությունների Ռաբաթ պլանի վրա, որը պարունակում է պետություններին ուղղված առաջարկներ՝ նույնականացնելու և պայքարելու ատելության խոսքի դեմ: Այն առաջարկում է հենց վերոնշյալ վեցաստիճան թեստը, որից ելնելով կարելի է գնահատել, թե արդյոք ատելություն պարունակող արտահայտությունը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության, թե ոչ:[51]

Այս հանգամանքների վերլուծությունից ելնելով կարող է տարանջատվել ատելության խոսքի համար պատասխանատվության աստիճանը: Այնպիսի իրավիճակում, երբ հանրության 95 տոկոսը բացասական դիրքորոշում ունի նույնասեռական և տրանս անձանց նկատմամբ,[52] ատելության խոսքի նույնիսկ ամենաանվնաս թվացող դրսևորումը կարող է խորացնել հասարակության բևեռացումն ու հանգեցնել իրավախախտումների: Այն դեպքում, երբ ատելության խոսքի հեղինակը պետական պաշտոնատար անձ է, դրա վտանգավորության աստիճանն առավել բարձր է ոչ միայն պաշտոնյայի վայելած հեղինակության բերումով, այլ նաև՝ պայմանավորված անպատժելիության մթնոլորտի ձևավորմամբ: Հայաստանյան փորձը կրկին ցույց է տալիս, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքը ակտիվ կիրառվում է պաշտոնատար անձանց և քաղաքական գործիչների կողմից, սակայն որևէ պատասխանատվության չի հանգեցնում:[53]

Անզգուշաբար հնչած ատելության խոսքը պետք է արժանանա քննադատության և որոշ դեպքերում, նույնիսկ, պատասխանատվության հանգեցնի, սակայն այս դեպքում քրեական պատասխանատվությունը պարտադիր չէ: Մասնավորապես, այդպիսի արտահայտությունները կարող են դատապարտվել պետական պաշտոնատար անձանց կողմից, կարող են նախատեսվել նաև կարգապահական պատասխանատվության միջոցներ ինչպես պետական մարմինների ծառայողների, այնպես էլ՝ մասնագիտական հանրույթների ներկայացուցիչների համար՝ որպես էթիկայի խախտում: Խոսքի բովանդակության վերլուծության համար հատկապես կարևոր է դրա հետևանքների գնահատումը. այն կարող է անձանց

51 Գործողությունների Ռաբաթ պլան. https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf
52 «Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2016 թ. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/02/From-Prejudice-to-Equality-Armenian.pdf
53 Հայաստանում պաշտոնատար անձանց կողմից դրսևորված ատելության խոսքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ. 2019 թ. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2019/05/hatespeech_hy.pdf

որոշակի խմբի պահել վախի մթնոլորտի և հոգեբանորեն ճնշված վիճակում՝ անընդհատ սպառնալիքի ներքո: Ատելության խոսքի հասանելիությունը, այսինքն, տարածումը հանրության լայն շրջանում, պայմանավորված է ինչպես այն հանգամանքով, թե որտեղ է այն հնչել, այնպես էլ նրանով, թե արդյո՞ք այն տարածվել է զանգվածային լրատվության միջոցներով, թե՞ ոչ: ԶԼՄ-ների կողմից նման խոսքի տարածումը ևս պետք է ստանա իրավական գնահատական: Ի վերջո, ատելության խոսքը պետք է լինի իրական և հստակ, այսինքն, խոսքում օգտագործված արտահայտությունները պետք է կամ պարունակեն հստակ թշնամանք, որոշակի հատկանիշով պայմանավորված վիրավորանք, բռնության, խտրականության կոչեր, կամ պետք է ընկալելի լինեն որպես այդպիսին. դրա ոչ միանշանակ ընկալումը նվազեցնում է վտանգավորության աստիճանը:

Ներպետական իրավակարգավորումները

2020 թ.-ի ապրիլին տեղի ունեցած քրեական օրենսգրքի փոփոխությամբ քրեական պատասխանատվություն նախատեսվեց անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար:[54] Այսինքն, ՀՀ օրենսդրությամբ քրեական պատասխանատվություն է նախատեսված ատելության խոսքի առավել վտանգավոր դրսևորման, այն է՝ բռնության հրապարակային կոչերի կամ բռնության արդարացման համար:

Գրեթե չորս տարի գոյություն ունեցող այս կարգավորումը, սակայն արդյունավետ չի կիրառվում ԼԳԲՏ անձանց դեմ վերջիններիս սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության խոսքի ծանր դրսևորումների՝ բռնության հրապարակային կոչերի պարագայում: Հանցագործության մասին հաղորդումների հիման վրա քրեական գործեր չեն հարուցվել հիմնականում այն պատճառաբանությամբ, որ ենթադրյալ իրավախախտը իրացրել է իր արտահայտման ազատությունը կամ որ նրա արտահայտությունները իրական վտանգ չեն սպառնում և դրանք կատարվել են պահի ազդեցության տակ: Հարկ է նշել, որ բռնության հրապարակային կոչերի հանցակազմը ձևական է, այսինքն՝ դրանով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում անկախ հետևանքներից: Ինչպես նախորդ բաժնում նկարագրված է, ատելության խոսքի պարագայում էական չէ, թե հենց այդ խոսքը դարձել է բռնության պատճառ, թե ոչ: Ինքնին թշնամական, վիրավորական արտահայտությունները, խտրականության կամ բռնության կոչերը համարվում են միջամտություն անձի մասնավոր կյանքի իրավունքի նկատմամբ՝ առաջին հերթին, այնուհետև՝ նաև համայնքի յուրաքանչյուր ներկայացուցչի իրավունքի նկատմամբ, քանի որ եթե անգամ խոսքը մեկ անձի է ուղղված, սակայն պայմանավորված է նրա սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ, ապա վնասում է նաև նույն հատկանիշը կրող մյուս անձանց, իսկ երրորդ հերթին նաև ամբողջ հասարակությանը:

54 ՀՀ Քրեական օրենսգիրք, հոդված 330. https://www.arlis.am/documentview.aspx?docid=153080

2022 թ.-ի հուլիսին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ռասայի, ազգի, էթնիկական կամ սոցիալական ծագման, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի կամ այլ հիմքերի վրա անձի կամ խմբի նկատմամբ անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամություն հրահրելուն կամ քարոզելուն ուղղված խոսքի, ինչպես նաև այդ նպատակով նյութերի կամ առարկաների տարածման համար:[55]

Չնայած նրան, որ 2022 թ.-ի մայիսի 17-ին հրապարակված Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը անդրադարձել է թե օրենսդրական կարգավորումների բացին, թե գործնականում դրանց անարդյունավետ կիրառմանը, որևէ միջոց դեռևս չի ձեռնարկվել կատարելու համար ՄԻԵԴ վճռով Հայաստանի վրա դրված պարտավորությունները: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հստակ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ատելության խոսքը կարգավորող իրավանորմը պետք է որպես պաշտպանված հատկանիշ ուղղակիորեն նախատեսի սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, որպեսզի այն համարվի իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ԼԳԲՏ անձանց համար: Փաստացի, Հայաստանում ոչ միայն անգամ չի քննարկել օրենսդրական կարգավորումներում լրացում անելու հարցը, այլ նաև շարունակում է անգործություն ցուցաբերել ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնության կոչերին համապատասխան իրավական արձագանք տալու հարցում: Այս իրադրությունը ևս մեկ անգամ փաստում է, որ բռնությունների կոչերի կամ արդարացման համար քրեական պատասխանատվություն նախատեսող քրեաիրավական նորմի առկա ձևակերպումը, որում նման խոսքից պաշտպանության ենթակա հատկանիշների ցանկում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ուղղակիորեն նշված չեն և միայն տրված է «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներ» արտահայտությունը, չի կարող համարվել արդյունավետ գործիք:

ԼԳԲՏ անձանց խնդիրների շահարկումը և ատելության խոսքը 2023 թ.-ի ընթացքում[56]

Կառավարության թիրախավորումը ԼԳԲՏ անձանց հիմնահարցերի շահարկման միջոցով

Լրատվամիջոցներում տարածվել են մանիպուլատիվ, իրականությունը խեղող տեղեկություններ, որոնց նպատակն է՝ օգտագործելով հասարակության շրջանում առկա կարծրատիպերն ու վախերը իշխանություններին վերագրել այնպիսի արարքներ, ինչպիսիք են «այլասերման տարածումը», հայկական արժեքների

55 Տե՛ս նախորդ հղումը
56 Սույն բաժնում մեջբերված ատելության խոսքի օրինակները մեջբերված են բառացի, փոփոխված է միայն կիրառված օգտագործված տառերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ զեկույցի լեզուն հայերենն է, իսկ մեկնաբանությունները հաճախ լատինատառ կամ կիրիլյան այբուբենի տառերով են գրված:

և ավանդական ընտանիքի քայքայումը, մանկապղծության քարոզը և այլ:[57] Այսպիսի միջոցները, իհարկե, կիրառվում են իշխանություններին վարկաբեկելու և հասարակության շրջանում բացասական վերաբերմունք առաջացնելու նպատակով, սակայն միևնույն ժամանակ թիրախավորվում են ԼԳԲՏ անձինք, ովքեր ներկայացվում են որպես բացասական երևույթ, «այլասերում»՝ կապվելով մանկապղծության, աստվածաշնչյան մեղքերի հետ: Արդյունքում, հասարակությունում, որը չունի բավարար իրազեկվածություն առ այն, թե ինչ է սեռականությունը, սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, և հետևաբար, ունի վախեր, այսպիսի շահարկումներն ընկալվում են որպես ճշմարտություն և առաջացնում են էլ ավելի բացասական և ագրեսիվ վերաբերմունք: Նշյալ հոդվածներում կրկին շահարկվել է Ստամբուլյան կոնվենցիայի («Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին») և Լանզարոտեի կոնվենցիայի («Երեխաներին սեռական բռնությունից և սեռական ոտնձգությունից պաշտպանելու մասին») վավերացման հարցը՝ դրանք ներկայացնելով որպես «սատանայական», «պղծություն» և «այլասերում» սերմանող: Այսինքն, կոնվենցիաների վավերացման հարցը ներկայացվում է որպես նույնասեռականության «պրոպագանդա», այլասերվածության, պղծության քարոզչություն, «սոդոմականություն»:

Հայաստանի հանրապետական կուսակցությունը, որը իշխող ուժն էր մինչև 2018 թ.-ի հեղափոխությունը, և որի ներկայացուցիչները աչքի էին ընկնում որպես ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքի հիմնական հեղինակներ, հրապարակում են տարածել՝ նշելով իրենց և Նիկոլ Փաշինյանի հիմնական տարբերությունները: Մասնավորապես, ի թիվս այլի նշվել է. «Մեր կարծիքով տրանսգենդեռ ու միասեռական լինելը մեր ազգի արժեքներին դեմ է, նրանց կարծիքով՝այնքան ընդունելի է, որ ԱԺ ամբիոն են տրամադրում ու ֆիլմ նկարում»: Այսինքն, նույնասեռական և տրանս անձանց որևէ հարթակ տրամադրելը ներկայացվում է որպես բացասական երևույթ:

Կրկին նույնասեռականության հետ կապվելով թիրախավորվել է ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ղեկավար Սարգիս Խանդանյանը:[58] Հրապարակումը պարունակել է հայհոյախառն վիրավորական մտքեր՝ կրկին որպես բացասական երևույթ ներկայացվելով նույնասեռականությունը:

Կեղծ լուրեր են տարածվել առ այն, որ այսուհետ երեխաների սեռը նաև կարող է նշվել «չճշտված»: Հիմնական հեղինակը եղել է Փաստաբանների պալատի նախկին նախագահ, փաստաբան Արա Զոհրաբյանը:[59] Լուրը ակտիվ տարածում

57 «Լայվնյուզ.էյէմ», «Հայաստանում ողջ մնացածների համար Արևմուտքի, Նիկոլի, նրա ռոմակի կողմից նախապատրաստվող և ուղիղ Դժոխք ուղղորդող ճանապարհը», 07.06.2023. https://livenews.am/press/2023/231329/07/23/25/, «Հայաստանում ողջ մնացածների համար Արևմուտքի, «ժողվրչոյի», նրա ռոմակի կողմից նախապատրաստվող և ուղիղ Դժոխք ուղղորդող ճանապարհը (տեսանյութ). 2», 08.06.2023. https://livenews.am/press/2023/231579/08/23/15/ ,
58 Գրառում Զաքար Խոջաբաղյանի ֆեյսբուքյան էջում, 10.02.2023. https://www.facebook.com/zakar.khojabaghyan/posts/pfbid035TpPj8WAkVDWV44yGuHgreQ8ZD17nrSK3L2wQVVRamSMy35JG3ykpSMGHkoGFy3Cl
59 «Օրագիր.նյուզ», «Երեխաների հիվանդության պատմագրում այսուհետ սեռը կարող է նշվել «չճշտված»», 10.01.2023, https://oragir.news/hy/material/2023/01/10/67715, «Փաստինֆո.էյէմ», «Երեխաների հիվանդությունների պատմագրում այսուհետ սեռը կարող է նշվել «չճշտված». հերթական հարվածն ազգային դարպասներին. Զոհրաբյան», 01.10.2023 https://www.pastinfo.am/hy/news/2023/01/10/k1xoj16eh/1516315, «Հայելի.էյէմ», «Երեխաների հիվանդության պատմագրում այսուհետ սեռը կարող է նշվել «չճշտված». հերթական հարվածը ազգային դարպասներին», 10.01.2023. https://hayeli.am/?p=701146&l=am, «7օր.էյէմ», «Երեխաների հիվանդության պատմագրում այսուհետ սեռը կարող է նշվել «չճշտված». հերթական հարվածը ազգային դարպասներին», 10.01.2023. https://www.7or.am/am/news/view/248509/

է ստացել լրատվամիջոցներում: Հասարակության շրջանում, իհարկե, առավել լայն տարածում է գտնում «սենսացիոն» բացահայտումը, քան դրան հաջորդող մեկնաբանությունները այդ բացահայտման կեղծ լինելու մասին:

Իշխանությունները որևէ կերպ չեն արձագանքել այս մանիպուլատիվ մեկնաբանություններին, ինչը թույլ է տալիս հնարավոր տարբեր միջոցներով շահարկել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ: Այս պարագայում, իհարկե, իշխանության կողմից ձեռնարկվելիք ընդունելի միջոցները քննարկելիս պետք է հաշվի առնել նախ խոսքի բովանդակությունը. արդյոք այն պարունակում է բռնության կոչեր, բռնության արդարացում, թե քարոզ, քանի որ միայն այս պարագայում են խոսքի հեղինակները ենթակա քրեական պատասխանատվության: Մյուս պարագայում, երբ խոսքը գնում է վիրավորանքների, կեղծ լուրերի և շահարկումների մասին, առաջնահերթ միջոցը պետք է լինի իշխանության կողմից վիրավորանքների և շահարկումների քննադատումն ու դատապարտումը՝ որպես անընդունելի միջոց քաղաքական նպատակներին հասնելու համար: Իսկ ապատեղեկատվությանը պետք է հակադրվի հասարակության իրազեկումը, որի պարագայում միայն հասարակությունը ունակ կլինի նույնականացնել և անտեսել իրականությանը չհամապատասխանող և հակագիտական տեղեկատվությունը:

Համացանցում մեծ աղմուկ է բարձրացրել մի տեսանյութ, որտեղ մի կին դաժանաբար ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնության է ենթարկում իր երեխային: Չնայած նրան, որ կնոջ արարքը միանշանակ բացասաբար է ընկալվել և գնահատվել, այնուամենայնիվ, որոշ շրջանակներ կրկին սկսել են շահարկել Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման խնդիրը՝ ասելով, թե տեսանյութը դիտավորյալ է հանրայնացվել՝ հիմքեր ստեղծելու կոնվենցիայի վավերացման համար: Այսինքն, փորձ է արվել հասարակության ուշադրությունը շեղել տեսանյութում պատկերված արատավոր երևույթից, և երեխաներին ընտանեկան ու սեռական բռնությունից պաշտպանելու էլ ավելի արդյունավետ գործիքներ ներդնելու անհրաժեշտությունից խոսելու փոխարեն սկսվել են կրկին մանիպուլյացիաներ՝ իբրև թե տեսանյութը ինչ-ինչ չարամիտ նպատակներ է հետապնդել:

Դեպք 50

Տրանս անձի սպանությանը հաջորդած ատելության խոսքը

Տրանս անձի սպանությունից հետո հասարակության կողմից մեծ ատելության ալիք բարձրացավ: Սոցիալական ցանցերում և լրատվական նյութերի մեկնաբանություններում մարդիկ սկսեցին արդարացնել հանցագործին, պիտակավորել տուժողին և ԼԳԲՏ համայնքի նկատմամբ հետագա բռնությունների կոչեր անել: Ստորև ներկայացված են դրանցից ընդամենը մի քանիսը, որոնք արտահայտում են ամբողջ բովանդակության հիմնական իմաստը: Տրանս կնոջ սպանության վերաբերյալ նյութի[60] մեկնաբանություններում ի թիվ այլ բազմաթիվ արարքը արդարացնող, ողջունող ու այլ բռնությունների կոչ պարունակող մեկնաբանությունների, եղել են հետևյալ գրառումները.

60 «Մամուլ.էյէմ», «Երևանում սպանվել է տրանսգենդեր կին. ԼԳԲՏ համայնքը բարձրաձայնում է ատելության մթնոլորտի մասին», 21.08.2023. https://mamul.am/am/video/28236007

- Արսեն Խաչատրյան անունով օգտատերը գրել է. «Հազիվ մի լավ նորություն էս երկրի համար»
- Վահե Ավետիսյան անունով օգտատերը գրել է. «Բրավո»
- Սիրանուշ Սերոբյան անունով օգտատերը գրել է. «Ափսոս, որ ընկերները դեռ կենդանի են. բնության վիժվածքները գնալով շատանում են»
- Կարինե Սարգսյան անունով օգտատերը գրել է. «Շատ ճիշտ ա արել մաքրվեք էս երկրից»
- Ռուզան Խաչատեյան անունով օգտատերը գրել է. «ձեզ բոլորին պետք է սատկացնել»
- Դիանա Քեշ անունով օգտատերը գրել է. «մի հատ վարակ վերացավ»
- Միլենա Պոգոսյան անունով օգտատերը գրել է. «վայ էս ով են. լավ ա արել սպանել ա. դրանք տենց պատժի պիտի արժանանան...»
- Աշոտ Գրիգորյան անունով օգտատերը գրել է. «ձեզ սաղ-սաղ պիտի վարեն այ զիբիլներ»
- Մի Շա անունով օգտատերը գրել է. «Սպանողին դատողը գոմիկ ա. սրանց վառել ա պետք սրանք սատանի ճտերն են»
- Նարինե Սահակյան անունով օգտատերը գրել է. «Շատ էլ լավ են արել դրանց պետք է մասսայաբար ոչնչացնել ճանճերի նման սատկացնել»
- Լիլիթ Մելքոնյան անունով օգտատերը գրել է. «Այ ձեզ պիտի աքսորեն ու ջնջեն աշխարհից»

Մեկ այլ նյութի[61] մեկնաբանություններում գրել են՝

- «Տո շատ ճիշտ են արել մյուսներին պիտի անեն». Հովհաննես Աղաբաբյան անունով օգտատեր,
- «Շատ լավ են արել դրանցից մաքրեք մեր քաղաքը». Ռոզա Կառլենովնա անունով օգտատեր:

Նույն իրավիճակն է մեկ այլ լրատվական նյութի մեկնաբանություններում[62] գրել են «ապրի վառողը» և այլն:

Սպանված անձի հիշատակին կազմակերպված մոմավառության ընթացքում տեղի ունեցած հարձակման վերաբերյալ լրատվական նյութի[63] մեկնաբանություններում ևս շարունակվել է ատելության խոսքը, մասնավորապես, բռնության կոչերն ու արարքի արդարացումները: Դրանցից որոշները հետևյալ բովանդակությունն են ունեցել՝

- Նոնա Մարտիրոսյան անունով օգտատերը գրել է. «Շատ լավ են արել բոլորը պիտի անեին թասիբով երեխեք են»
- Արմեն-Խորո սպեց Էֆեկտներ անունով օգտատերը գրել է. «սրանց սաղին

61 «Մեդիարում» լրատվական կայքի ֆեյսբուքյան էջ. «Երևանում դաժանաբար սպանել են 28 ամյա տղամարդուն, ով ըստ ականատեսների տրանսգենդեր է եղել. սպանելուց հետո նրան այրել են. մանրամասներ», 20.08.2023. https://www.facebook.com/Mediaroom.am/posts/pfbid02V5xuWzmZKBy95qxnktAr8cJV3hWXRXDpv4QRPC3Sdd9GdTvhXRTBrgKVBA9w7gqWl
62 «Նյուզ.էյէմ», «Առանձնակի դաժանությամբ սպանություն Երևանում. Տան մեջ այրել են 28-ամյա տրանսգենդեր տղամարդուն». 20.08.2023. https://news.am/arm/news/776322.html
63 Հղում դեպի տելեգրամյան ալիք. https://t.me/armluram/

պետք ա սատկացնեն ու վառեն»

- Անահիտ մարտիրոսյան անունով օգտատերը գրել է. «վառել էդ վիրուսներին»

Նույն տեղեկատվության վերաբերյալ մեկ այլ նյութի[64] մեկնաբանություններում ևս նույն ատելության ալիքն է եղել.

- Գարիկ Թումանյան անունով օգտատերը գրել է. «Դրանց էլ վառեիք»
- Անահիտ Սիմոնյան անունով օգտատերը գրել է. «Դրանց բոլորին էր պետք վառել, որ իրենք իրենցով չաղտոտեին շրջապատը»

Մարդասպանին ձերբակալելու վերաբերյալ լրատվական նյութի[65] մեկնաբանություններում կրկին շարունակվել է նույն բովանդակությամբ ատելության խոսքը: Մասնավորապես,

- Արուտ Պոգոսյան անունով օգտատերը գրել է. «մաքրել ա բնությունից աղբը, որ չտարածվի»
- Սեդա Գրիգորյան անունով օգտատերը գրել է. «լավ ա արել հայաստանն ա մաքրում տղան»
- Արտակ Կա ա նունով օգտատերը գրել է. «Պարգևավճար տվեք»

Ատելություն և թշնամանք սերմանող խոսքից զերծ չեն մնացել նաև հասարակություն շրջանում որոշակի հարգանք և վարկանիշ ունեցող, առավել լայն լսարան ունեցող անձինք: Մասնավորապես, Երևան քաղաքի ավագանու անդամ Թեհմինա Վարդանյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում գրել է.

«Ի՞նչն ա էսքան աղմուկ ու վայնասուն բարձրացրել՝ թե բա տրանսգենդեր են սպանել... Ու՞... Շատ վատ ա, որ մարդ են սպանել, բայց էս տարասեռ աղաղակումներն ինչի՞ն են միտված: Հարցազրույց եմ նայում՝ մենք գիտեինք, որ սա մի օր լինելու ա, մենք պաշտպանված չենք, մեզ վատ են վերաբերվում, մենք, մենք, մենք... Իսկ, որ «նատուրալի» են սպանում ինչու՞ էսպիսի աժիոտաժ չի:

Բա՛վ ա էլի: Բան ու գործներս թողնենք, նայենք, ո՞ր ՀԿ-ից (տարասեռ ու խեղված զգացողություններ ունեցող), ո՞վ ու ի՞նչ հարցազրույց ա տալիս ու ի՞նչ հեղինակավոր կարծիք ա ասում:

Հարգելի՛ լրագրողներ, նույն հետաքրքրվածությամբ ու հարցադրումներով ինչու՞ յուրաքանչյուր սպանության հետևից չեք գնում ու տարբեր ՀԿ-ների հարցուփորձ անում:

64 «Մեդիանյուզ», «Օրերս սպանված տրանսգենդեր կնոջ հիշատակին կազմակերպված մոմավառության մասնակիցները ենթարկվել են հարձակման. մանրամասներ», 23.08.2023. http://medianews.site/449557/

65 «Նյուզ.էյէմ». 26 ամյա երիտասարդը խոստովանել է, որ սպանել է տրանսգենդեր տղամարդուն, ապա հրդեհել բնակարանը. 21.08.2023. հասանելի է հետևյալ հղումով. https://news.am/arm/news/776396.html

Իրականում, գնալով ամենաան-պաշտպանը դառնում ենք մենք՝ «նատուրալներս»...

Հ.Գ. Առաջին անգամ իմ կյանքում քննադատում եմ լրագրողի աշխատանքը:

Հ.Գ.Գ. Կարծում եմ՝ շուտով ՀԿ կբացեմ՝ ի պաշտպանություն նորմալ սեռական կողմնորոշում ունեցող մարդկանց:

Ներողություն ու շնորհակալություն»:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը անդրադարձել է[66] տրանս անձի սպանությունից հետո տարածված ատելության խոսքին՝ հայտնելով իր մտահոգությունը, ինչից հետո տվյալ նյութի մեկնաբանություններում անձամբ է դարձել ատելություն խոսքի թիրախ:

Մեկնաբանությունները պարունակել են նաև ատելության խոսք սպանված անձի մոր հասցեին, ինչը զեկույցում չի ներառվել պայմանավորված դրա՝ հայհոյանքներ պարունակող բովանդակությամբ: Սա հոգեբանական ծանր ճնշում է տուժողի մոր նկատմամբ, ով արդեն իսկ տուժել է՝ կորցնելով իր երեխային: Մյուս կողմից, հասարակության այս վերաբերմունքն ու պետության արձագանքի բացակայությունը հաղորդագրություն է ԼԳԲՏ անձանց ընտանիքներին առ այն, որ իրենց ևս ատելության և անհանդուրժողականության թիրախ են, եթե չեն մերժում իրենց նույնասեռական, բիսեքսուալ կամ տրանս երեխաներին: Հետևաբար, կարող է թե հոգեբանորեն ճնշող ազդեցություն ունենալ և թե դրդել ընտանեկան բռնության:

Նախ և առաջ հարկ է արձանագրել, որ չնայած, ինչպես վերը նշվեց, 2022 թ.-ից ի վեր բռնությունների հրապարակային կոչերն ու բռնության արդարացումը քրեականացված է, իրավապահ մարմինների կողմից անգամ վարույթ չնախաձեռնվեց՝ հավաքագրելու համար նյութեր, ուսումնասիրելու նման ծավալի բռնության կոչերը՝ դրանց տալու քրեաիրավական գնահատական:

Ակնհայտ է, որ բռնության կոչերի և դրանց արդարացման դեմ միջոցներ ձեռնարկելը այն առաջնային քայլերից է, որ պետությունը պետք է անի՝ ապահովելու համար ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների կանխումն ու խոցելի խմբերի պաշտպանությունը: Այս պարագայում անգործություն ցուցաբերելով պետությունը հասարակությանը փոխանցում է երկու հաղորդագրություն. նախ, որ պետության համար ընդունելի է նման մոտեցումն ու պետությունը չունի ատելության խոսքի դեմ պայքարի քաղաքականություն, և երկրորդ, որ այսպիսի դեպքերում հանցավորը կարող է մնալ անպատիժ:

Այնուամենայնիվ, անդրադառնալով այն հարցին, թե ինչպես պետք է պետությունը դատի՝ այս բռնության կոչերին գնահատական տալիս, անհրաժեշտ է վերադառնալ խոսքի գնահատման վեցաստիճան թեստին: Այսպես.

- Քանի որ բռնության կոչերը և արդարացումը տեղի են ունեցել կոնկրետ սպանության դեպքի համատեքստում, դրանք ուղղակիորեն կապվում են և լսարանի համար պարզ է դառնում, որ նման հանցանքները հասարակության կողմից արդարացվում, խրախուսվում ու քաջալերվում են, իսկ պետությունը համաչափ պատասխան չի տալիս: Բարձր աստիճանի հոմոֆոբ հասարակությունում, իհարկե, այսպիսի հասարակական տրամադրությունն ու պետության թողտվությունը ծայրահեղ վտանգավոր են:

66 «Ֆորրայթս.էյէմ», «Գրում են՝ լավ են անում՝ սպանում են, վառեք, մորթեք».միջնադարյան խարույկը՝ որպես տրանսգենդերներին պատժելու միջոց, 21.08.2023 թ. https://shorturl.at/oIUV9

- Այս պարագայում խոսքի հեղինակները ենթադրաբար հիմնականում հասարակ քաղաքացիներ են և իրենց անհատականությունը չի ծանրացնում խոսքի վտանգավորությունը: Այնուամենայնիվ, գրառումների տարափի մեջ դժվար է կողմնորոշվել, թե ովքեր են հեղինակները. հեղինակների ինքնությունը ուսումնասիրելու հարցով ևս պետք է իրավապահ մարմինները զբաղվեն: Ներկայացված ատելություն և անհանդուրժողականություն պարունակող խոսքերից մեկի հեղինակը, օրինակ՝ Երևան քաղաքի ավագանու ներկայացուցիչ է, ում խոսքը, իհարկե, էլ ավելի մեծ ազդեցություն ունի հասարակության նկատմամբ, որպես հասարակության քվեով ընտրված և Երևան քաղաքի կառավարման որոշում կայացնող մարմնի ներկայացուցիչ:
- Իհարկե այս պարագայում բռնությունների կոչերն ու արդարացումը դիտավորյալ են տեղի ունեցել, ինչը ծանրացնում է պատասխանատվությունը:
- Խոսքի բովանդակությունը, չնայած լինելով բազմազան, ըստ էության պարունակել է մեկ ընդհանուր միտք. ԼԳԲՏ անձանց հետ հենց այդպես էլ պետք է վարել: Հետևաբար, այս բովանդակությամբ խոսքը թե սպառնալիք է ամբողջ համայնքի համար՝ որպես հիմք հետագա բռնությունների, և թե արդեն իսկ, խախտում է մարդկանց հոգեկան ամբողջականությունը:
- Հաշվի առնելով նույնատիպ խոսքի քանակը և հաճախականությունը, դրա վտանգավորությունը աճում է՝ արդեն կապվելով ոչ թե հեղինակի անձի, այլ մտքի ժողովրդահաճոյության հետ:
- Վերլուծելով բռնության և խտրականության այլ դեպքերի հաճախականությունն ու համատարածությունը՝ միանշանակ կարելի է եզրահանգել, որ հոմոֆոբ հասարակության համար այսպիսի խոսքը ուղղակի խթան է հետագա բռնությունների համար:

Այսպիսով, Եվրոպայի խորհրդի վերոնշյալ չափորոշիչների և այս վեցաստիճան թեստի կիրառման արդյունքում հնարավոր է գնահատել, թե ինչպես վերը մեջբերված, այնպես էլ այլ նույնաբովանդակ մեկնաբանությունների հեղինակները ինչպիսի պատասխանատվության պետք է ենթարկվեն: Մյուս բացասական մեկնաբանությունները, որոնք պարունակում են վիրավորանքներ, հայհոյանք և այլ տեսակի անհանդուրժող խոսք, պետք է գնահատվեն քաղաքական իշխանությունների կողմից՝ որպես ժողովրդավարացման ճանապարհ ընտրած պետության համար անթույլատրելի և դատապարտելի արարք: Դրանով իշխանությունները կհաստատեն իրենց պատրաստակամությունը՝ երկրում ժողովրդավարական բարեփոխումների կատարման ուղղությամբ:

Դեպք 51

Նույնասեռական անձի ինքնասպանությանը հաջորդած ատելության խոսքը

Նախորդ բաժնի կյանքի իրավունքի խախտմանը վերաբերող հատվածում նկարագրված է նույնասեռական անձի ինքնասպանության դեպք: Չնայած նրան, որ հայ հասարակությունը մշտապես փորձում է առաջնահերթություն տալ երեխաներին և անգամ հոմոֆոբ վարքագիծն է մեկնաբանում երեխաներին «այլասերումից» զերծ պահելու շահով, կարծես անտեսել է այն հանգամանքը, որ 17-ամյա երեխան որոշել է կյանքին վերջ տալ խտրական, բացառող և նվաստա-

ցուցիչ վերաբերմունքի պատճառով: Ատելությունը այն աստիճանի է հասել, որ անգամ այսպիսի դեպքը, որը պետք է թե պետության և թե հասարակության առնվազն մտահոգությունը հարուցեր, դարձել է հերթական ատելության պոռթկման առիթ: Հասարակ քաղաքացիները, ովքեր իրենց հանրային խոսքում չեն հետապնդում որևէ քաղաքական շահ և արտահայտում են իրենց անձնական դիրքորոշումը, փաստորեն, ատելության այս մթնոլորտում անգամ այլևս ունակ չեն լինում ընկալել համատարած հոմոֆոբիայի վտանգավոր արդյունքը մարդկային կյանքի նկատմամբ:

Ինքնասպանության վերաբերյալ հրապարակումների մեկնաբանություններում բազմաթիվ են ատելություն պարունակող արտահայտությունները, ընդհուպ մինչև ինքնասպանության կոչերը՝ ուղղված ԼԳԲՏ անձանց: Որպես օրինակ՝ Ազատություն ռադիոկայանի «Ինստագրամ» սոցիալական ցանցի հրապարակումը անձինք մեկնաբանել են այսպես՝

- Aso spb կեղծանվամբ գրանցված մի օգտատեր գրել է. «Կոչ եմ անում բոլոր հոմոսեքսուալներին (խմբագրված). եղեք միասնական և համախմբված, հավաքվեք բոլորով նույն կամրջի վրա և մի մարդու պես ձեռք ձեռքի բռնած նետվեք կամրջից ցած. դուք կմաքրեք մեր սուրբ հողը գոնե մի քիչ»:
- Carol _set անվամբ գրանցված օգտատերը գրել է. «Շատ ճիշտ է արել»:
- «ԼԳԲՏ ձեզ վտարել է պետք Հայաստանից, դուք երկրի և պետության համար պիտանի չեք դուք դեմ եք գնացել աստծուն»:
- «Թող սատկեն ապրում են որ ինչ»
- «Բոլոր ԼԳԲՏներին այրել»

«Մամուլ.էյէմ» կայքի ֆեյսբուքյան հրապարակման[67] մեկնաբանություններում բազմաթիվ օգտատերեր գրել են ատելությամբ և թշնամանքով լի արտահայտություններ, ինչպիսիք են՝

- «լավ է արել»,
- «Ճիշտ է արել»,
- «Մի քանի հոգու հետը տաներ ավելի ճիտ կանե»,
- «Մեկը հազար լինի»,
- «Թող դրա նմաններին լրիվ թափվեն կամրջից. կեղտոտում են օդը»,
- «Աստված տա ամեն օր Էդպիսի դեպք լինի»,
- «Հերթով բռնեք իրար ձեռք ու ոնց եկել եք մաքրվեք»
- «Ջանդամին չի նետվել պիտի դրանց նմանները վերանան որ երկիրը հարամեցին»,
- «Ճիշտ ա արել դրանք ոչ բնությանն են պիտանի ոչ մարդկությանը»,
- «լավ լավ ինչքան շատ սենց լուրեր լինի էնքան լավ, թող տենց հավաքվեն իրար կցվեն ու իրանց թափեն մոստերից» և այլ:

«Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ-ի կողմից տարածված հրապարակմանը այսպիսի մեկնաբանություններ են եղել՝

67 «Մամուլ.էյէմ». Նույնասեռական տղան իրենց ցած է նետել կամրջից. 16.11.2023. https://mamul.am/am/news/279554

- «Թող բոլոր հոմոսեքսուալներին (խմբագրված) դրանից օրինակ ծառայեն»,
- «Երեխային պահում մեծացնում են, որպեզի սերունդ ոչ թե այլասեռությամբ զբաղվի»:

«Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն ևս բռնության կոչերի և ատելության թիրախ է դարձել: «Ինստագրամ» սոցիալական ցանցում «mikababayan7224» անվամբ գրանցված օգտատերը գրել է. «Էդ փինքկի սաղ անձնակազմն էլ ա պետք մոստից շպրտել»: Մեկ այլ՝ «Armangasparyan72» անունով գրանցված օգտատեր հայհոյանք է գրել իրավապաշտպան կազմակերպությունների հասցեին:

Նշված օրինակները ատելության խոսքի գնահատման վեցաստիճան մեթոդով դիտարկելու պարագայում ակնհայտ է հետևյալը՝

- Ատելություն և թշնամանք պարունակող խոսքը տարածվել է չափազանց զգայուն համատեքստում, երբ խոսքը վերաբերում է անչափահաս անձի կյանքի իրավունքի խախտմանը: Դեպքը, կապված լինելով տուժողի սեռական կողմնորոշմամբ պայմանավորված ճնշումների հետ, ազդեցություն է ունեցել ոչ միայն իր ընտանիքի և մերձավոր շրջանակի նկատմամբ մասնավորապես, այլ նաև ԼԳԲՏ համայնքի նկատմամբ՝ ընդհանուր առմամբ, քանի որ հասարակության հոմոֆոբ խմբերի կողմից հետապնդումները, դրա հետևանքով խտրականությունն ու բացառումը տարբեր հասարակական հարաբերություններից սպառնում է ցանկացած ԼԳԲՏ անձի: Այսպիսի իրավիճակում ատելության խոսքը, իհարկե, մի կողմից էլ ավելի է հոգեբանորեն ճնշում ԼԳԲՏ անձանց, մյուս կողմից հասարակությանը հրահրում է և խրախուսում է շարունակել խտրական և անհանդուրժող վերաբերմունքը, քանի որ հասարակության ճնշող մեծամասնությունը այդ համոզումն է կրում:
- Այս պարագայում խոսքի հեղինակները առաջին հայացքից հասարակ քաղաքացիներ են, չեն զբաղեցնում որևէ պաշտոն, չունեն հանրային հռչակ, այնուամենայնիվ, իրենց քանակով հավակնում են արտահայտել հասարակության լայն շերտերի կարծիք՝ փոխանցելով այն հաղորդագրությունը, որ հասարակությունը արդարացնում է ցանկացած վատ վերաբերմունք և դրական է ընկալում ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնությունները, ընդհուպ մինչև՝ կյանքի իրավունքի խախտման հանգեցնող:
- Բոլոր մեկնաբանությունները գրված են դրանց հեղինակների հստակ դիտավորությամբ՝ արտահայտելու իրենց բացասական վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց հանդեպ և հրճվանքը նրանց ողբերգության կապակցությամբ:
- Մեկնաբանությունների մեծ մասի բովանդակությունը արտահայտում է մարդկանց հրճվանքը նույնասեռական անձի մահվան կապակցությամբ: Նրանք նաև կոչ են անում մյուս ԼԳԲՏ անձանց ինքնասպանություն գործել: Այսպիսի երևույթը կարող է հասարակության կողմից մարգինալացված և խտրականացված անձանց հասցնել անդառնալի հետևանքներով հղի հոգեբանական ընկճվածության և մեկուսացման:
- Ատելության խոսքը տարածվել է բոլոր լրատվական նյութերի մեկնաբանություններում, սակայն յուրաքանչյուր անձի կողմից թողնված մեկնաբանությունը որպես հանցավոր արարք որակելիս անհրաժեշտ է դիտարկել հենց այդ մեկնաբանության լսարանն ու տարածումը:
- Առաջին հինգ ցուցիչները քննարկելիս կարելի է եզրակացնել, որ նման

ծավալով և նման բովանդակության ատելության խոսքի տարածումը այսպիսի կոնտեքստում իրական ռիսկեր է պարունակում հատկապես այն ԼԳԲՏ անձանց համար, ովքեր նույնատիպ խոչընդոտների են բախվում իրենց կյանքում և անձամբ ընդունված չեն հասարակության կողմից:

Ատելության խոսքի այս դրսևորումներն ևս որևէ արձագանք չեն ստացել պետության կողմից, ոչ իրավական հետևանքների առումով, ոչ հրապարակային քննադատության:

Հարկ է նկատել, որ ինքնասպանության այս դեպքը մեկ տարվա ընթացքում երրորդն է: Առաջին դեպքում նույնասեռական զույգը, չկարողանալով դիմադրել հասարակության վատ վերաբերմունքին և այլևս հոգեպես պատրաստ չլինելով պայքարել իրենց ազատ համատեղ կյանքի համար, ինքնասպանություն էին գործել:[68] Այս դեպքում ևս պետությունը ցուցաբերեց անգործություն և պատշաճ քննության չենթարկեց ոչ միայն ինքնասպանության պատճառները, այլ նաև որակում չտվեց ատելության խոսքին, որը կրկին ծագել էր դեպքից հետո: Այս իրավիճակը ցույց է տալիս, որ պետական հաստատությունները ունակ չեն հասցեավորել հասարակության մեջ առկա արատավոր երևույթները, որոնք հանգեցնում են ընդհուպ մինչև կյանքի իրավունքի խախտման: Հետևաբար, պետությունը ի զորու չէ պաշտպանել իր քաղաքացիներին անգամ իր տարածքում՝ անգամ բավարար օրենսդրական կարգավորումների առկայության պարագայում:

Նմանատիպ դեպքերի պարբերականությունն ու պետության կողմից միջոցներ չձեռնարկելը արդեն կարող է համարվել պետության կողմից ուղղակիորեն մարդու իրավունքների խախտում, քանի որ վերջինը տիրապետելով առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության և ԼԳԲՏ համայնքի համար հնարավոր հետևանքներին, որևէ միջոց չի ձեռնարկել կանխելու համար ծանր հետևանքները:

68 Փինք իրավապաշտպան ՀԿ-ի ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների վիճակը Հայաստանում 2022 թ. ընթացքում. զեկույց, էջ 51.
https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/02/lgbtreport2022hy.pdf

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2022 թ.-ի ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում տարեկան զեկույցը ամփոփվել էր հույսով առ այն, որ տվյալ տարվա հուլիսին ուժի մեջ մտած քրեական օրենսդրության ընդունում և դրանով արտացոլված պետական քաղաքականությունը կստեղծեն մի նոր իրավիճակ: Եվ չնայած նրան, որ օրենսդրական նոր կարգավորումները լիովին չեն համապատասխանում ԼԳԲՏ անձանց համար արդյունավետ իրավական պաշտպանության համար օրենսդրությանը ներկայացվող պահանջներին, այնուամենայնիվ, տալիս են հնարավորություն դրանց այնպիսի կիրառությանը, ինչը կպաշտպանի ԼԳԲՏ անձանց խտրականությունից, ատելության հիմքով հանցագործություններից և ատելության խոսքից:

Այնուամենայնիվ, 2023 թ.-ին արձանագրված դեպքերի և դրանց քննության ընթացքի վերլուծությունը վկայում է, որ անգամ առկա օրենսդրական կարգավորումներն ի զորու չեն պաշտպանել ԼԳԲՏ անձանց, եթե պետական մարմինները չեն ցուցաբերում բավարար կամք կիրառելու դրանք: Պետության կողմից խնդիրների մասին չխոսելը չի վերացնում այդ խնդիրները: Ավելին, համաչափ արձագանքի և գնահատականի բացակայությունը հանգեցնում է համատարած թողտվության և անպատժելիության, ինչն էլ ավելի է խորացնում ատելության մթնոլորտն ու իրավախախտումների բնույթը:

Օգանեզովան ընդդեմ Հայաստանի ռազմավարական գործի արդյունքում ՄԻԵԴ-ի կողմից կայացված վճռի կատարման նկատմամբ վերահսկողության մեխանիզմները 2023 թ.-ին տվել են իրենց առաջին արդյունքները: Մասնավորապես, պետությունը պարտավորվել է երկու տարվա ընթացքում հստակ քայլերով ցույց տալ ՄԻԵԴ վճռի հիման վրա ստանձնած պարտավորությունների կատարումը, ներառյալ՝ օրենսդրական արդյունավետ մեխանիզմների ստեղծումը ԼԳԲՏ անձանց ատելության հիմքով հանցագործություններից պաշտպանելու համար:

Պատկերը ընդհանուր առմամբ հետևյալն է.

- Պետության անգործությունը արձանագրվել է միջազգային կառույցների կողմից, որոնք, անդրադառնալով այն հանգամանքին, որ պետության կողմից մարդու իրավունքների իրավիճակի պարբերական զեկուցումների արանքում որևէ փոփոխություն չի եղել,
- Օրենսդրական վերջին փոփոխությունները, փաստացի, կրում են ձևական բնույթ և դեռևս չեն կարող համարվել արդյունավետ իրավական պաշտպանության միջոց ԼԳԲՏ անձանց համար,
- Պետությունը չունի որևէ քաղաքականություն՝ արձագանքելու խտրականության դեպքերին, խտրականությամբ պայմանավորված հանցագործություններին և ատելության խոսքին՝ նաև հանրային խոսքի մակարդակում,
- Հասարակության շրջանում առկա ատելությունն ու անհանդուրժողականությունը ԼԳԲՏ անձանց հանդեպ առավել լայն տարածում է ստացել՝ հասնելով ընդհուպ մինչև այն իրավիճակին, որ անչափահաս երեխայի ինքնասպանությունն անգամ հասարակության շրջանում առաջացնում է հրճվանք և այլ ինքնասպանությունների կոչեր,
- ԼԳԲՏ անձինք, ովքեր զոհ են դառնում իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով բռնության կամ խտրականության, իրավապահ մարմիններին չեն դիտարկում որպես պաշտպանիչ օղակ:

Ի վերջո կարելի է եզրակացնել, որ պետությունը ձախողել է թե իր՝ մարդու իրավունքների խախտումներից ձեռնպահ մնալու, թե երրորդ անձանց ոտնձգություններից մարդկանց պաշտպանելու, և թե հասարակության բոլոր խմբերի համար ապահով, խտրականությունից զերծ միջավայր ստեղծելու պարտավորությունները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԳԲՏ անձանց իրավունքների առավելագույն պաշտպանությունը ՀՀ-ում ապահովելու համար առաջարկում ենք.

Պետական մարմիններին և քաղաքական ուժերին

- Հանրային կյանքի տարբեր ոլորտներում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունն ու բռնությունը կանխելու ուղղությամբ քայլեր նախատեսել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրում:
- Ընդունել խտրականության դեմ համապարփակ օրենք, որով կսահմանվի խտրականությունը, դրա տեսակները, խտրականության դեպքերի քննության ընթացակարգային առանձնահատկությունները, կնախատեսի պաշտպանված հատկանիշների ընդգրկուն ցանկ, հասարակական կազմակերպությունների համար՝ հանրային շահի պաշտպանության գործերով իրավասուբյեկտություն, ինչպես նաև անկախ հավասարության մարմնի ձևավորման և գործունեության ընթացակարգ:
- Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես՝ նախատեսել անձի նկատմամբ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունը՝ որպես քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:
- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել «ատելության խոսք» հասկացությունը, ՀՀ Քրեական օրենսգրքի բռնության կոչերի համար պատասխանատվություն նախատեսող դրույթում կատարել լրացում՝ որպես պաշտպանված հատկանիշ նախատեսելով նաև սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը:
- Փաստագրել և վարել ՀՀ-ում ատելության հիմքով հանցագործությունների, ներառյալ՝ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունների վիճակագրություն՝ տեսանելի դարձնելով ատելության հիմքով հանցագործությունների խնդիրը ՀՀ-ում:
- Ապահովել արդարադատության մատչելիությունը ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց համար, մասնավորապես, նախատեսելով անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, որոնք կբացառեն անձի կրկնազոհացման վտանգը, կապահովեն անձի անվտանգությունը և կնախատեսեն վնասների հատուցման համընդգրկուն մեխանիզմներ:
- Դրսևորել քաղաքական կամք՝ արդյունավետ կիրառելու համար առկա օրենսդրությունը սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի նկատմամբ:
- ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումներին անդրադառնալիս տալ հստակ գնահատականներ, չխուսափել մարդու իրավունքների

ոտնահարումները դատապարտելուց:

- Իրականացնել իրավակիրառ մարմինների վերապատրաստում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների քննության նյութահիրավական և ընթացակարգային առանձնահատկությունների շուրջ՝ ապահովելու համար ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն:
- Կազմակերպել և իրականացնել դասընթացներ իրավակիրառ մարմինների հետ՝ ատելության հիմքով հանցագործությունների զոհերի և վկաների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:
- Համագործակցել իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ՝ ստանալու համար առավել մանրակրկիտ տեղեկություն ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների համակարգային բնույթ կրող ասպեկտների մասին:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները պետական մարմինների ծառայողների, մասնավորապես՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և պաշտոնատար այլ անձանց շրջանում:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները հասարակությունում, մասնավորապես՝ հրապարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններով և դատապարտել բռնության և անհանդուրժողականության որևէ դրսևորում:
- Կրթական հաստատությունների վարչակազմի և ուսուցչական կազմի համար իրականացնել պարբերական վերապատրաստումներ սեռականության, ԼԳԲՏ անձանց հետ զգայուն մոտեցման, նրանց համար բարդ տարիքային փուլում ինքնաճանաչմանը և ինքնադրսևորմանը աջակցելու վերաբերյալ:
- Վերահսկողություն իրականացնել դպրոցներից դուրս գալու կամ տեղափոխվելու դեպքերի նկատմամբ՝ պարզելու համար պատճառները և հնարավոր ճնշումների դեպքերը:
- Իրականացնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության պարագայում իրավապահ մարմինների կողմից զգայուն վերաբերմունքի մշտադիտարկում:
- Վարել սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրություն:

Հանգվածային լրատվության միջոցներին

- Դադարեցնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրապարակումները՝ հասարակությանը մատուցելով գրագետ, էթիկապես ընդունելի և ԼԳԲՏ մարդու իրավունքների

- նկատմամբ հարգանք սերմանող նյութեր:
- Չշահարկել ԼԳԲՏ անձանց առնչվող ցանկացած թեմա՝ զերծ մնալով հասարակության մեջ անհարկի անհանդուրժողականություն և ատելություն սերմանելուց:
- Չտարածել պաշտոնատար անձանց և այլ գործիչների կողմից հնչած ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանք, բռնության կամ խտրականության կոչ կամ արդարացում պարունակող խոսքը:

Միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին

- Պատշաճ կերպով վերահսկել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացը:
- Հանդես գալ պաշտոնական հայտարարություններով՝ ի աջակցումն ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության կարևորության և առաջնայնության:
- Մարդու իրավունքներին առնչվող իրենց զեկույցներում անդրադառնալ սույն զեկույցում բարձրացված ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների ձևավորված պրակտիկային:
- Պետությունից պահանջել հստակ տեղեկատվություն հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրված մտահոգիչ գործերի քննության ընթացքի և ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին

- Բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության և դրանից բխող բացասական հետևանքների մասին, խտրականության բացառման կարևորության և հավասարության սկզբունքների վերաբերյալ:
- Բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ատելության խոսքի և դրա քարոզչության հակաօրինականության մասին:
- Իրականացնել ջատագովություն Իրավահավասարության մասին արդյունավետ օրենք մշակելու և ընդունելու, ինչպես նաև՝ այլ իրավական փաստաթղթերում ԼԳԲՏ անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ սահմանելու համար:
- ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների հայտնի դեպքերում հանդես գալ հրապարակային դատապարտող հայտարարությամբ, պատշաճ արձագանքել ահազանգերին:

Կազմակերպության մասին

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2007 թ.-ին, որը ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս) համայնքահեն կազմակերպություն է, ստեղծվել է ԼԳԲՏ անձանց կողմից, ծառայում և աջակցում է համայնքի կարիքներին, ինչպես նաև խթանում է ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը ու ջատագովում ԼԳԲՏ հարցերի շուրջ հանրային քաղաքականության փոփոխությանը:

«Փինք» իրավապաշտպան
հասարակական կազմակերպություն

www.pinkarmenia.org
info@pinkarmenia.org
+374 60 377277